

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԸԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ







«Հայկական վիճագրություն» ուսումնական ձեռնարկը  
տպագրվել է «Զանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատ»

ՓԲԸ գործադիր տնօրեն  
**Մաքսիմ Անուշավանի Հակոբյանի**  
հովանավորությամբ

ԳՐԻԿՍ ՀՈՎԱՆԱՎՈՐ

ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ

Թանկագին Մաքսիմ Անուշավանի.

Ի սրտե շնորհակալ եմ աշխատությանս տպագրական ծախսերը հոգալու  
համար: Դուք աշխարհաշեն մարդ եք, մտավորական այրերի աջակիցն ու  
բարեկամը: Վկան՝ այս գրքի լույս ընծայումը: Տասնյակ տարիներ շարունակ  
ես աշխատում եմ Սյունյաց փառքի տաճարներից մեկում՝ Վահանա-  
վանքում, ուր խաղաղ ննջում են Լեռնաշխարհի հայրենանվեր արքաները,  
շինարար թագուհիները, հոգևոր դասի առաջնորդները: Նրանց բոլորի մասին  
ես շարադրել եմ Սյունիքի միջնադարին նվիրված իմ երեք մենագրություն-  
ներում և հոդվածներում:

Այսօր, երբ Ձեր հովանավորությամբ լույս է տեսնում սույն ձեռնարկը՝  
ուզում եմ երախտագիտությամբ ասել, - «Ըստ գործոց Ձերոց եղիցին Ձեզ», -  
սիրելի բարեկամ:

Ձեր Գրիգոր Գրիգորյան

22.11.2000

Երևան-Կապան-Վահանավանք

9(47.925)

Գ-88

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ՀՆԱԳՎԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿ  
33 ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՏԵ

ԳՐ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համառոտ ձեռնարկ բուհերի պատմության և բանասիրության  
ֆակուլտետների համար

Г. М. ГРИГОРЯН

АРМЯНСКАЯ ЭПИГРАФИКА

учебное пособие для вузов

445H



Երևան 2000

ԴՏՀ 930.27  
ԳՄԴ 63.2  
Գ 888

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի երաշխավորությամբ

Գրախոս՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

**Բաբկեն Առաքելյան**

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Հայրապետ Մարգարյան**

**Գրիգորյան Գր.**

Գ 888 ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

Համառոտ ձեռնարկ բուհերի պատմության և բանասիրության ֆակուլտետների համար: - Եր.: Չանգակ-97, 2000.- 208 էջ:

«Հայկական վիմագրություն» ուսումնական ձեռնարկում հակիրճ ներկայացված են վիմագրության զարգացման փուլերը, պատմիչների, տեղագիրների և գիտնականների վիմագրագիտական գործունեությունը, վիմագրերի ընդօրինակման և վերծանության տարբեր եղանակներն ու ձևերը, լեզվական իրողությունները, բովանդակային տարբերակումները: Կարևորված է վիմագրերի որպես արժանահավատ սկզբնաղբյուրների նշանակությունը:

Ձեռնարկը բաղկացած է երեք հիմնական բաժիններից՝ տեսական մաս, բնագրեր և վերծանություններ:

Նախատեսվում է բուհերի պատմության, բանասիրության և այլ հումանիտար բաժիններում սովորող ուսանողների, ինչպես նաև հայագիտությամբ զբաղվող մասնագետների համար:

Գ 0502000000 - 2000  
0003(01)-2000

ԳՄԴ 63.2

ISBN 99930 - 2 - 148 - 2



© «Չանգակ-97»  
© Գր. Գրիգորյան

**ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ**

«Հայկական վիմագրություն» բուհական ձեռնարկը լույս է տեսնում առաջին անգամ: Հեղինակը տարիներ շարունակ այս առարկան դասավանդել է Երևանի պետական համալսարանում, ԽԱրովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, «Հրաչյա Աճառյան» համալսարանում և հանրապետության այլ բուհերում: Նման ձեռնարկի կարիքը վաղուց ի վեր զգացվում էր ոչ միայն պատմության և բանասիրության ֆակուլտետների, այլև Սփյուռքի կրթօջախների համար: Ուստի ընդառաջելով Մայր բուհի հայոց պատմության ամբիոնի երջանակափոխատակ վարիչ, ակադեմիկոս Լ.Ա.Խուրշուդյանի ցանկությանը, ինչպես նաև մի շարք հայագետների հորդորանքին՝ ձեռնամուխ եղանք շարադրելու այս աշխատությունը ի պետս ուսանող երիտասարդության:

Ըստ էության, սա փաստորեն բանալի է լինելու հայոց «քարակերտ մատյանները» վերծանելու, ընդօրինակելու և ուսումնասիրելու համար:

Գրքում ներկայացված են հայկական վիմագրության սկզբնավորման և զարգացման աստիճանական փուլերը, վիմագրագետ-պատմիչների հակիրճ կենսագրականները (Մտեփանոս Օրբելյան, Չաքարիա Քանաքեռցի), ըստ հարկի նշված է գիտական վիմագրագիտության երախտավորների արգասաբեր գործունեությունն այս ասպարեզում, խոսվում է բնագրի վերծանության ժամանակ կիրառվող սկզբունքների, պայմանական նշանների, գրչության առանձնահատկությունների (կցագիր, փակագիր և այլն), գաղափարանշանների, թվագրության ձևերի ու եղանակների, վիմագիր ծածկագրության, բանաստեղծական բնագրերի, շինարար վարպետների նշանների, ինչպես նաև անվանաբանական (օճոմաստիկ) երևույթների մասին:

Աշխատությունն օժտված է անհրաժեշտ լուսանկարներով, գույզերով և բնագրերի վերծանության ենթաբաժնով:

**Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան**  
**Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**  
**2.05.2000 թ.**



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ վաղըջական ժամանակներից սովորույթ է եղել իմաստավորված նշաններ ու պատկերներ քանդակել կամ դրոշմել ժայռերի ու ժայռաբեկորների, կավե տախտակների, ոսկրե, փայտե, մետաղյա առարկաների, առտնին կենցաղային իրերի, ինչպես նաև պապիրուսների վրա: Դրանք հանդիսանում են հնագույն ժողովուրդների պատմության փաստագրերը կամ վավերագրերը, քանզի արտացոլում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտները՝ պետական-քաղաքական, ռազմական, օրենսդրական, առևտրային, մշակութային և այլն: Պետական նշանակության վավերագրերը, որպես կանոն, պահպանվում էին արքունական դիվաններում և պաշտամունքային կենտրոններում, իսկ օրենսդրական ակտերը, ձեռագիր մատյաններից զատ, հաճախ փորագրվում էին մեխյանների, հասարակական շենքերի, հետագայում նաև եկեղեցիների որմերին կամ առանձին կոթողների վրա:

Վիճագրությունը տարածված է եղել Հին աշխարհի բազմաթիվ երկրներում՝ Եգիպտոսում<sup>1</sup>, Հնդկաստանում<sup>2</sup>, Հին Հունաստանում<sup>3</sup>, Հռոմում<sup>4</sup> և այլուր:

Հին Ռուսիայում զգալի քանակ են կազմում ներտաճարային սվադի և որմնանկարների վրա անկանոն ձևով կատարած մակագրությունները, (графити), որոնց հեղինակները տարբեր ժամանակներում պաշտամունքային կենտրոններ այցելած հավատացյալներն են: Կիևի Ս.Սոֆիա տաճարի պատերին մեզ հաջողվել է հայտնաբերել 24 հայերեն մակագրություններ՝ թվագրված 16-18-րդ դարերով: Այդ արձանագրությունները վկայում են, որ Հին Ռուսիայի մայրաքաղաք Կիևը թաթարական տիրապետության շրջանում վերանվանվել և կոչվել է Մանքրման՝ գովելի, գեղեցիկ քաղաք (ղփչաղեթեն լեզվով)<sup>5</sup>: Կիևի, Նովգորոդի և այլ պաշտամունքային օջախների մակագրությունները վերծանել և հրատարակել են Բ.Ա.Ռիբակովը<sup>6</sup>, Ս.Ա.Վիսոցկին<sup>7</sup>, Ա.Ա.Մեդիցևսկան<sup>8</sup> և ուրիշներ:

Հայաստանում նույնպես վաղըջական ժամանակներից կիրառվել են այլևայլ գաղափարանշաններ, մեհենագրեր, հիերոգլիֆներ, որոնց ընթերցմամբ և մեկ-

նաբանությամբ նախկինում զբաղվել և այժմ շարունակում են ուսումնասիրել մի շարք գիտնական այրեր (Ա.Գ.Աբրահամյան<sup>9</sup>, Լ.Ա.Բարսեղյան<sup>10</sup>, Ռ.Դ.Բարենթ<sup>11</sup>, Դ.Ա.Սարտիրոսյան<sup>12</sup>, Ա.Ե.Մովսիսյան<sup>13</sup> և այլք): Լ.Ա.Բարսեղյանը 1960-ական թվականներին առաջինը հանգամանորեն ուսումնասիրեց և հրատարակեց 97 նշանագրեր: Նախամաշտոցյան գրերին և, մասնավորապես, Վանի թագավորության մեհենագրերին վերջերս հատուկ անդրադարձավ Ա.Մովսիսյանը, որը փորձեց նոր մեկնաբանություններ տալ «շուրջ հինգ տասնյակ մեհենագրերի»<sup>14</sup>:

Մինչև այժմ հայտնի են 1350 գրակիր առարկաներ<sup>15</sup>, ընդ որում շուրջ 300 մեհենագրեր<sup>16</sup>: Ուսումնասիրողները ժառանգական կապ են տեսնում միջնադարյան մատյանների նշանագրերի և հիերոգլիֆների միջև: Առաջ է քաշվում այն վարկածը, ըստ որի «բիայնական մեհենագրերի լեզուն հնագույն հայերենն է»<sup>17</sup>: Այս կարծիքն առանց թանձրացնելու Ա. Մովսիսյանը հայտնել է «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա» (Երևան, 1992) աշխատության մեջ, գրելով. «Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհում բարձրացած պետությունն ունեցել է սեփական գիր»<sup>18</sup> ընդ որում, «գրային համակարգի նշաններն (Վանի թագավորության ժամանակ) ունեին ավելի գծային, քան նկարային տեսք»<sup>19</sup> և որ գծային գրերի համակարգն առաջացել է տեղական պատկերագրությունից: Գրի առաջացման նախափուլը Հայկական լեռնաշխարհում սկզբնավորվել է քարեդարյան ժամանակաշրջանում անցնելով երկու փուլ՝ «առարկայական գիր» և վաղ պատկերագրություն<sup>20</sup>: Ա.Մովսիսյանի կարծիքով գաղափարագրությունը ձևավորվել է V հազարամյակից: Նմանատիպ հարցերին առատ լույս են սփռում լեզվաբանական աշխարհագրությունը, հնէաբանությունն ու հնագիտությունը:

Մեզ են հասել երկլեզու (բիլինգվա) և եռալեզու (տրիլինգվա) մի շարք արձանագրություններ (Դարեհ I-ի Բիհիսթունյան ու Ռոզթյան քարի բնագրերը), որպիսի երևույթը ավանդաբար պահպանվել է մինչև օրս հատկապես հայ գաղթօջախներում<sup>21</sup>: Բազմալեզու բնագրերը կարելի է վերծանել լեզուներից մեկի օգնությամբ<sup>22</sup>: Օրինակ՝ Սելիմի կարավանատան 1332 թ. արձանագրության բովանդակությունը Ղ.Ալիշանը վերականգնեց նույն տեղում փորագրված արաբատառ պարսկերենի բաղդատությամբ<sup>23</sup>:

Արդեն նշել ենք, որ ժառանգական կապ կա հնադարյան հիերոգլիֆների և միջնադարյան ձեռագիր մատյաններում եղած նշանագրերի (գաղափարանշանների) միջև: Սկզբնաղբյուրներում դրանք կոչվում են «Նշանագիրք իմաստնոց» կամ գաղափարագրեր<sup>24</sup>: Առաջին անգամ այս նշանագրերի վրա ուշադրություն դարձրեց Մ. Չամչյանը<sup>25</sup>, այնուհետև՝ Գ. Սրվանձտյանը<sup>26</sup>, Իս. Հարությունյանը<sup>27</sup>, Տ. Պալյանը<sup>28</sup> և ուրիշներ, որոնք խնդիրը սկսեցին քննարկել տարբեր տեսանկյուններից:



ղև՝ Նշանագրերին հանդիչ մեկնաբանություններ են տվել ակադ. Հր. Աճառյանը<sup>29</sup> և պրոֆ Ա. Գ. Աբրահամյանը<sup>30</sup>: Նրանց ջանքերով գիտական շրջանառության մեջ են դրվել ավելի քան 700 նշանագրեր:

**Այդ նշանագրերից են՝**

- |   |                        |   |                                 |
|---|------------------------|---|---------------------------------|
| Օ | - երկինք               | Ս | - լուսին                        |
| Օ | - երկիր                | Ս | - աղբյուր, բերան                |
| Օ | - արև                  | Ս | - ամրոց, բերդ                   |
| Օ | - աշխարհ <sup>31</sup> | Ս | - մարդ                          |
| Օ | - աստղ                 | Ս | - փառամուլ                      |
| Օ | - աստղեր               | Ս | - սատանա                        |
| Օ | - ճանապարհ             | Ս | - ամեն                          |
| Օ | - եկեղեցի              | Ս | - այսինքն <sup>32</sup> և այլն: |
| Օ | - խորան                |   |                                 |
| Օ | - խաչ                  |   |                                 |

**ՎԻՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Վիճագրությունը պատմագիտական օժանդակ դիսցիպլին է: Այն արտացոլում է հասարակության զարգացման պատմական իրողությունները, լեզուն և լեզվական մտածողությունը, քաղաքական, տնտեսական, իրավական զարգացումների աստիճանական փուլերը, հավաստի տեղեկություններ է պարունակում պատմական անցուդարձերի ու գործիչների մասին:

Վիճագրությունն, իբրև առանձին գիտաճյուղ, սերտորեն առնչվում է հնագրության (палеография) հետ, սակայն եթե հնագրությունը ուսումնասիրում է գրչության արվեստն ու զարգացման աստիճանական փուլերը, առանց խորանալու բնագրի բովանդակության մեջ, ապա վիճագրագիտությունը պատմական սկզբնաղբյուրները դիտում է իբրև առանձին ուսումնասիրության առարկա:

Չնագրության ոլորտում են գտնվում պապիրուսագիտությունը (папирология), դրամագիտությունը (нумизматика) և կնքագիտությունը (сфрагистика)<sup>33</sup>:

Վիճագրություն բառը կազմված է հայերեն վէմ (քար) և գրություն եզրույթներից և բառացի նշանակում է գրություն քարի վրա՝ քարագրություն<sup>34</sup>:

Միջազգային տերմինաբանությամբ առարկան կոչվում է **էպիգրաֆիկա** (հուն. էպի-մակ, վրա, երես և գրաֆիկա (գրություն), որ թարգմանաբար նշանակում է մակագրություն). հմնտ. էպիտետ-մակդիր, էպիտաֆիա-մակագրություն տապանի վրա՝ տապանագիր և այլն:

Չայերենում գործածվում է նաև **արձանագրագիտություն** եզրույթը, որն առավել լայն ընդգրկում ունի, քան վիճագրագիտությունը:

Վիճագրագիտության նպատակն է ուսումնասիրել հիմնականում քարի վրա փորագրված կամ հատուկ մեխանով (կամ այլ ներկանյութով) մակագրված արձանագրությունները: Իբրև պատմական հավաստի սկզբնաղբյուրներ, վիճագրություններն ունեն աղբյուրագիտական հույժ կարևոր արժեք, քանզի հանդիսանում են ժողովուրդների կերտած վստահելի «քարակերտ մատյանները»<sup>35</sup>:

Վիճական բնագրերը տասնյակ հազարներով սփռված են Չայկական լեռնաշխարհի բազմաթիվ վայրերում կառուցված տաճարների, ամրոց-դղյակների, կամուրջների, ջրի ակունքների մեծակայքում, խաչքարերի, տապանաքարերի և հասարակական շենքերի վրա:

Չնագրյւն վիճագրական տեքստեր կարելի է համարել **ժայռապատկերները** (պետրոգլիֆներ, իծագրեր), որոնք կերտված են ժայռերի կամ ժայռաբեկորների բնականից հարթ մակերեսներին մ.թ.ա. 7-ից 1-ին հազարամյակների ընթացքում: Ժայռապատկերներում արտացոլված են նեոլիթ-էնեոլիթյան դարաշրջա-




նում ապրած մարդու պարզունակ ընկալումներն ու պատկերացումները իրեն շրջապատող երևույթների, հավատալիքների ու սովորույթների, առօրյա կենցաղի, ինչպես նաև տոմարական հաշվումների վերաբերյալ: Առանձնապես բազմաքանակ են կենդանական աշխարհի՝ մանր ու խոշոր եղջերավոր անասունների, ինչպես նաև գիշատիչ կենդանիների սխեմատիկ գծապատկերները: Հարուստ և բովանդակալից ժայռապատկերներ ունեն Գեղամա<sup>36</sup> և Սյունյաց լեռները: Այդ նմուշներն ընդօրինակվել և գիտական շրջանառության մեջ են դրվել հնագետ-պատմաբաններ Գ.Մարտիրոսյանի, Գ.Իսրայելյանի, Գր.Կարախանյանի, Պ.Սաֆյանի և ուրիշների ջանքերով<sup>37</sup>:

Վերջին տարիներին հայտնաբերված ժայռապատկերներից և քարակերտ արձաններից առավել կարևորվում են Գեղարքունիքի մարզի Մարտունու շրջանի Ջուլաքար (Ջուլախաս) գյուղի հանդամասերից մեկում գտնված մարդկային կերպարանքներն ու աղավակերպ ժայռաքանդակները, ինչպես նաև շրջանած Գեղամա գծանկարները, որոնք խորհրդանշում են արևի պաշտամունքի առկայությունը նախնադարյան հասարակության մեջ:

Պատահական չէ, որ ուսումնասիրողները ժայռապատկերներն իրավամբ համարում են «Քարե հանրագիտարաններ»<sup>38</sup>:

Մ.թ.ա. 9-6-րդ դարերում իբրև պաշտոնական գրագրության նշանագրեր Հայաստանում լայն կիրառում ունեցան **սեպագրերը** կամ **բևեռագրերը**,<sup>39</sup> որոնք որոշ մասնագետների կարծիքով, չեն եղել ժողովրդա-խոսակցական լեզվի և մտածողության արտահայտիչները:<sup>40</sup> Ա. Մովսիսյանի կարծիքով Վանի թագավորության շրջանում կիրառվել են «երեք գրային համակարգեր. միջագետքյան սեպագիրը՝ ասուրերեն, տեղական ոճի սեպագիրը՝ բիայնական սեպագրության լեզվով, և բնիկ հայաստանյան ծագում ունեցող մեհենագրերը՝ հիերոգլիֆները»:<sup>41</sup> Նա չի առարկում Ի. Մ. Դյակոնովին, ըստ որի «բիայնական սեպագրությունը պետք է ստեղծված լինի դեռևս թ. ա. 14-13-րդ դարերում՝ ծագելով Միտանիի և խեթական տերության գրչության դպրոցներից»:<sup>42</sup>

Սեպածև նշանագրերով շուրջ 600 արձանագրություններ են գտնվել Արարատյան (Ուրարտուի) մայրաքաղաք Վան-Տուշպայից, Երևանից, Սևանի ավազանից, Շիրակից, Ջանգեզուրից և այլ վայրերից: Շնորհիվ Էրեբունի (Արին Բերդ) ամրոցում 1950 թ. սեպտեմբերի 25-ին հայտնաբերված Արգիշտի I թագավորի արձանագրության տեղեկանում ենք, որ Հայաստանի ներկա մայրաքաղաքը՝ Երևանը հիմնադրվել է մ.թ.ա. 782 թվականին:



Սկար 1  
ժայռապատկերներ (Սյունիք)





Նկար 2  
ժայռապատկերներ (Սյունիք)

Գրիգոր (Ա) դրոյնի ժամանակ

Ահա այդ սեպագիր արձանագրության բարձմանությունը.



«Խալդի աստծու մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրբունի քաղաք՝ ի հզորություն Բիայնիայի և ի ահաբեկում թշնամու երկրի: Արգիշտին ասում է. հողն այստեղ ամայի էր, այստեղ ես մեծ գործեր կատարեցի: Խալդի աստծու մեծությամբ, Մենուայի որդին Արգիշտին, Բիայնիայի հզոր թագավորը, Տուշպա քաղաքի տերը».<sup>43</sup>

Էրբունին հիմնադրելու մասին Արգիշտին հիշատակություն է թողել նաև Վա-  
նի հորիսոռյան արձանագրությունում, որը հայտնաբերվել է 1916 թվականին:

Սեպագրերից հետո Հայաստանում սկսվեց կիրառվել արամեերենը (արա-  
մեական գիրը), որը պատկանում էր լեզուների սեմական ընտանիքին և իբրև մի-  
ջազգային լեզու լայն կիրառում է ունեցել նաև Հայաստանում:<sup>44</sup>

Արամեական արձանագրություններ, հիմնականում «սահմանաքարեր»,  
հայտնաբերվել են Սևանի ավազանում, Ջանգեզուրում և այլուր: Դրանք համա-  
ռոտ հիշատակագրություններ են, որոնցում նշվում են իշխանավորներին ար-  
քայի անունից տրվող կամ նրան ենթակա տարածքների սահմանները:

Ամենածավալուն արամեերեն արձանագրությունը, 9 տող, Հայաստանում  
հայտնաբերվել է Սիսիանից Գորիս ընթացող մայրուղու շինարարության  
ժամանակ: Այս, ինչպես և Գառնիի արձանագրության վերծանությունը կատա-  
րել է հայտնի արևելագետ Ա. Գ. Փերիխանյանը:<sup>45</sup>



Այլալեզու վիճագրերը քաջ ծանոթ են եղել մեր միջնադարյան պատմիչներին: Մովսես Խորենացին նշում է. «Ոչ միայն այս (խոսքը Վանի ժայռի արձանագրության մասին է—Գ. Գ.), և այլև ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ (Շամիրամ) գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»:<sup>46</sup>



Պատմահայրը վկայում է «Արտաշեսյան սահմանաքարերի», Գառնիի հունարեն արձանագրության<sup>47</sup>, ինչպես նաև «հելլենացի գրով» այլ վիճագրերի մասին:<sup>48</sup>

7-դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանը նշում է, որ քուրմերի և քրիստոնյաների ճակատամարտից հետո սպանվածների դիակները լցրեցին մի փոսի մեջ և հուշարձան կանգնեցրին՝ վրան մակագրելով.

«Առաջին պատերազմ, որ եղև յոյժ սաստիկ պատերազմին գլխաւոր Արծան քրմապետին, որ կայ այսր ի թաղման եւ ընդ նմա արս հազար երեսուն եւ ութ եւ զայս պատերազմ արարաք վասն Գիսանեայ կոոց եւ վասն Քրիստոսի»:<sup>49</sup>

Ձանգեզուրում հայտնաբերված արձաններն վեճագրի վերձանությունը թարգմանաբար «... Գյուղը պատկանում է Արտաշես Արքային, Բարուն, Չարեհի որդուն և Նեկփառին, թագադիր, Աշխարհատի որդուն»:



Գառնիի հունարեն արձանագրության թարգմանությունը. «Հելիոս Տրդատը, թագավորը Մեծ Հայքի... որպես դեսպոտ հիմնեց Ազ... թագուհու համար այս անտիկ բերդը՝ թագավորության 11-րդ տարում: Մենմեսար իշխանավորի հովանավորության ներքո, վճարում է որպես լիտուրգոս մեծ եռանդով և շնորհակալությամբ գինը՝ Մատե վկայի ներկայությամբ» («ԳՍ Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, N 3, էջ 53-54):

Այս հուշակոթողի արձանագրությունը, պատմիչի վկայությամբ, «գրեցին ասորի եւ հելլենացի գրով եւ յոյն եւ իսմայելացի նշանաւ»:<sup>50</sup> Նա նշում է նաև «ի տախտակս պղնձի»<sup>51</sup> Գրիգոր Լուսավորչի կողմից արձանագրություն փորագրել տալու, դեռևս կիրառվող «**բևեռների նշանների**» («գրելուս նշանին») այսինքն՝ սեպագրերի մասին:<sup>52</sup>

Նախամաշտոցյան շրջանում, արամեերենից հետո, առավել գործածական է եղել հունարենը, որով մեզ են հասել տասնյակ վիճագրեր Տիգրանակերտից,<sup>53</sup> Ապարանից,<sup>54</sup> Արմավիրից<sup>55</sup> և այլ վայրերից: Հայաստանում գտնվել են նաև լատինատառ և արաբատառ արձանագրություններ:<sup>56</sup>

Լատիներեն 6 արձանագրություններ են հայտնաբերվել Խարբերդում, Վաղարշապատում, Արտաշատում և այլուր: Ահա Արտաշատի արձանագրությունը.



Թարգմ. «Իմպերատոր Կեսար աստվածային, Ներվայի որդի Ներվա Տրայանոս, Օպտիմոս (լավագույն), Օգոստոս (վեհափառ), Գերմանիկոս (Գերմանական), Դակիկոս (Դակիական), Պարթևիկոս (Պարթևական), Գերագույն քուրմ, Մաքսիմոս (մեծագույն), տրիբունի իշխանությամբ (օժտված) 20 անգամ. կայսր (հռչակված) 13 անգամ, հյուպատոս 6 անգամ (հայրենիքի հա՛յր), սկյութական IV լեգեոնը կառարեց (կանգնեցրեց)»։ (ՊԲՀ, 1967, N 4, էջ 308)



**ՀԱՅԱՏԱՌ ՎԻՍԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲԵԱՎՈՐՈՒՄԸ**

**«Նրանց (հայերի) պատմությունը  
քարերի և իրենց երկրի ժայռերի վրա գրված  
արձանագրություն է»:**

**Սեն-Մարտեն**

Հայերեն (Մաշտոցյան) գրերով վիճագրությունը սկիզբ է առել 5-րդ դարում՝ գրերի գյուտից հետո:

Եղիշեն պատմագիրը, խոսելով 451 թ. գոյամարտի մասին, վկայում է, որ Ավարայրի ճակատամարտում զոհվածներից շատերի աճյունների վրա հետագայում կանգնեցնում էին մահարձաններ՝ մահատակվածների անունների հիշատակմամբ:

**«Բազում արձանք էին կանգնեալ յանուն նոցա և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»:**<sup>57</sup>

Ավանդություն է պահպանվել այն մասին, թե ինչպես Հռիփսիմն արքայադուստրը մահամերձ վիճակում թախանձում է հորը՝ Աշոտ Գ Ողորմածին (953-977) իր վախճանից հետո հիշատակագրություն փորագրել տալ «**Ի վերայ վիմի միոջ» քանզի «թուղթքն եղծանիցին ի հրոյ կամ ի ջրոյ, սակայն քարեայ արձանն անջինջ մնասցէ յաւիտեան»:**<sup>58</sup>

Հայ ժողովրդի «քարակերտ մատյանները» երկրի քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով մնում էին գիտնականների տեսադաշտից դուրս, թեև պատմիչներն ըստ անհրաժեշտության երբեմն վերծանել և օգտագործել են դրանք: Բազմաթիվ արձանագրություններ են կորստից փրկել հայրենանվեր ճանապարհորդ-աշխարհագիրները, որոնք շրջագայությունների ժամանակ չեն զլացել ընդօրինակել և իրենց գրքերում գետեղել հարյուրավոր վիճագրեր: Սակայն նպատակասլաց կերպով վիճագրերը վերծանել և իբրև պատմական սկզբնաղբյուրներ օգտագործել է 13-րդ դարի մեծանուն պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

**ՎԻՍԱԳՐԱԳԵՏ ՊԱՏՄԻՉՆԵՐ**

**1. ՍՏԵՓԱՆՍ ՕՐԲԵԼՅԱՆ  
(1250-ական թթ.-1303)**

Միջնադարի ակնավոր պատմագիր, կրոնական, քաղաքական և մշակութային գործիչ, վիճագրագետ Ստ. Օրբելյանը ծնվել է պատմական Սյունիքի Շղուկ գավառում (այժմյան Սյունիքի մարզի Սիսիանի ենթամարզ) 13-րդ դարի 50-ական թթ.: Նրա հայրը Սյունիքի իշխանաց իշխան, հայոց և վրաց աթաբեկ (գահաժառանգի խնամակալ) Տարսայիճ Օրբելյանն էր, մայրը՝ «բարեպաշտ տիկին» Արուզ խաթունը: Մանկուց Ստեփանոսը որդեգրվել է հորեղբորը՝ գահերեց իշխան Սմբատին (Սմբատ «արքային»): Նախնական կրթությունը ստացել է Տաթևի վանքում, ուր այլ առարկաներին զուգընթաց երաժշտության դասեր է վերցրել նշանավոր վանահայր Հայրապետ եպիսկոպոսից:

1273 թ. հորեղբոր մահվանից հետո, գահերեցությունն անցնում է Տարսայիճին, որը և տեղափոխվում է Վայոց ձոր, բնակություն հաստատելով նախ՝ Արփա (Արենի), ապա՝ իշխանանիստ Եղեգիս գյուղաքաղաքում:

1282 թ. Տարոնից Արևելյան Հայաստան գաղթած գիտնական-վարդապետ Ներսես Մշեցու ջանքերով, Պոռշյան և Օրբելյան տոհմերի նյութական և բարոյական օժանդակությամբ բացվում է Գլաձորի ուսումնա-գիտական կենտրոնը, որի առաջին ունկնդիրներից է նաև լինում պատանի Ստեփանոսը: Օրբելյան իշխանները ցանկանում էին իրենց տոհմի մեծաշնորհը դարձնել մահանգի ոչ միայն քաղաքական իշխանությունը, այլև հոգևոր նվիրապետությունը: Թերևս, սա էր հիմնական պատճառը, որ Մեծն Տարսայիճ իշխանը Գլաձորի համալսարանն ավարտած իր շնորհալի զավակին ուզում էր տեսնել Սյունյաց 12 գավառների մետրոպոլիտի աթոռին: 1287 թ. արևելյան եպիսկոպոսների հանձնարարականով Ստեփանոս վարդապետը մեկնում է Կիլիկիա՝ հայոց հայրապետից եպիսկոպոս ծեռնադրվելու ակնկալիքով: Այստեղ եղած երեք ամիսների ընթացքում նա մտերիմ հարաբերություններ է հաստատում Լևոն Գ թագավորի, ազնվականների և բարձրաստիճան հոգևորականության հետ, խորամուխ է լինում կաթողիկոսարանի հարուստ գրապահոցների մեջ, ուսումնասիրում է Կիլիկյան հայկական թագավորության քաղաքական-տնտեսական և մշակութային կյանքը: Ստանալով եպիսկոպոսական գավազան՝ Ստ. Օրբելյանը վերադառնում է հայրենիք:

Նորընծա թեմական առաջնորդին մեծ դժվարությամբ հաջողվում է միավոր

հ5174







Արծաճագրության մնացած մասը չենք մեջբերում այլոց հավելում լինելու պատճառով:

Ինչպես տեսնում ենք, Ստ. Օրբելյանն այս վիճադրությունն օգտագործել է իբրև պատմական սկզբնաղբյուր, կատարելով մասնակի շտկումներ, որոնցից էպպես չի տուժել բնագրի բովանդակությունը: Պատմիչը ավելացրել է միայն անձձքի մասը, որպիսին, իրոք, բացակայում է Վանեվանի արծաճագրության մեջ:

Ակադ. Գ. Օրբելին, նկատի ունենալով Ստ. Օրբելյանի վիճագրագիտական վաստակը, նրան է վերագրում «**հայկական արծաճագրությունների առաջին հավաքողի**» պատիվը:<sup>62</sup>

Մեծանուն պատմագիրը վախճանվեց 1303 թ. և ամփոփվեց Ամաղուի Նորավանքի Օրբելյան իշխանագուճների տոհմական գերեզմանատանը: Տապանաքարին փորագրված է.

«ԹՎ. :ՉԾԲ: (1303). ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ՀԱՆԳՍԵՒ ԱՂՆ ՄԵԾԻ ՄԵՏՐԱՊՊԱԼԻՏԻՆ ՍԻՒՆԵԱՑ ՍՏԵՓԱՆՈՍԻ»:<sup>63</sup>

## 2. ՉԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՆՑԻ

(1627–1699)

Ուշ միջնադարի ականավոր պատմագիր, վիճագրագետ Չաքարիա Քանաքեռցին ծնվել է 1627 թ. Քանաքեռ ավանում: Պատանի հասակից եղել է կրոնավոր: Տարիներ շարունակ զբաղվել է ուսուցչական աշխատանքով: Հովհաննավանքում վանահայր եղած ժամանակ գրել է «Պատմագրություն» խորագիրը կրող աշխատությունը, որի 3–րդ մասը ամփոփում է հիշյալ վանքի պատերին փորագրված արծաճագրությունները:

Խոսելով Չաքարիա Քանաքեռցու մասին, ակադ. Մ. Աբեղյանը նկատում է.

«**Չաքարիա Սարկավազը բացի մատենագիրներից և գրքերի հիշատակարաններից՝ օգտվում է նաև արծաճագրություններից. նա ընդօրինակում է պատերի վրա եղած արծաճագրությունները և մանրամասն ճշտությամբ զետեղում է իր «Կոնդակի» մեջ, որով Չաքարիան հանդիսանում է մեր մատենագրական, արծաճագրական թանկագին հիշատակները ժողովողների նախահայրը**»:<sup>64</sup>

Մեծ գրականագետի կարծիքն ընդունելի է այն առումով, որ Չաքարիա պատմագիրը վերծանել և ընդօրինակել է Հովհաննավանքի բոլոր կարևոր վիճագրերը, իսկ Ստ. Օրբելյանը՝ ապրելով Չաքարիայից շուրջ 400 տարի առաջ, վիճական բնագրերն օգտագործել է խիստ ընտրությամբ, ըստ անհրաժեշտության:

Վիճական արծաճագրություններ հավաքելու և հրատարակելու աշխատանքները ծավալվեցին 19–րդ դարում: Ներսես Աշտարակեցին 1825 թ. օգոստոսի 31–ին Սանահնի վանքի առաջնորդ Հարություն վարդապետ (հետագայում՝ արքեպիսկոպոս) Բարսեղյանին հղած նամակով առաջարկում է ուշադրությամբ արտագրել վանքերի, եկեղեցիների, հնագույն գերեզմանաքարերի վրա եղած արծաճագրությունները և ուղարկել իրեն՝ տպագրելու նպատակով:<sup>65</sup>

Հայոց «քարե մատյանները» վերծանելու, ընդօրինակելու և հրատարակելու ասպարեզում վիթխարի գործ կատարեցին Մինաս Բժշկյանը,<sup>66</sup> Հովհաննես Շահխաթունյանը,<sup>67</sup> Սարգիս Ջալալյանը,<sup>68</sup> Սկրտիչ Էմինը,<sup>69</sup> Մակար Բարխուդարյանը,<sup>70</sup> Մեսրոպ Սմբատյանը,<sup>71</sup> Քաջբերունին (բժ. Գ. Տեր–Հովհաննիսյան),<sup>72</sup> Հովհաննես Ղրիմեցին,<sup>73</sup> Արիստակես Սեդրակյանը,<sup>74</sup> Երվանդ Լալայանը,<sup>75</sup> Խաչատուր Քուչուկ–Հովհաննիսյանը,<sup>76</sup> Մելիքսեթ Բեկը,<sup>77</sup> Կարապետ Բասմաջյանը<sup>78</sup> և շատ ուրիշ երախտավորներ:

Առանձնակի պետք է նշել մեծանուն հայագետ Ղևոնդ Ալիշանի՝ իբրև տեսաբան–վիճագրագետի անուրանալի վաստակը: Երբեք չլինելով Հայաստանում, նա



Մինաս Բժշկյան



Սարգիս Ջալալյան



Մակար Բարխուդարյան



Երվանդ Լալայան



Մեսրոպ Սմբատյան



Ղևոնդ Ալիշան



կարողացել է իր գրքերում<sup>79</sup> զետեղել նախորդ վերծանողների և իրեն թղթակցողների կողմից ուղարկված հարյուրավոր վիճազեր, որոնք տրվել են շատ դեպքերում բոլորովին նոր ընթերցմամբ կամ էական ուղղումներով:

Ղ. Ալիշանը գտնում էր, որ հայկական վիճազերը «**ոչ նուազ պատուական աւանդք են ազգային պատմութեան**», քանզի «**անխաբ հայելիք են հանճարոյ եւ ոգւոյ նախնեաց մերոց**»:<sup>80</sup> Եվ քանի որ ժամանակը «**ամ ըստ ամէ եւ օր աւուր կրծէ, ծախէ եւ ծածկէ գնոսին**», խորհուրդ է տալիս առանց հապաղելու զբաղվել վիճազների հավաքման աշխատանքներով:<sup>81</sup>

Ակադ. Գ. Մանանդյանը վիճական արձանագրությունները համարում էր «**առաջնակարգ աղբյուրներ**», առանց որոնց հնարավոր չէ հանգամանորեն լուսաբանել միջնադարյան Հայաստանի իրավա-քաղաքական և հատկապես սոցիալական կյանքը:<sup>82</sup> Համանման կարծիք են հայտնել Ն. Մառը<sup>83</sup> և ուրիշները:

1912 թ. «Հանդես Ամսօրեայ» պարբերականում ականավոր լեզվաբան Հր. Աճառյանը տպագրեց հայտարարագիր այն մասին, որ ինքը պատրաստվում է հրատարակել «Հայարձան» խորագրով մի ժողովածու և խնդրում է իրեն ուղարկել վիճական բնագրերի ընդօրինակումներ:<sup>84</sup>



Կարապետ Կոստանյան

1913 թ. Ն. Յա. Մառի ռուսերեն առաջաբանով Սանկտ-Պետերբուրգում տպագրվեց ճանաչված հայագետ Կարապետ Կոստանյանի կազմած «**Վիճական տարեգիրք**»<sup>85</sup> ուր ամփոփված էին 1328 արձանագրություններ՝ դասավորված ժամանակագրական սկզբունքով: Անշուշտ, սա հեռու էր գիտական կորպուս-ժողովածու կոչվելուց, թեև երկար տարիներ հանդիսացավ հայագետների սեղանի գիրքը: Այստեղ բացակայում են վիճազների լուսանկարները, զրչագրերը, էստամպային կրկնօրինակումները: «Վիճական տարեգիրք» տարբեր հեղինակների աշխատություններից բաժնաղված ժողովածու է:

Բոլոր նախորդ հրատարակիչները հնարավորություն և միջոցներ չունեին հայկական վիճազերը տպագրել եվրոպական կորպուս-ժողովածուների մակարդակով: Սակայն նրանց կատարածը անուրանալի է և մեծ գնահատանքի արժանի:

19-րդ դարի երկրորդ կեսին հարաբերականորեն նպաստավոր պայմաններ էին ստեղծվել վիճագրագիտությանը զարկ տալու համար. հանդես էին եկել համալսարանական կրթությամբ նվիրյալներ՝ Քերովյե Պատկանյան, Հովհաննես Ամիրջի, Ներսես Ներսիսյան, Մկրտիչ Էմին, Գրիգոր Խալաթյան, որոնք Պետերբուրգի համալսարանում և Լազարյան ճեմարանում պատրաստում էին հայագետ-կովկասագետներ: Նրանց սաներից և գործընկերներից էին Ն. Յա. Մառը, Հ. Ա. Օրբելին և ուրիշներ, ինչ փույթ, թե նրանք գործելու էին կամ գիտական ծրագրեր էին մշակելու Հայաստանի սահմաններից հեռու, Ռուսական կայսրության մայրաքաղաքներում, Կովկասում կամ այլուր:

## ՀԱՅԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1 ՆԻԿՈՂԱՅՈՒ ՄԱՐ  
(1864-1934)

Հայ վիճագրության իբրև առանձին գիտաճյուղի զարգացման մեծ երախտավորները հանդիսացան Ն. Յա. Մառը և Հ. Ա. Օրբելին: Ուսումնասիրելով նրանց թողած գիտական ժառանգությունը, հիրավի, զարմանք ու հիացմունք է առաջացնում այս մեծանուն այրերի նվիրվածությունը հայ ժողովրդի անցյալի մշակույթի, մասնավորապես գրավոր աղբյուրների նկատմամբ:

Ն. Մառը առաջին անգամ Հայաստան եկավ 1890 թվականին, իսկ 1892-ին սկսեց Անի քաղաքի պեղումները: 1909-1911 թթ. Յա. Ի. Սիմիոնովի և ճարտարապետ Կ. Կ. Ռոմանովի ընկերակցությամբ նա պեղումներ կատարեց Գառնիի հեթանոսական տաճարի ավերակներում, սակայն մեծ գիտնականի ուշադրության կենտրոնը միշտ մնում էր Անին իր խորհրդավորությամբ:

Խոսելով Բագրատունյաց հռչակավոր մայրաքաղաքի մասին՝ Ն. Մառը գրում է. «**Անին գիտության համար թանկ է ոչ միայն հայկական արվեստի ստեղծագործություններով, այլև իր բոլոր վիճագրական և առարկայական հուշարձաններով**»:<sup>86</sup> Ն. Մառի գնահատմամբ «**Արձանագրությունները պարունակում են շատ տվյալներ ինչպես ժամանակագրության և տիրող տոհմերի ծագումնաբանության ճշտման, այնպես էլ հարուստ տեղեկություններ են պարունակում ժամանակի հասարակության ներքին կյանքի լուսաբանման համար մայրաքաղաքի և ամբողջ իշխանության ու եկեղեցական կազմակերպչական ձևերի, տուրքերի համակարգի և հարկերի տեսակների ու շատ այլ հարցերի վերաբերյալ**»:<sup>87</sup>

Հայ վիճագրական հուշարձանների կապակցությամբ Ն. Լխաթի շարադրած հոդվածներն<sup>88</sup> ու զեկուցագրերը<sup>89</sup> ազնիվ հոգատարության արգասիք են:

Ռուսաստանի կայսերական հնագիտական հանձնաժողովին Ն. Մառի հղած զեկուցագրերում բարձր են գնահատվում հայերեն, ինչպես նաև վրացերեն վիճագրերը, հետևաբար կոչ է արվում անհապաղ ձեռնամուխ լինել հավաքչական աշխատանքներին:<sup>90</sup>

Ն. Մառն առաջարկում է կազմակերպել վիճագրական արշավախումբ՝ հետևյալ կազմով. Թ. Ժողանիա (պատմաբան), Ա. Քութաբեյլաձե (վրացերենի ուսուցիչ), Ե. Թաղայշվիլի (պատմաբան), Գ. Տեր-Մկրտչյան (իրավունքի դոկտոր), Երվ. Լալայան (ազգագրագետ), Հ. Մանանդյան (փիլիսոփայության դոկտոր), Ստ. Մալխասյան (պատմաբան-գրականագետ), Մ. Տեր-Մովսիսյան (Մագիստրոս): Ցանկություն են հայտնել արշավախմբին մասնակցելու Իվ. Զավա-





Ավաղեմիկոս Նիկողայոս Մառը Անիում

խովը (Ջավախիշվիլի), Ն. Ադոնցը և Ս. Տեր-Ավետիսյանը, որ այդ ժամանակ ուսանում էր կայսերական համալսարանի 4-րդ կուրսում:<sup>91</sup>

Ն. Մառը շահագրգիռ համառությամբ հետևում էր վիճաբանական արշավախմբի կազմակերպման ընթացքին, ձգտելով նաև ֆինանսական միջոցներ հայթայթել արշավախմբի մասնակիցների և վիճակաբանական բնագրերի լուսանկարման համար:

Կայսերական հնագիտական հանձնաժողովը 1903 թ. մայիսի 12-ի թիվ 1221 որոշմամբ վիճաբանական արշավախմբի ընդհանուր ղեկավար է առաջադրում Ն. Մառին: Ծրագրում նախատեսվում էր 10-ական մամուլ ծավալով հրատարակել «Հայերեն և վրացերեն արձանագրությունների ժողովածու»-ները՝ օժտված գիտական ապարատով, հատկապես լուսանկարներով և գրչագրերով:<sup>92</sup>

1904 թ. մայիսի 23-ին կայացավ խորհրդակցություն, իսկ հնագիտական հանձնաժողովի համագումարը տեղի ունեցավ Թբիլիսիում հունիսի 10-ին: Ի թիվս այլոց, համագումարին մասնակցում էին Իվ. Ջավախիշվիլին, Օ. Պ. Կարբելովը, Ա. Քուբաբելաձեն, Երվ. Լալայանը, Գ. Մանանդյանը, Ստ. Լիսիցյանը, Ստ. Մալխասյանցը, Ե. Թաղաշվիլին, Ս. Տեր-Ավետիսյանը, Մեսրոպ Մազիստրոսը, Գր. Խալաթյանցը: Ն. Մառը ժողովականներին ծանուցում է, որ արդեն տպագրության են պատրաստ Երվ. Լալայանի կազմած (Գորիսի<sup>7</sup>) պրակը և Շիրակի արձանագրությունների ժողովածուն: Նա ներկաներին զգուշացնում էր հավաքական աշխատանքների ժամանակ վիճակաբանական բնագրերը վերծանելիս լինել առավել զգույշ՝ հիմք ունենալով նույնականության սկզբունքը: Պահպանելով գիտական եթիկայի տարրական պահանջները՝ մեծ գիտնականն առաջարկում էր ստուգել և բնագրերի հետ նորից համեմատել Ղ. Ալիշանի և Մ. Բրոսեի նախկին ընթերցումները:

Ցավոք, Ն. Մառի կազմակերպական տրեմաշան աշխատանքը սպասելի արդյունք չտվեց. հայ-վրացական միացյալ վիճաբանական արշավախումբը չգործեց քաղաքական աննպաստ պայմանների և գիտնականների միջև ծագած տարածայնությունների պատճառով: Ի չիք դարձան մեծ հայագետի երազանքները:



Ավաղեմիկոս Գրիգորի Օրբելի

## 2. ԳՐԿԱՆԵՐ ՕՐԲԵԼԻ (1887-1961)

Հայ խոշորագույն արևելագետ, հնագետ և վիճաբանագետ, գիտության անխոնջ կազմակերպիչ Գրիգորի Օրբելին ծնվել է 1887 թ. մայիսի 8(20)-ին Քուբայիս քաղաքում: Ավարտել է Թբիլիսիի արական 3-րդ գիմնազիան (1904 թ.), ապա սովորել և ավարտել է Պետերբուրգի կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը (1911 թ.) ունկնդրելով Ն. Մառին, Ն. Անդոնցին, Իվ. Ջավախիշվի-



լուն, Յա. Սիմիոնովին: 1906–1917 թթ. մասնակցել է Անիի պեղումներին և այլ արշավախմբերի աշխատանքներին: 1912 թ. ընտրվել է Պետերբուրգի Հնագիտական ընկերության անդամ: 1914 թ. Պետերբուրգի կայսերական համալսարանում դասավանդել է հնագիտություն, Հայաստանի պատմություն, հայկական արձանագրագիտություն և քրդերեն: 1916 թ. Ն. Մառի հետ պեղումներ է կատարել Վանում, ապա նաև Գառնիում, Փարպիում, Աշտարակում և Ամբերդում:

Իբրև հասարակական մեղադրող նա մասնակցել է ֆաշիստական Գերմանիայի պարագլուխների Նյուրնբերգյան դատավարությանը (1946 թ.):

Հ. Օրբելին արտասահմանյան մի շարք համալսարանների (Լոնդոն, Թեհրան և այլն) պատվավոր դոկտոր էր և պրոֆեսոր:

Հ. Օրբելին իրավամբ համարվում է հայ գիտական վիճագրագիտության հիմնադիրը և «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի ստեղծողներից մեկը:

Հայ վիճագրության վերծանության սկզբունքները Հ. Օրբելին առաջին անգամ շարադրեց 1914 թ. սեպտեմբերի 6–ին Պետերբուրգի համալսարանում կարդացած իր դասախոսություններից մեկում, որը կոչվում էր «**Հայկական վիճական արձանագրությունների գիտական նշանակությունը**»: Հայերեն թարգմանությամբ այլ լույս տեսավ «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի 1–ին պրակում (1966 թ.):

1909 թ. օգոստոսին Ն. Մառի երաշխավորությամբ Ռուսաստանի Կայսերական ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքը Հ. Օրբելուն գործուղում է Խաչեն: Ապագա գիտնականն ընդամենը 17 օրվա ընթացքում վերծանում և ընդօրինակում է շուրջ 270 վիճագրեր Գանձասարի վանքից, Վաճառից, Խաչխուբից, Հավապտուկից, Կոչիկ անապատից, Մեծառանից Ս. Հակոբա վանքից, Խաթրավանքից, Դադի վանքից և այլ վայրերից: Արցախում եղած ժամանակ Հ. Օրբելին նկատում է պատմությունը կեղծելու այնպիսի մի արգահատելի երևույթ, որը դժբախտաբար, շարունակվում է նաև հետագա տարիներին: Իրողությունն այն է, որ բեկերի մի խումբ Գանձասարի ընդարձակ կալվածները սեփականելու միտումով քերել և ոչնչացնել է տալիս այդ նշանավոր պատմա–մշակութային օջախի պատերին փորագրված գրությունները, որոնցում հանվանե նշված էին վանքապատկան կալվածներն ու տիրույթները:

Հայ գիտնականներից թերևս ամենից ավելի Հ. Օրբելին էր բարձր գնահատում հայերեն վիճագրերի պատմագիտական արժեքը:

«**Հայաստանի առավել հետաքրքրական կողմը՝ ժողովրդի կյանքը, ոչ միայն ընտանեկան կենցաղը, կահկարասին, քաղաքային բարեկարգությունը, այլև նույնիսկ միջնադարյան հայ քաղաքի հասարակական կառուցվածքը,**— գրում է նա,— մնում էին միանգամայն անհայտ, քանի դեռ չէին ուսումնասիրվել վիճական արձանագրությունները, հնագիտական հուշարձանների այն առաջին տեսակը, որը պատմագիտական աղբյուրներ

րի շարքը մտավ շնորհիվ Ս. Բրոսեի և Ղ. Ալիշանի»:<sup>93</sup> Հ. Օրբելու կարծիքով, առանց վիճական արձանագրությունների մենք չենք կարող պատկերացում ունենալ Անիի քաղաքային վարչության ներքին կառուցվածքի, գոյություն ունեցած «**քաղաքային խորհուրդների, ավագների խորհրդի, աչքի ընկնող ավագանու և այլնի մասին**»:<sup>94</sup>

Պատմիչների երկերում հանդիպող հատուկեցու տերմիններն իրական նշանակություն կարող են ստանալ արձանագրական նյութի հիման վրա:

Հ. Օրբելին հատուկ ուշադրություն էր դարձնում վիճագրերում հանդիպող անվանարանական երևույթներին, գտնելով, որ օտար, մուսուլմանական, մեծ մասամբ արաբական անուններ էին ծագում ունենալ առաջին հերթին հայ ազնվական դասի ներկայացուցիչները: Մենք այս խնդիրներին հատուկ կանդակադառնանք ստորև «**Անձնանուններն ու ազգանունները (տոհմանունները) վիճական բնագրերում**» ենթաբաժնում:

«**Հայերեն արձանագրագիտության բնագավառում Անիի դպրոցի և հատկապես Հ. Օրբելու վաստակը ոչ միայն նրա հավաքած և հրատարակած արձանագրություններն են,**— գրում է ականավոր վիճագրագետ Ս. Գ. Բարխուդարյանը,— **այլև գերազանցապես այն, որ նա մշակեց և հիմք դրեց գիտական նոր մոտեցման դեպի այդ սկզբնաղբյուրները և ապա մշակեց նրանց հավաքման և հրատարակման համար ժամանակակից գիտության բարձր պահանջների ոգով սկզբունքներ և մեթոդներ, որոնք ուղեցույցներ դարձան հետագա ուսումնասիրողների համար**»:<sup>95</sup> Հ. Օրբելին առաջինը հայագիտության ասպարեզում մշակեց հայկական փակագրերի առանձին տառանմուշներ, որոնցից 500–ը ներկայացրեց տպագրության «Христианский Восток» հանդեսին:

Հ. Օրբելին շնորհակալությամբ է խոսում իր ուսուցիչ Ն. Մառի մասին համեստաբար նրան վերագրելով վերծանության գիտական մեթոդ ստեղծելու նախապատվությունը: «**Նոր նյութեր հայկական վիճագրության**» ծավալուն հոդվածում Ն. Մառը քանիցս առաջարկում էր համախմբել Անդրկովկասի մասնագետների ուժերը գիտական ժողովածուներ հրատարակելու նպատակով, սակայն, ինչպես վերը նշեցինք, այդ կարևոր գործը մնաց խանձարուրում:

Հ. Օրբելու ուսումնասիրությունների շրջանում հայագիտությանը հայտնի էին ընդամենը 1500 արձանագրություններ, որոնք նա ցանկանում էր հրատարակել «**Corpus inscriptionum armenicarum**»—«**Դիվան հայ վիճագրության**» խորագրով: Վերնագրի կաղապարը, ըստ երևույթին, նա վերցրել էր Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Թեոդոր Մոմզենի «Corpus inscriptionum latinarum» բազմահատոր ժողովածուից:<sup>96</sup>

Հ. Օրբելին կտրականապես բողոքում էր այն երևույթի դեմ, երբ պատմական հուշարձանները վերանորոգելիս ծեփի տակ սվաղվում են հին գրությունները: Նա



խիստ զայրացել էր, որ 1912 թ. Օշականում Գրեթի գյուղի տոնակատարության նախընթաց օրերին ծեփով սվաղել և ծածկել էին հին արձանագրությունները:<sup>97</sup>

3. Օրբելին ստեղծեց նաև հինգ տարբերանշաններ (զծիկ, կախման կետեր (կամ՝ բազմակետեր), կիսափակագծեր, մեծ փակագիծ, տողատման նշան), առանց որոնց չի կարելի ներկայացնել գիտական հրապարակումները:


Նկատի ունենալով մեր «քարակերտ մատյանների» հույժ կարևորությունը Հայաստանի և հարակից երկրների ժողովուրդների անցյալի պատմության համար՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը քանիցս անդրադարձել է վիճագրագիտության զարգացման և արշավախմբերի կազմակերպման խնդիրներին՝ առանձնապես կարևորվում է 1986 թ. նոյեմբերի 14-ի որոշումը<sup>98</sup>, որի տակ ուրախությամբ կստորագրեր երջանկախիշատակ 3. Օրբելին:

3. Օրբելու և Ն. Մառի կարծիքով ձեռագիր մատյանների հետ միասին հայկական վիճագրերը կազմում են հայ ժողովրդի պատմական անցյալի հիմքերի հիմքը: Ջնջել մեր մագաղաթյա և քարակերտ մատյանները՝ նշանակում է առհավետ կորցնել ոչ միայն անցյալի պատմությունը, այլև հայ ժողովրդի ինքնության առհավատչյան:

3. Օրբելին շտապում էր, շտապում էր ավելի, քան մենք այսօր. վիճակն բնագրերը մեծ մասամբ գտնվում են բաց երկնքի տակ, մշտապես ենթակա արևի, անձրևի, ծյան, սառնամանիքների, քամու ներգործությանը. անգիտակից անձինք անխնայաբար ոչնչացնում են դրանք, ժամանակի ընթացքում եղծվում և քայքայվում են բնագրերը՝ դառնալով անընթեռնելի:

Այս կապակցությամբ 3. Օրբելին գրում էր.

«Չխոսելով արդեն այն գանձերի մասին, որոնք ծածկված են հին շենքերի ավերակների կամ բերածո ավազների տակ, կարելի է պատկերացնել, թե որքան նյութ ենք հայտնաբերելու դեռևս, եթե նույնիսկ պեղումներով չզբաղվենք, այլ միայն հավաքենք այն, ինչ գտնվում է հողի մակերեսին, և այդ գործում պետք է շտապել»:<sup>99</sup>



Գարեգին Յովսեփյան

### 3. ԳԱՐԵԳԻՆ ՅՈՎՍԵՓՅԱՆ (1867–1952)

Հայ խոշոր արվեստաբան, վիճագրագետ-պատմաբան, փիլիսոփայության դոկտոր Գարեգին Կարապետի Յովսեփյանը (Գարեգին Ա Կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո) ծնվել է 1867 թ. դեկտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում: 1890 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ապա ուսումը շարունակել է Բեռլին-

նի, Յալլեի և Լայպցիգի համալսարաններում (1892–1896 թթ.): 1897-ից դասավանդել է Գևորգյան ճեմարանում, լինելով նաև մատենադարանապետ: 1898 թ. ձեռնադրվել է վարդապետ և նշանակվել Գևորգյան ճեմարանի տեսուչ և «Արարատ» ամսագրի խմբագիր: Ալ. Թամանյանի, Ալիս. Քալանթարի և ուրիշների հետ միասին մասնակցել է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանման կոմիտեի ստեղծման աշխատանքներին: 1925 թ. Գարեգին արքեպիսկոպոս Յովսեփյանը նշանակվել է Ղրիմի և Նոր Նախիջևանի թեմական առաջնորդ: Կրոնավորի սև սքեմի տակ բաբախում էր հայրենանվեր գիտնականի սիրտը: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նա եռանդուն մասնակցություն ունեցավ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար նյութական միջոցներ հայթայթելուն:

Գ. Յովսեփյանն ունեցել է բազմաթեղուն գրիչ. ուսումնասիրություններ է գրել հայոց պատմության տարբեր հիմնահարցերի շուրջ: Անգնահատելի արժեք են ներկայացնում «Քարտեզ հայ հնագրության» («Շողակաթ», Էջմիածին, 1913) աշխատությունը, ուր տրված է 5–15-րդ դարերի հայկական տառանշանների անցման փուլերի իրական պատկերը, ապա՝ «**Խաբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ**» եռահատոր ուսումնասիրությունը (1928–1943, 2-րդ հրատ. 1969 թ.), որի 3-րդ հատորն ամբողջապես նվիրված է հայկական վիճագրերի վերծանությանն ու մեկնաբանությանը: Հանձին Գ. Յովսեփյանի հայ վիճագրագիտությունն ունի իր խոշոր մասնագետին. Անիի, Գառնիի, Արագածի պեղումներին մասնակցելը առավել ամրապնդեց հնագետ-պատմաբանի նրա վարկանիշը: Գ. Յովսեփյանը բազմաթիվ վիճագրեր է հայտնաբերել Վայոց ձորից, Կոտայքից և այլ վայրերից: Նրա վերծանություններն անթերի են, ստույգ և նույնական:



Աշխարհբեկ Քալանթար

### 4. ԱՇԽԱՐԴՅԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ (1884–1942)

Տառապանքով անցել ու ողբերգությամբ է ավարտվել նվիրյալ հայագետ Աշխարհբեկ Աղալոյի Քալանթարի կյանքը: Ծնվել է 1884 թ. փետրվարի 11-ին Գուգարաց աշխարհի Արդվի գյուղում (այժմյան Լոռու մարզի Թումանյանի շրջան): 1903 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան, ապա՝ 1906 թ. տեղի N. 3 արական գիմնազիան: 1907–1911 թթ. սովորել և ավարտել է Պետերբուրգի կայսերական համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրա-



ցական բանասիրության և պատմության բաժինը: Աշակերտել է Ն. Մառին, Տուրակին, Սմիռնովին, Բարտոլդին: Դեռևս ուսանելու տարիներին՝ 1907 թ. մասնակցել է Անիի պեղումներին: 1917 թ. Ն. Աղոնցի հետ միասին գործուղվել է Վան սեպագրերն ուսումնասիրելու և նորերը հայտնաբերելու ակնկալիքով: 1920 թ. օգտվելով պատեհ առիթից, մեկնել է Անի և զբաղվել Անիի և նրա շրջակայքի վիճագրերի ընդօրինակմամբ: 1921-1937 թթ. Երևանի համալսարանում դասավանդել է հնագիտություն, հայոց պատմություն և Հին Արևելքի պատմություն: Պրոֆեսոր (1929 թվից) Ա. Քալանթարը հանդիսանում է Հայաստանի հուշարձանների պահպանման կոմիտեի հիմնադիրներից մեկը (1923 թ. գիտնական քարտուղարը):

Ա. Քալանթարի տպագիր աշխատանքներից մեզ են հասել «Քարե դարը Հայաստանում» (1925 թ.), «Հին Վաղարշապատի պեղումները» (1935 թ.) և բազմաթիվ հոդվածներ՝ հատկապես սեպագրերի մասին:<sup>100</sup> Նա հատուկ նշում է Հին Արևավիրի շրջակայքում հայտնաբերված հունարեն արձանագրության կարևորությունը հայագիտության համար:<sup>101</sup> **Վիճական արձանագրությունները**, գրում է նա, «մեր պատմության ամենահիմնական աղբյուրն են»:<sup>102</sup> Ն. Մառի և այլոց աշխատանքներով պարզվել է, շարունակում է նա, «որ **հնագույն կուլտուրայի ստեղծողները, Հայաստանի նախաբնակները, ունեցել են նաև գիր, գրականություն** (ընդգծումը Ա. Քալանթարին է-Գ.Գ.), հայտնագործված են և արդեն իսկ հավաքված մի քանի հարյուր առանձին արձանագրությունների բնագրեր, փորագրված ժայռերի վրա հիերոգլիֆ և գծային գրերով»:<sup>103</sup> Փարիզի «Revue archeologique» հանդեսում 1929 թ. լույս է տեսնում Ա. Քալանթարի հայկական արձանագրությունների մասին հոդվածը:<sup>104</sup> Ուսումնասիրողը խոսում է «**հայ վիճական արձանագրությունների կորպուսի կազմման**» անհրաժեշտության մասին:<sup>105</sup>

Հ. Օրբելին հիշում է, թե ինչպես Անիի Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցու շուրջ պեղումների ժամանակ հայտնաբերված 131 բեկորանոց արձանագրությունը հնտորեն կարողացավ վերականգնել միայն Ա. Քալանթարը:<sup>106</sup> Պատահական չէ, որ Ն. Մառը Ա. Քալանթարին համարել է «**Կովկասում միակը, որի վրա կարելի է հենվել, երբ խոսքը վերաբերում է հայկական վիճագիր հուշարձաններին**»:<sup>107</sup> Ակադ. Բ.Ն. Առաքելյանը՝ ժամանակակից հայ վիճագրագետների մեծանուն հովանավորն ու աջակիցը, ըստ արժանվույն գնահատում է Ա. Քալանթարի գիտական վաստակը:<sup>108</sup> Վերջերս վիճագրագետներ Հ. Մելքոնյանն ու Գ. Սարգսյանը անգլերենով հրատարակեցին Ա. Քալանթարի տարիներ առաջ կազմած ձեռագիր աշխատությունը՝ Վանստանի արձանագրությունների ժողովածուն:<sup>109</sup>



Սեդրակ Բարխուդարյան

## 5. ՍԵՂՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

(1898-1970)

Ականավոր վիճագրագետ Սեդրակ Գևորգի Բարխուդարյանը ծնվել է 1898 թ. մարտի 21-ին Իրանի Սալմաստ գավառի Հավթվան գյուղում: Տեղափոխվելով Երևան՝ սովորել և 1928 թ. ավարտել է պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: 1932-1937 թթ. ղեկավարել է հնագիտական մի շարք արշավախմբեր: Այնուհետև՝ մեղադրվելով ազգայնականության մեջ, 17 տարի անց է կացրել կալանավայրերում: Մինչ այդ, նա հասցրել էր լույս ընծայել «**Վե-**

**լիքուխի երկիրը**» աշխատությունը (1935 թ.), որն իր ժամանակի ուրարտագիտության ակնառու ուսումնասիրություններից էր:

Ս. Բարխուդարյանի գիտական ժառանգության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում «**Հայ միջնադարյան ճարտարապետներ և քարգործ վարպետներ**» մենագրությունը, որը շարադրվեց իբրև թեկնածուական թեզ և տպագրվեց 1963 թվականին: Այստեղ Ս. Բարխուդարյանը ի հայտ է բերել մինչ այդ անծանոթ 70 ճարտարապետների (մինչև 17-րդ դարը ներառյալ), 130 քանդակազարդող վարպետների և 49 վիճագիր գրիչների անուններ՝ նշելով նրանց կատարած դերը հայոց ճարտարապետության և արվեստի պատմության մեջ: Սակայն տքնաջան ուսումնասիրողին առավել հարազատ էր հայկական վիճագրագիտության ասպարեզը, որին և նվիրվեց մինչև իր կյանքի մայրամուտը:

Ս. Բարխուդարյանի կարծիքով՝ մինչև 1960-ական թվականները հրատարակված ժողովածուները corpus-ներ չի կարելի անվանել, քանզի՝

1. Նախորդ վերածնողները չեն եղել մասնագետներ.
2. Վիճագրերը համարելով կարևոր և ոչ կարևոր՝ ընդօրինակել են միայն դյուրընթեռնելի բնագրերը.
3. Չեն պահպանել արձանագրությունների հնագրական, ուղղագրական-քերականական առանձնահատկությունները, կատարել են անհարկի ուղղումներ և սրբագրումներ.
4. Չեն օգտագործել տեխնիկական միջոցներ, բացակայում են լուսանկարները, գրչագրերը և էստամպային կրկնօրինակումները:

Ս. Բարխուդարյանն առաջարկում էր վիճագրական ժողովածուներ կազմելիս օգտվել գործող վանքերում և Մատենադարանում պահպանվող «**Քոթուկ**»-մատյաններից, որոնցում կան նախկինում ընդօրինակված բազմաթիվ արձանագրություններ, որոնք այժմ գոյություն չունեն կամ մեզ են հասել քայքայված ու եղծված վիճակում: Ընթերցելիս պետք է առաջնորդվել բնագրի և



վերծանության նույնականության սկզբունքով: Այս ամենի մասին Ս. Բարխուդարյանը շարադրում է «Դիվանի» 1-ին պրակում զետեղված «**Հայկական վիճազրույթուն**» խորագիրը կրող առաջաբանում:

Մեծ վիճազրագետի երազանքը կատարվեց մասնակիորեն. նրա կենդանության օրոք տպագրվեցին Սյունիքի Ջանգեզուրյան հատվածի (ի բաց առյալ Մեղրու շրջանը), Վայոց ձորի և մասամբ Գեղարքունիքի պրակները, իսկ Արցախի ժողովածուն վիճազրության բաժնի աշխատակիցների ջանքերով և ակադ. Բ. Ն. Առաքելյանի խմբագրությամբ լույս տեսավ Ս. Բարխուդարյանի մահվանից 12 տարի հետո՝ 1982 թվականին: Այժմ տպագրության են պատրաստվում Դյուսիսային Հայաստանի և Շիրակի թերակատար ժողովածուները, որոնք իբրև կարևոր պատմական սկզբաղբյուրներ համալրելու են «Դիվան հայ վիճազրության» մատենաշարը:

«**Արձանագրությունների հավաքման աշխատանքները**,— գրում էր Ս. Բարխուդարյանը,— կապված են երկարատև և ծանր ճամփորդությունների ու նյութական միջոցների հետ»,<sup>110</sup> որոնցից այսօր, ցավոք, մենք զրկված ենք: Իսկ բաց երկնքի տակ եղած անգնահատելի սկզբնաղբյուրները՝ վիճական արձանագրությունները, օրավուր եղծվում ու ոչնչանում են մեր աչքի առաջ, մեր աչքից հեռու:



Կարո Ղաֆադարյան

## 6. ԿԱՐՈ ՂԱՖԱՐԱՐԻՅԱՆ (1907–1976)

Բազմավաստակ վիճազրագետ, հնագետ–պատմաբան Կարո Գրիգորի Ղաֆադարյանը ծնվել է 1907 թ. ապրիլի 20–ին Ախալցխիս քաղաքում: 1931 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի պատմության բաժինը: 40–ը չբոլորած ապագա պրոֆեսորը «**Հայկական գրի սկզբնական տեսակները**» ձեռագիր աշխատության համար արժանանում է Մելքոնյան մրցանակի:

4. Ղաֆադարյանը շուրջ 25 տարի եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրենը: 1959 թ, մինչև իր կյանքի ավարտը նա ղեկավարել է ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջին դարերի հնագիտության բաժինը: 1961 թ. պրոֆ. Կ. Ղաֆադարյանին շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում: Ականավոր գիտնականը վախճանվեց 1976 թ. հոկտեմբերի 21–ին, 69 տարեկան հասակում, բարի հիշատակ թողնելով իր բազմաթիվ ուսանողների և հետևորդների մեջ:

Պրոֆ. Կ. Ղաֆադարյանի գիտական ժառանգության ցանկում առանձնակի տեղ են զբաղեցնում վիճազրագիտական աշխատությունները՝ «**Հովհաննավանքը և նրա արձանագրությունները**» (1948 թ.), «**Սանահնի վանքը և նրա արձանագրությունները**» (1957 թ.), «**Հաղբատ**» (1963 թ.), «**Երևան. Միջնադարյան հուշարձանները**» (1975 թ.), որոնք թեև շարադրված են «Դիվանից» տարբեր սկզբունքներով (ուսումնասիրվող համալիրների շինարարության պատմություն, կառույցների չափագրություններ, տարրնթերցումների համեմատական քննություն և այլն), սակայն ընթերցողը հստակ պատկերացում է կազմում այդ խոշոր հուշարձանախմբերի և մերօրյա հայոց մայրաքաղաքի քարակերտ մատյանների մասին:

Հայ վիճազրագետների սեղանի գիրքն է «**Հայկական գրի սկզբնական տեսակները**» (1939 թ.) փոքրածավալ մենագրությունը, որտեղ հեղինակը համեմատական վերլուծության եղանակով ներկայացնում է Մեսրոպյան այբուբենի անխտիր բոլոր տառերի փոփոխությունները սկզբից մինչև ուշ միջնադար:<sup>111</sup>

\* \* \*

Հայկական վիճագրերի ուսումնասիրման ասպարեզում ակնառու վաստակ ունի բանասեր–վիճազրագետ **Սուրեն Ավագյանը**, (1918-1983), որի աշխատություններն<sup>112</sup> առանձնանում են պատմա–բանասիրական վերլուծությունների բարձր մակարդակով: Հետևելով բնագրի նույնականության սկզբունքին՝ Ս. Ավագյանը բազմաթիվ ճշգրտումներ և սրբագրումներ է կատարել նախորդ հրատարակիչների ընթերցումներում: 1977 թ. Ս. Ավագյանի և Հո. Ջանփուլադյանի համատեղ ջանքերով լույս տեսավ «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի 6–րդ պրակը, որն, անտարակույս, հայագիտության մնայուն արժեքներից է:

Հայաստանի վրացերեն և Վրաստանի հայերեն վիճական արձանագրությունները վաղուց ի վեր գրավել են կովկասագետների սևեռուն ուշադրությունը: Այդ արժեքավոր հուշարձանները հանգամանորեն ուսումնասիրել և աղբյուրագիտական քննության է ենթարկել **Պարույր Մուրադյանը**:<sup>113</sup> Նա ջանադրությամբ հայտնաբերելով խաթարված ու տեղահանված հայագիր մի արձանագրություն՝ մեկ ավելորդ անգամ ապացուցեց, որ վրաց ճարտարապետության գլուխ–գործոցներից մեկի՝ Ջվարիի կառուցող ճարտարապետը եղել է հայազգի թողոսակը:<sup>114</sup>

Վերջին տասնամյակներում հայագիտությունը և, մասնավորապես, վիճագրագիտությունը հայտնվեցին անկման եզրին. ընդհատվեցին կանոնավոր գործող ամենամյա վիճագրական արշավախմբերի աշխատանքները: Սակայն գտնվեցին նվիրյալներ, որոնք պատեհ առիթն օգտագործելով՝ կարողացան մոռա-



ցության չտալ այս կարևոր բնագավառը: Այդ նվիրյալներից է վիճագրագետ-պատմաբան **Սուրեն Սաղումյանը**, որի գիտական հոդվածներն ու առանձին ուսումնասիրությունները («Աշտարակ», Երևան, 1998, «Մարմաշենի վանքը», Էջմիածին, 1998 և այլն) աչքի են ընկնում ինքնատիպ մեկնաբանություններով: Առանձնապես կարևորվում են վիճագրերի ծածկագրության և զարդագրության, համառոտագրության և փակագրության վերաբերյալ Ս. Սաղումյանի շահեկան աշխատանքները:

Արդի հայկական վիճագրագիտության մշակներից են **Գրիգոր Գրիգորյանը, Արզամ Այվազյանը, Գագիկ Սարգսյանը, Դուսիկ Մելքոնյանը և ուրիշներ**, որոնք ծագում են շարունակել նախորդ երախտավորների հայրենաճվեր գործը:



Մի խումբ վիճագրագետներ  
Նկարում աջից ծախ. Պատ. գիտ. թեկն., վիճագրագետ Դուսիկ Մելքոնյանը, վիճագրության բաժնի վարիչ, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը (գրքի հեղինակը), վիճագրության բաժնի ավագ գիտաշխատող պատմ. գիտ. թեկն. Գագիկ Սարգսյանը և զրջագրող-նկարիչ Լևոն Ավազյանը

## ՎԻՍԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1938 թ. օգոստոսի 20-ին Հայաստանի ժողովրդական Կոմիսարների հորհուրը (ժողկոմխորը) ակադ. Գ.Ա.Օրբելու գեկուցագրի հիման վրա որոշում ընդունեց՝ կազմակերպել վիճագրական արշավախումբ հորհրդային Հայաստանի տարածքում եղած վիճագրերը հավաքելու և գիտական հիմունքներով հրատարակելու նպատակով: Արշավախմբի կազմում ընդգրկվեցին Գ.Օրբելին (ղեկավար), հնագետ-պատմաբաններ Աշխարհբեկ Քալանթարը, Սեդրակ Բարխուդարյանը, Կարո Ղաֆադարյանը և ուրիշներ, սակայն վերահաս 2-րդ Հանաշխարհային պատերազմը և հայ գիտնականների ձերբակալությունները պատճառ դարձան այս ծրագրի խափանման:



Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյան

1943 թ. հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, և նրա առաջին նախագահ Գ.Օրբելին չմոռացավ անդրադառնալ վիճագրական արշավախմբերի ստեղծման հարցին: 10 տարի անց Գիտությունների ակադեմիայի նախագահությունը դարձյալ քննարկման նյութ դարձրեց այս խնդիրը, սակայն գործը տեղից շարժվեց միայն 1959 թ., երբ նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում ակադ. Բ.Ն.Առաքելյանի ջանքերով հիմնադրվեց հայ վիճագրության բաժին Ս.Գ.Բարխուդարյանի գլխավորությամբ:

Ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց վիճական արձանագրությունները հավաքել վարչա-տարածքային սկզբունքով, ըստ առանձին շրջանների: Ընդօրինակված բնագրերը պետք է ունենային լուսանկարներ, զրջագրեր և, ըստ հարկի՝ սեղմ մեկնաբանություններ ու ծանոթագրություններ: Այսպիսով սկսեց հրատարակվել «Դիվան հայ վիճագրության» մատենաշարը:

Առ այսօր լույս են ընծայվել 8 պրակներ:  
1966 թ. երկար փորձություններ անցնելուց հետո տպագրվեց **I պրակը** (II պրակի տպագրությունից 6 տարի հետո): Այն կազմել էր Գ.Օրբելին դեռևս Անիում կատարած պեղումների ժամանակ: Սակայն հորդացած Նևա գետի ջրերը լցվել էին Պետական Երմիտաժի նկուղահարկերը և անդարձ կորստյան պատճառ դարձել Գ.Օրբելու ձեռքով պատրաստված ծուլածո տառատեսակների ու



արտատիպերի: Բարեբախտաբար, մեկ օրինակ փրկվել էր ոչնչացումից, որը և հիմք ծառայեց «Պիվանի» I պրակի համար: Պրակում զետեղված են 266 արձանագրություններ Անի մայրաքաղաքից և նրա շրջակայքից: Գ.Օրբելու շնորհիվ փաստորեն կորստից փրկվեցին ճակատագրի բերումով մեզ այսօր անձեռնմխելի դարձած Բագրատունյաց մայրաքաղաքի բազմարվանդակ վիճազրույթունները:

Պրակն ընթերցողը նկատում է, թե ինչպիսի բարեխղճությամբ, գիտնականին վայել պատասխանատվությամբ և գերազույն համբերությամբ է խոշոր արևելագետը հավաքել, համադրել և վերականգնել վաղուց ի վեր եղծված, քայքայված ու պակասավոր վիճագրերը:



Անիի հնագիտական արշավախմբի անդամ, արվեստագետ-լուսանկարիչ Արամ Վրույր

Գ.Օրբելին և Մառի հետ միասին հայ վիճազրագիտությունը բարձրացրեց համաշխարհային գիտության մակարդակի:

**II պրակը**, որում զետեղված են 421 արձանագրություններ պատմական Սյունիքի Ծղուկ, Դաբանդ, Բաղք, Կովսական և Աղահեջք գավառներից կամ արդի Սյունիքի մարզի Գորիսի, Սիսիանի, Կապանի շրջաններից և մասամբ Քաշաթաղի (նախկին Լաչինի) տարածքից՝ Ս.Բարխուդարյանի աշխատասիրությամբ լույս ընծայվեց 1960 թ.:

**III պրակը** ընդգրկում է 813 արձանագրություններ պատմական Սյունիքի Վայոց ձոր գավառից (այժմյան Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր և Վայք ենթաշրջանները): Այն լույս ընծայվեց 1967 թ. Ս.Բարխուդարյանի աշխատասիրությամբ:

**IV պրակը** տպագրվեց Ս.Բարխուդարյանի մահվանից հետո՝ 1973 թ., նրա աշակերտների ջանքերով: Այստեղ ամփոփված են 1547 արձանագրություններ պատմական Սյունիքի Գեղարքունիք և Սողք գավառների տարածքներից (այժմյան Գեղարքունիքի մարզ):

**V պրակը** երկար ծգծումներից հետո տպագրվեց 1982 թ.: VI պրակից հետո: Այստեղ զետեղված են 1071 արձանագրություններ պատմական Դայաստանի Արցախ նահանգից, Գանձակից և նրա հարակից շրջաններից: Արշավախմբի ընդհանուր ղեկավարը Ս. Բարխուդարյանն էր: Հավաքչական աշխատանքներին մասնակցել են նաև ադրբեջանական մասնագետները Մեչեղի խանում Նեյմատովայի ղեկավարությամբ: Սակայն հայ-ադրբեջանական վիճազրական միացյալ արշավախմբի աշխատանքները ձախողվեցին ադրբեջանական գիտնականների հրաժարվելու պատճառով, քանզի օրակարգում դրված էր Նախիջևանի տարածքի համատեղ ուսումնասիրության խնդիրը:

**VI պրակը** Ս. Ավագյանի և Զո. Ջանփոլադյանի աշխատասիրությամբ ընթերցողի սեղանին դրվեց 1977 թ.: Այստեղ ամփոփված են Աղստևի հովտի (այժմյան Տավուշի մարզի Իջևանի շրջան) թվով 355 վիճագրեր:

**VII պրակն** ընդգրկում է Ուկրաինայի և Մոլդովայի հայկական գաղթօջախների 776 վիճական և թանգարանային առարկաների արձանագրություններ (կազմող՝ Գր.Մ.Գրիգորյան): Այն տպագրվեց 1996 թ. Խաժակ արք. Պարսամյանի և «Զգոն եպ. Տեր-Հակոբյան» հիմնադրամի հովանավորությամբ:

**VIII պրակը** Գր.Գրիգորյանի աշխատասիրությամբ լույս տեսավ 1999 թ. Շախե արք. Աճեմյանի նախաձեռնությամբ և Մեսրոպ արք. Աշեմյանի նյութական աջակցությամբ: Այստեղ զետեղված են Ռուսաստանի Ռաշնության հայ գաղթավայրերի 815 արձանագրություններ, ընդ որում նաև թանգարանային իրերի մակագրություններ:

1997 թ. տպագրվեց **Կուրի ձախափնյա շրջանների (Բուն Աղվանք)** հայկական արձանագրությունների ժողովածուն (կազմող՝ Ս.Կարապետյան): Այստեղ













Արձանագրությունների բեկորներ ԱՅԻԻ պեղումներից

ՄԻՈՅԵՎՈՂՐԱՅՈՒՄՍԵԲ  
**ՎԵՐՃԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ  
 ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

Վիճական արձանագրություններն ընդօրինակելիս անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ պահանջներով.

1. Դաշտային օրագրում պարտադիր նշել ուսումնասիրվող հուշարձանների տեսակը (եկեղեցի, ամրոց, խաչքար, տապանաքար և այլն), նրանց տեղադրությունը, վիճագրերի պահպանվածության վիճակը, չափերը (եթե հնարավոր է), գրչության ձևերը (տառատեսակը):
2. Կատարել ստույգ, նույնական արտագրություն՝ բնագրի գրչագրական առանձնահատկությունների պահպանմամբ:
3. Ընդօրինակել անխտիր մեծ և փոքր արձանագրություններն ու նրանց բեկորները (օրինակ՝ շինարարական մեկ բեկորի միջոցով որոշվեց Յերմոնի դպրեվանքի ստույգ տեղադրությունը):<sup>121</sup>
4. Բնագրի վերականգնումների ժամանակ անհրաժեշտաբար կիրառել բոլոր պայմանական նշանները (գծիկ, կախման կետեր, կիսափակագծեր, մեծ փակագիծ և տողատման նշան):
5. Աշխատությունը տպագրության նախապատրաստելիս պարտադիր նշել վիճական բնագրերի մատենագիտությունը, հրատարակված կամ չհրատարակված լինելու պարագան, կամ ում կողմից, երբ և որտեղ է հրատարակված:

121 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 122 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 123 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 124 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 125 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 126 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 127 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 128 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 129 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 130 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 131 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 132 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 133 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 134 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 135 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 136 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 137 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 138 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 139 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 140 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 141 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 142 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 143 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 144 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 145 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 146 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 147 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 148 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 149 - Յիսուս (տրվակաճ իր.)  
 150 - Յիսուս (տրվակաճ իր.)



# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## (Հապավմամբ գրվող բառերը)

Չեռագիր մատյաններում և վիճական արձանագրություններում մի շարք բառեր կիրառվում են առավելապես հապավված ձևով:<sup>122</sup> Հապավումը պահպանվում է մաս բառաթեքման կամ բառաբարդեցման ժամանակ:<sup>123</sup> Հապավված բառի վրա դրվում է հատուկ պայմանական նշան՝ հորիզոնական գծիկ, (—, —, —), որը կոչվում է պատիվ, հապավման նշան, դուր կամ բաշ: Հապավմամբ առավել հանդես են գալիս տերուճական յոթ բառերը. ԱԾ, ՏՐ, ՅՄ, ՔՄ, ՄՔ, ԵՂՄ, ԻԷՂ

—ա մարտիրոսացի դրամից մուգուղղապատ մարտիրոսացի դրամից

- ԱԾ – Աստուած (ուղղական հոլ.)
- ԱՅ – Աստուծոյ (սեռական հոլ.)
- ՅԱՅ – յԱստուծոյ (բացառական հոլ.)
- ԱՎ – Աստուծով (գործիական հոլ.)
- ՏՐ – Տեր (ուղղական հոլ.)
- ՏԵ – Տեռն (սեռական հոլ.)
- ՏԷ – ի Տեռնէ (բացառական հոլ.)
- ՏՔ – Տերամբ (գործիական հոլ.):
- ՅՄ – Յիսուս (ուղղական հոլ.)
- ՅԴ – Յիսուսի (սեռական հոլ.)
- ՅԷ – ի Յիսուսէ (բացառական հոլ.)
- ՔՄ – Քրիստոս (ուղղական հոլ.)
- ՔԴ – Քրիստոսի (սեռական հոլ.)
- ՔԷ – ի Քրիստոսէ (բացառական հոլ.)

Մյուս հոլովածները վիճագրերում չեն պահպանվել:  
Նույն կերպ են հոլովվում ՄՔ (ՍՈՒՐՔ) ԵՂՄ–Երուսաղէմ, ԻԷՂ–Իսրայէլ բառերը:

# ԿՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կցագրություն կամ կապգիր կոչվում է հապավման կամ սղման այն ձևը, երբ տարբեր տառերի անհրաժեշտ ստեղծներն իրար ծուլվելով, գործածվում են իբրև ընդհանուր և բառանջատում տեղի չի ունենում, այսինքն՝ կցագրությունն ունի շարունակական բնույթ, հետևաբար չեն կիրառվում տրոհման նշանները: Կցագրված բառերն իրարից անջատում ենք մտովի, տրամաբանորեն: Բազմաթիվ կցագրեր են օգտագործված Ավանի, Օծուճի, Եղվարդի, Ղափսիմեի, Վահանավանքի և այլ պատմա-մշակութային կենտրոնների վիճական արձանագրություններում: Կցագրերի կիրառության մասին արժեքավոր աշխատություններ են գրել պրոֆ. Կ.Ղաֆադարյանը<sup>124</sup> ու վիճագրագետ-պատմաբան Ս.Սաղուճյանը:<sup>125</sup>

Սինչև օրինակներին անցնելը նկատենք, որ երբեմն միևնույն տառը նույնությամբ կարող է կրկնվել առանց գրվելու, մանավանդ, երբ հաջորդ բառը սկսվում է նույն տառանիշով.

ԱՄՅԶԷՄԵՔ      ԱՄ Է ԿՈՅՐ ԱՉԱԲ ՔԱՆ [ԿՈՅՐ] ԱՍԱԲԷ

ԱԿԵՆԱՆԵՐՈՒՆԵՆ      ԱԿ ԸՆԴ ԱԿԱՆ ԱՏԱՍԻ ԸՆԴ ԱՏԱՍԻՆ

Ինչպես տեսնում ենք, առաջին օրինակի Ք տառը գործածվելով մեկ անգամ ընթերցվում է երկու անգամ (ԱՉԱԲ–ՔԱՆ բառերի համար): Բառանջատում կատարելիս պետք է զգույշ լինել, այլապես կստանանք խաթարված բնագրի պատկեր:



Կցագրերով են հանդես գալիս բազմաթիվ տառակապակցություններ.

Ա	-աբ (Աբրահամ)	Ա	-անխափան
Ա	-ագ (Ագարակ)	Ա	-անք (խաբկանք)
Ա	-ագր (ճառագրել)	Ա	-անն (աններելի)
Ա	-աթ (Աթանաս)	Ա	-առ (առուտ)
Ա	-ահ (արքահ)	Ա	-առա (առաքել)
Ա	-ախ (խարդախ)	Ա	-աս (Ասատուր)
Ա	-ակ (ագարակ)	Ա	-աս (ասել)
Ա	-աղ (Գամաղիել)	Ա	-ատ (Սմբատ)
Ա	-ամ (ամենայն)	Ա	-ար (Արա)
Ա	-աման (կաման)	Ա	-ար (արար)
Ա	-ամբ (իշխանութեամբ)	Ա	-արգ (արգելք)
Ա	-ամեն (ամեն)	Ա	-արդ (արդիւնք)
Ա	-ամեն (ամենայն)	Ա	-արի (քաջարի)
Ա	-ամս (ամսական)	Ա	-աւ (աւրենք)
Ա	-ան (անդունդ)	Ա	-աւր (աւրինել)
Ա	-ան (անգետ)	Ա	-աւր (հաւր)
Ա	-անի (Դանիէլ)	Ա	-ափ (Յովասափ)

Ա	-աք (Առաքել)	Բ	-բւ (Թականութեան)
Ա	-բա (Բարսեղ)	Բ	-բվ (թվիմ)
Ա	-բարե (բարեկամ)	Բ	-բվ (թվիմ)
Ա	-բա (Գալուստ)	Բ	-ժամ (ժամանել)
Ա	-բազ (Գագիկ)	Բ	-ժամի (ժամիմ)
Ա	-գե (Գեղամ)	Բ	-իմ (համարիմ)
Ա	-գէ (Գէղեոն)	Բ	-իմ (արարիմ)
Ա	-գս (Սարգսի)	Բ	-իմ (անծիմ)
Ա	-գոր (Գորգոր)	Բ	-ես (Եսայի)
Ա	-գր (գրել)	Բ	-ես (Եստոր)
Ա	-դա (Դաւիթ)	Բ	-եր (գրքեր)
Ա	-դե (Դերեն)	Բ	-եւան (իջեւանել)
Ա	-դէ (դէմ)	Բ	-զի (քանզի)
Ա	-դաի (անդաւի)	Բ	-էի (Ստեփանէի)
Ա	-դամ (անդամ)	Բ	-թա (թագաւոր)
Ա	-դո (անդորր)	Բ	-թբ (իշխանութեամբ)
Ա	-եւ (Եւա)	Բ	-թն (արթնանալ)
Ա	-դի (ուղի)	Բ	



Ե -ին (Սմբատիւն)  
 Ը -իս (տաճարիս)  
 Թ -իր (իրերաց)  
 ԲԲ -իսք (զիս բարեխաւս)  
 Է -լի (սիրելի)  
 ԻԱ -իա (Ձաքարիա)  
 ԼԱ -լսա (խափանել)  
 ԼԱ -լսան (խանգարել)  
 ԼԻ -լիս (խխունջ)  
 ԽԻ -իմ (իմոյ)  
 ԿՏ -տիս (Տխարբ, գյուղ)  
 ԼՔ -խափ (խափանել)  
 ԿԱ -կա (կատարիչք)  
 ԿԱ -կամաւ (կամաւն)  
 ԿԱ -կամ (կամաւք)  
 ԿԱ -կամէ (կամ է ինծ)  
 ԿԱ -կան (հայկական)  
 ԿԱ -կն (ակն)  
 ԿԱ -կս (ժամանակս)  
 ԿԱ -հա (Հայոց)

ԴԵ -դք (եղբայր)  
 ԶԵ -ղե (Ղեւոնդ)  
 ԶԷ -ղի (Դարանաղի)  
 ԸԱ -մա (մասն)  
 ԸԱ -ման (խանգարման)  
 ԸԱ -մարե (Մարեամ)  
 ԸԱ -մե (մերոյ)  
 ԸԱ -մեր (մերագնեայ)  
 ԸԱ -մէ (մէջ)  
 ԸԱ -մի (միաբան)  
 ԸԱ -միա (միասին)  
 ԸԱ -միր (ամիր)  
 ԸԱ -միս (Միսիթար)  
 ԸԱ -մն (մնացեալ)  
 ԸԱ -մար (ամարի)  
 ԸԱ -մակ (Փառնակ)  
 ԸԱ -մամ (զոհանամ)  
 ԸԱ -մար (անհնար)  
 ԸԱ -մաւ (մաւսսարդ)

ԸԱ -մե (պատանեակ)  
 ԸԱ -մե (իմել) դաս-  
 ԸԱ -մի (քանի)  
 ԸԱ -մք (ընթացք)  
 ԸԱ -մն (անմնան)  
 ԸԱ -մորոզ (մորոզել)  
 ԸԱ -մի (աւագանի)  
 ԸԱ -մք (միաբանք)  
 ԸԱ -յս (յոյս)  
 ԸԱ -ոք (Յակոբ)  
 ԸԱ -ոզ (ոզորել)  
 ԸԱ -ոխ (ոխական)  
 ԸԱ -ող (ողբալ)  
 ԸԱ -ողոր (ողորմութիւն)  
 ԸԱ -ոմա (Աբիսողոմայ)  
 ԸԱ -ոս (Մարտիրոս)  
 ԸԱ -ովիս (ով խափանել)  
 ԸԱ -ով (որովհետև)  
 ԸԱ -որ (որդի)  
 ԸԱ -ոց (որդուց)  
 ԸԱ -ոք (եթէ ոք)  
 ԸԱ -ու (Սամուէլ)

ԸԱ -ու (Լեզու)  
 ԸԱ -ոխ (ոխական)  
 ԸԱ -ուն (անտուն)  
 ԸԱ -ուր (ամենուր)  
 ԸԱ -չս (խաչս)  
 ԸԱ -պա (պահապան)  
 ԸԱ -պագ (երկրպագել)  
 ԸԱ -պատ (պատասխան)  
 ԸԱ -պաւ (ապաւէն)  
 ԸԱ -պաք (պարսպաքաղաք)  
 ԸԱ -պե (պետական)  
 ԸԱ -պի (Պիտոյից գիրք)  
 ԸԱ -պլ (Պլատոն)  
 ԸԱ -պան (այգեպան)  
 ԸԱ -պռ (Պռոշ, իշխան)  
 ԸԱ -պար (Պարոյր, արքա)  
 ԸԱ -ռա (Ռականել)  
 ԸԱ -սա (Սամուէլ)  
 ԸԱ -սք (Սոսթենէս)  
 ԸԱ -սի (սիրելի)  
 ԸԱ -սն (սնուցիչ)  
 ԸԱ -փա (Փառանծծեմ)  
 ԸԱ -ցի (Խորենացի)







ԳՐ	-Գորգ	ՊԵ	-Պետրոս
ԵՅ	-Եսայի	ՊԶ	-Պափայել
ԵԹ	-Երեմիա	ՊԻ	-Սիմեոն
ԵՊ	-Թադեոս	ՍԻ	-Ստեփան
ԴԱ	-Ղազար	ՎԱ	-Վարդապետ
ԴՅ	-Խաչատուր	ՆԱ	-Նահապետ
ՄԱ	-Մարքար	ՊԵ	-Պետրոս
ՄԻ	-Միմաս	ՍԱ	-Սարգիս
ՄԼ	-Միքայել	ՍԻ	-Սահակ
ՄՆ	-Մատթեոս	ՊՂ	-Պողոս
ՅԱ	-Յակոբ	ՍՈ	-Սուքիաս
ՅԻ	-Յարութիւն	ՍՏ	-Ստեփան
ՅՆ	-Յօհաննես	ՓԻ	-Փիլիպոս
ՅՓ	-Յովսէփ		

Նկատելի է, որ մի շարք վիմագրերում հապավված ձևով են հանդես գալիս հատկապես անձնանունները, պատվանուններն ու այլ բառեր: Օրինակ՝ ԴԹ - Դաւիթ,<sup>130</sup> ԳԲ - Գրիգոր,<sup>131</sup> ՄՏ - Ստեփանոս,<sup>132</sup> ՄԽ - Մխիթար,<sup>133</sup> ՅՈՎ - Յովանես,<sup>134</sup> ԵՊ - եպիսկոպոս, ՃԳ - ճգնաւոր,<sup>135</sup> ԻՆԿ - ինչպես նաև՝ ՊԲ - պարոն,<sup>136</sup> ՍՊ - սպիտակ (արծաթ դրամ),<sup>137</sup> ՎՄ - վասն<sup>138</sup> և այլն: Ինչպես տեսնում ենք, անձնանունները և պատվանունները գրվում են առաջին և վերջին տառերով կամ սկզբնատառերով: Սակայն կան այս սկզբունքից շեղումներ: Օրինակ՝ Պետրոս գրվում է ՊՏ,<sup>139</sup> Պողոս՝ ՊՂ:<sup>140</sup> Նկատելի է, որ հիմնականում սղվում են ձայնավորները:

## ՎԻՍԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՁՈՒՆ

Չայ միջնադարյան վիմագրերը փորագրված են դասական գրաբարով, միջին հայերենով, բարբառախառն գրաբարով և տեղական բարբառներով կամ խոսվածքներով: Ընտիր գրաբարով արձանագրություններ կան Անիի Մայր տաճարի, Տաթևի, Հաղարծնի, Գանձասարի, Գոշավանքի, Վանեվանի, Մարմաշենի, Վահանավանքի և այլ պաշտամունքային օջախների պատերին, թեև սրանցում նույնպես նկատելի են բարբառային (տեղական խոսվածքների) ներթափանցումներ: Միջին հայերենի էական առանձնահատկություններից մեկն այն է, որ, իբրև կանոն, սղվում են բառամիջյան որոշ ձայնավորներ: Օրինակ՝ ՍՈՎՈՐԵԼ-ՍՈՎՐԵԼ, ՍՈՏԵՆԱԼ-ՍՈՏՆԱԼ, ՍՈՌԱՆԱԼ-ՍՈՌՆԱԼ և այլն:

Չեռագիր մատյաններում, ինչպես նաև վիմագրերում տեղ խնայելու և արագագրության նպատակով բազմաթիվ բառեր գրվում են ձայնավոր տառերի սղմամբ: Օրինակ՝ ՔՀՆ - քահանայ,<sup>141</sup> ՀՅՑ - Հայոց,<sup>142</sup> ՀԳՑՆ - հոգոյն կամ հոգւոյն,<sup>143</sup> ՎՄՏԿՑ - վաստակաց կամ վաստակոց,<sup>144</sup> ԾՆՑ - շինեաց,<sup>145</sup> ՅԾՏԿ - յիշատակ, ՎԴՊՏ - վարդապետ:<sup>146</sup> Սղումը պահպանվում է նաև հոլովական վերջավորություններում՝ ԻՇԽՆ ԹԻ-իշխանութիւն, ԻՇԽՆՆՈՒ ԹԻ-իշխանութեամբ և այլն:

## ԲԱՐԲԱՌԱՆԱԸՆ ՎԻՍԱԳՐԵՐ

Ի տարբերություն գրաբարյան արձանագրությունների՝ բարբառախառն վիմագրերն արտացոլում են տեղական խոսվածքների բնորոշ, յուրատիպ նրբերանգները: Օրինակ՝ Սիսիանի ենթամարզի Սասուն հնավայրի արձանագրություններից մեկում կարդում ենք. «ԵՄ ՍԻՍՈՆ ԻՐԵՃ ԿԻՐԵՑ» այսինքն՝ ԵՍ ՍԻՍՈՆ ԵՐԵՑՍ ԳՐԵՑԻ (մեր անտիպ հավաքածուից): Տվյալ դեպքում նկատի չունենք փորագրիչների երբեմնակի սխալները:

Բարբառային արտացոլումներ են վիմական բնագրերում հաճախ հանդիպող ՍՈՌՆԵԼ-ՍՈՌՆԱԼ,<sup>147</sup> ԳՆՆՁԱՅՍԱՐ-ԳՆՆՁԱՅՍԱՐ,<sup>148</sup> ԺՂՎՐԱՆ-ԺՈՂՎԱՐԱՆ,<sup>149</sup> ԵՆԲԱՐ-ԵՂԲԱՅՐ,<sup>150</sup> ԴԱՊԱՆ-ՏԱՊԱՆ,<sup>151</sup> ՔԱՍՊԱՐ-ԳԱՍՊԱՐ,<sup>152</sup> ՅԱՐԳՈՒԹԻԻՆ-ՅԱՐՔԱՅՈՒԹԻԻՆ,<sup>153</sup> ՏԱՋԱՐ-ՏԱՃԱՐ,<sup>154</sup> ՆՈՐԵՔԵԼ-ՆՈՐՈԳԵԼ,<sup>155</sup> ՀԵՐԵՆԻՔ-ՀԱՅՐԵՆԻՔ,<sup>156</sup> ԽՐՕԽՔԵՐ-ՀՈՐԵՂԲԱՅՐ,<sup>157</sup> ԽՐՕՐՍՍԻՄ-ՀՈՐՈՍՍԻՄ<sup>158</sup> և այլն:

Եթե արևելյան Հայաստանի միջնադարյան վիմագրերում հաճախ են հանդիպում ԿԱԿՑԻ, ԿԱԿԵՑԻ կամ ԿՆԿԵՑԻ-ԿԱՆԿԵՑՐԻ,<sup>159</sup> ՍԱՂԱԹԵԼ-ՍԱՂԱԹԵԼ,<sup>160</sup>



ԱՔՈՂԱՍ-ԱՔՐԱՅԱՍ,<sup>161</sup> ԳԵՐՔ-ԳԵՒՈՐԳ,<sup>162</sup> ՍՅԱԳ-ՍԱՅԱԿ,<sup>163</sup> ԶԱՂԱՅ-ԶՐԱՂԱՅ,<sup>164</sup> ՏՈՒՆ-ՏԱՒՆ, ՏՕՆ,<sup>165</sup> ՕՆԵՐ-ՈՒՆԵՐ,<sup>166</sup> ձևերը, ապա արևմտահայերենում և առանձին գաղթօջախներում հանդես են գալիս ՆԵՔԵՐ, ՆՈՅՆԵՆՔԵՐ-ՆՈՅՆԵՐ,<sup>167</sup> ԻՍԹԵՐԱՆՆՈՍ-ՍՏԵՓԱՆՆՈՍ<sup>168</sup> և նմանատիպ արտահայտություններ, որոնք վկայում են ոչ միայն փորագրիչների հայերենի իմացության մակարդակը, այլև կրում են արևմտահայ խոսվածքների ցայտուն դրոշմը:

Բարբառային արձանագրություններում հաճախ դիտվում է տառերի դրափոխության և բառերի քմայնացման (պալատիզացիայի) երևույթը, այսինքն՝ Յ կիսածայնի գործածությունը երբեմն առանց դրա անհրաժեշտության:<sup>169</sup> Օրինակ՝ **ՀԱՐԱՅՊԵՏ-ՀԱՅՐԱՊԵՏ**,<sup>170</sup> **ԿԵՆԱՅԿԻՑ-ԿԵՆԱԿԻՑ**,<sup>171</sup> **ԱԹԱՅՊԵԿ-ԱԹԱՔԵԿ**,<sup>172</sup> **ՆՈՐԱՅՎԱՆՔ-ՆՈՐԱՎԱՆՔ**,<sup>173</sup> **ԱՄԵՆԱՅՓՐԿԻՉ-ԱՄԵՆԱՓՐԿԻՉ**,<sup>174</sup> **ՄԻԱՅՔԱՆ-ՄԻԱՔԱՆ**,<sup>175</sup> **ԶԱԻՐԱՅՎԱՐ-ԶԱԻՐԱՎԱՐ**,<sup>176</sup> **ՉԵՈՒՅԳԻՐ-ՉԵՈՒԱԳԻՐ**,<sup>177</sup> **ՀՈՅԳԵՒՈՐ-ՀՈՅԵՒՈՐ**<sup>178</sup> և այլն:

Երբեմն տեսնում ենք մեկ այլ երևույթ, երբ Ա և Ո ծայնավորներից հետո ըստ կանոնի գրվող Յ կիսածայնը բացակայում է: Օրինակ՝ **ԱԽՈՒՆ-ԱԽՈՅԱՆ**,<sup>179</sup> **ԿԱՆԵՆ-ԿԱՅԵՆ**,<sup>180</sup> **ՅՈՒՂԱԻ-ՅՈՒՂԱՅԻ**,<sup>181</sup> **ՀԱՈՑ-ՀԱՅՈՑ**,<sup>182</sup> և այլն:

Տեղական բարբառի ազդեցությամբ դասական գրաբարի ՔՈՅՐ (սեռականում՝ ԲԵՌ) բառը գրվում է **ՔՎԵՐ**,<sup>183</sup> ԱՅԳԻ-Ո՝ **ԻԳԻ**,<sup>184</sup> ԽԱՉ-Ն՝ **ԽԱՅՉ**, **ԽԵՉ**,<sup>185</sup> ԿԱՐ-ՂԱՅՔ-Ն՝ **ԿԱՐԴՔ**,<sup>186</sup> ԿԱՐՂԱ-Ո՝ **ԿԱՐՏԻ**:<sup>187</sup> Երբեմն տեղի է ունենում Ի-ի անկում՝ **ՇՄԱՈՆ-ՇՄԱԻՈՆ**:<sup>188</sup>

Ուշ միջնադարյան վիճակներում օտարազգի անձնանուններին զուգահեռ կիրառվել են մի շարք արտահայտություններ, որոնք կենսունակ են առ այսօր. դրանցից են՝ **ՀԱԼԱԼ-ԱՐԴԱՐ**,<sup>189</sup> **ԹԱԻԼԱ-ՄԱՌԱՆ**,<sup>190</sup> **ՈՒՄՍԱ-ՎԱՐՊԵՏ**<sup>191</sup> և այլն: Ինչպես տեսնում ենք, ժողովրդի խոսակցական լեզուն անմիջաբար արտացոլվել է վիճակյալ արձանագրություններում, ուստի առանց նրանց անհնար է որոշակի պատկերացում կազմել հայոց լեզվի բառապաշարի և զարգացման առանձին փուլերի մասին: Վիճակյալ ատաղձը պահպանել է ազգային լեզվի բոլոր շերտերը, արտահայտչաձևերը, քերականական կաղապարի բազմապիսի դրսևորումների իրական պատկերը:<sup>192</sup>

Բարբառային արտահայտություններով է համեմված Գորիսի շրջանի Հին հնձորեսկ գյուղի գերեզմանոցում գտնվող Մխիթար սպարապետի տապանագիրը, ուր կարդում ենք.

*«Այս է տապան ի հանգիսեան  
իջալ մարմով<sup>193</sup> ի գերեզման,  
Սայ Մխիթար մեծ անուվան,  
Սորա օնը իշխանութեան.  
Սայ բեմորատ զնաց ջիվան,*

*Որ է երկրեն սայ Կանճուվեր.*

*Նահատակեցան թվ. ՌՃԶԶ (1727)»:*<sup>194</sup>

Բարբառային արձանագրության ցայտուն օրինակներից է ԼՂԳ Տող գյուղում գտնվող Մելիք Եզանի (Ավանի) սպարանքի շքամուտքի 1737 թ. հիշատակագրությունը, ուր կարդում ենք.

«Ռ[Ի]Ն ՌՃՁ (1737): ՅԻՇԱՍԱԿ Է ԹԱՆԱՊԱՅԱՍ, ԱՅՍ Է, ՈՐ ԵՍ ՂՈՒԿԱՅ ՎԱՐՂԱՅՊԵՏԻ ՈՐԴԻ, ՈՐ Է ԻՄ ԱՆՈՒՆ Մ[Է]Լ[Ի]Ք ԵԿԱՆ, ՈՐ ԱՌԱՅԻ ԽԵԼԽՆ ԶԱՄ ԴԵՌ[Ի]Ն ԻՆՉ ԿԱՐՔԵՑԻՆ ՔՕՒ[Մ]Յ: ՅԻՂ ՆՈՐԱՅ, ՈՐ ՕԼՔԱՆ ԴԱԼ ԴԵՌԱԿ, ՀԱՅ ՍՈՒԼՔԱՆ ՀՈՒՄԵՅՆԻ ՏՂԱՅ՝ ՀԱՅ ԹԱՄԱՍԻՊԷ ԹԱՔԱՌՈՒ ՅԻՆ[Չ] չԱՓ ՂՈՒԼՈՒՂ ԱՐԿԷ, ՈՐ ՊԻՐԱՒ ԻՆՃ ՏՈՒՆՅԵՍ ՄԵԼԻՔՈՒԹՈՒՆ ԴՎԱԿ: ԱՅԼ ՕՍՄԱՆԼՈՒՆ ԵԿԱԿ ԱՌԱԿ Ի ձԵՆ ՆՈՐԱՅՆԻՅՆ, ՈՐ ՍԱՆ ԷԼ ԱՍ ՉԱՓ ՂՈՒԼՈՒՂ ԱՐԿԷ, ՈՐ ՊԻՐԵՆ ԴԻՂԱԿ, ԵՍ ԹՈՂԵՑԻ Ո՛՛՛ ՀԱՅԱՍՂԱՆԱՍ ԵՍԻՐ ՁԼՆԱԼՈՒ: ԻՆՃ ԴՎԱԿ ՍՕՎԼՂ: ԱՐԱՂԷ ՀԱՅ ՆԱՅԴԻՐ ԶՕՐԵՂ ԹԱՔԱՌՈՒ ԵԿԱՒ ԶՕՐՕՔ ԱՌԱՒ ՕԼՔԱՍ Ի ձԵՆԵՍ ՕՍՄԱՆԼՈՒԷՆԱՆԱՅ: ՆՈՐԱՅ ԵՍ չԱՓ ՂՈՒԼՈՒՂ ԱՐԿԷ, ՈՐ ԴՐԱՒ ԻՆՉ ԱՅՍԵՐ Զ (6) ՍՈՂԻԼԻՍ, ԱԶԿ ՔՐԼԻՍԴՐ[ՈՆ]Ե[Մ]Յ, ՈՐ ՄԵԿՆ ԹԱԼԻՇ, ՄԵԿՆ չԱՐՅՊՐ[ՈՂ]Թ, ՄԵԿՆ ԽԱՉԱՆ, ՄԵԿՆ ՎԱՐԱՆՂԱՅ, ՄԵԿՆ ՔՈՉԵՉ, ՄԵԿՆ ՏՈՒՔԱՂ, ԱՅ[Ս]ԴՈՒՆՑ ԽԱՆ-ՇՊԱԿԱՐՊԵԿԱՅ ՏԵՂ ԱՐԱՐ ԻՆՃ. ՇԱՓԱՅՂԱՑ ԱՐԱՒ: ՕԿ ՈՐ ՅԵՂՕԿ ԿԱՐԹԷ, ԱՅՍ ԳԻՐԵՍ ԻՄԱՆԱՅ, ՈՐ ՄԵՐ ՈՐՊԵՍՈՒԹՈՒՆ ԱՅՄՊԵՍ ԻԼԱՒ, ՄԻՆ ՈՂՈՐՄԵԱ ԱՅՍԷ: ԵՂԵԷ: ԱՄԵՆ»:

Հ. Դ. Փափազյանը ծանոթագրում է, որ «ժամանակի խոսակցական լեզվում պարսկա-թուրքական բառերի առկայությունը (**թանապա**=ընդունարան, **խելխ**=ժողովուրդ, **ջամ դեզին**=հավաքվեցին, **օլքա**=երկիր, **ղալ**=խառնակություն, **ղուլուղ**=ծառայություն, **եսիր**=գերի, **սոլվղ**=հաշտություն, **մոհիլ** (մահալ)=գավառ, **խան**-ը **պակլարպեկ**=բեկլարբեկի պաշտոն ունեցող խան, **չափաղաթ**=գթություն, շնորհ) թեև դժվարացնում է բնագրի և՛ ընթերցումը, և՛ ճշգրիտ ընկալումը, սակայն դրանով հանդերձ դժվար չէ նկատել, որ արձանագրության մեջ ժամանակագրական հաջորդականությամբ նկարագրված են մինչև 1737 թ. տեղի ունեցած իրադարձությունները»:<sup>195</sup>

Տեղական բարբառով կամ խոսվածքներով բազմաթիվ հիշատակագրություններ կան հայկական գաղթավայրերում: Ուկրաինայի պատմության պետական թանգարանում պահպանվող (ԸՄ-60) արձաթյա պահարանի վրա կարդում ենք.

**«Աս է իշատակ պահարանս Խաւշարո՞ (թերևս Խաւշանու՞) ՄՔ Ասուածածնա ժամոն իւրոր Եազուվայցի՞<sup>196</sup> Սէրքիսի ոտթի մահտեսի Մանկ կան իոր կօխակի՞<sup>197</sup> մահտեսի Մանոշակ, իշատակ ՄՔ Իսրէբաննօսին»:**<sup>198</sup>



## «Ա» ԵՐԿԱՐՔԱՌԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ա» երկարբառը (դիֆտոնգը) ինչպես ձեռագիր մատյաններում, այնպես էլ վիճական բնագրերում բաղաձայնից առաջ գրվում է **ա**, սակայն ընթերցվում է օ: Օրինակ՝ **աւգուտ**—օգուտ, **աւրէն**—օրեն, **աւր**—օր, **խաւսել**—խօսել և այլն: Բացառություն են կազմում *նաթ* և *աղաւնի* բառերը, որոնք բարբառներում արտաբերվում են **նօթ** և **աղօնիկ** ձևերով: Այս երևույթը բացատրվում է այն պարագայով, որ, Մեսրոպյան այբուբենում բացակայել են օ և ֆ տառերը, որոնք հետագա ներմուծումներ են:

«Ա» երկարբառը ձայնավորից առաջ և վերջնահանգ վանկում գրվում և կարդացվում է **աւ**: Օրինակ՝ **Նաւասարդ**, **մանաւանդ**, **կալաւ**, **մերձեցաւ**: Մի շարք բարբառներում այս կանոնը երբեմն խախտվում է. *շինեցաւ*—ի փոխարեն գրվում է **շինեցօ**,<sup>199</sup> *կառուցաւ*—ը գրվում է **կառուցօ**: Նույն խաթարումն ունեն **կանկեցօ**,<sup>200</sup> **սպասօորք**,<sup>201</sup> **զօակացն**,<sup>202</sup> **զօաթ**,<sup>203</sup> **օետարան**,<sup>204</sup> **կամօ**,<sup>205</sup> **մեռօ**,<sup>206</sup> **մանօանդ**,<sup>207</sup> և նմանատիպ բառերը, որոնց գրական ճիշտ ձևերն են *շինեցաւ*, *կանգնեցաւ*, *կառուցաւ*, *սպասաւորք*, *զաւակացն*, *զաւաթ*, *Աւետարան*, *կամաւ*, *մեռաւ*, *մանաւանդ*: Եռաբարբառները (եայ) հաճախ վերածվում են է-ի. **Թագուհեայ**—**Թագուհէ**, **Տիրուհեայ**—**Տիրուհէ** և այլն:

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ

(ՏՈՂՄԱՆՈՒՆՆԵՐԸ)

### ՎԻՄԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ

Պատմական յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դրոշմել հայոց անուն—ազգանունների վրա: Պետականության պայմաններում կիրառվել են բուն հայկական կամ Հայաստանում քաղաքացիական լայն ճանաչում ստացած երբեմնի օտարամուտ անձնանունները (Սմբատ, Գրիգոր, Ստեփանոս և այլն):

Միջնադարյան վիճագրերում կան **դեղ** (նախնական իմաստով՝ ծաղիկ) եզրույթով ստեղծված արական անձնանուններ՝ **Հայրադեղ**,<sup>208</sup> **Խոցադեղ**,<sup>209</sup> **Եղբայրադեղ**, **Սիրադեղ** և այլն: Շատ անձնանուններ հանդես են գալիս որակական ածականների հետ միասնաբար: Օրինակ՝ **«անթատան մանուկ»**, **«վայելչագեղ տղայ»**, **«դեռաբոյս պատանի»**, **«աշխարհաշեն դշխուհի»**, **«թագազարմ արքայուհի»**:<sup>210</sup> Հոգևոր դասի ներկայացուցիչներն, ընդհակառակն, իրենք իրենց համեստորեն որակել են՝ **«տրուպ վարդապետ»**<sup>211</sup> և այլն: Արաբական, սելջուկ-թուրքական, ապա նաև թաթար—մոնղոլական տիրապետության շրջանում հայերենին զուգընթաց սկսեցին կիրառվել **Հասան**,<sup>212</sup> **Ռա-**

**հիթ**,<sup>213</sup> **Ջվանշեր**,<sup>214</sup> **Ապուղամր**,<sup>215</sup> **Աղբուղա**,<sup>216</sup> **Ապղարիպ**,<sup>217</sup> **Փախրադին**,<sup>218</sup> **Նուրայդին**,<sup>219</sup> **Քարիմադին**,<sup>220</sup> **Նաջմադին**,<sup>221</sup> **Քուրդ**,<sup>222</sup> **Թանկրեղուլ**,<sup>223</sup> **Փախրադաւլա** (**Փախրադուլա**)<sup>224</sup> և այլ անուններ:

Նույն երևույթը շարունակվում է լեկթեմուրյան արշավանքներից հետո, մասնավորապես Կարա—կոյունլու և Ալ—կոյունլու թուրքմենական ցեղախմբերի բախումների շրջանում, երբ բազմաթիվ հայեր ստիպված էին կրելու **Սուլթան-դուլ**,<sup>225</sup> **Միրզայան**,<sup>226</sup> **Էլասլան**,<sup>227</sup> **Փիրիբեկ**,<sup>228</sup> **Ղուլիջան**,<sup>229</sup> **Շահսուլթան**,<sup>230</sup> **Մրուան**<sup>231</sup> և նմանատիպ անուններ:

Հայոց անուն—ազգանունների խախտարդետ պատկեր ենք տեսնում հայ գաղթավայրերի վիճական արձանագրություններում, մասնավորապես 18–20–րդ դարերում: Հաճախ առանց հայերեն ուղեկցող բնագրերի անհնարին է պատկերացնել, որ **Սվեշնիկով** (Սվեշնիկեանց),<sup>232</sup> **Չեռնիչով** (Չեռնիչեանց),<sup>233</sup> **Սաղովնիկով** (Սաղովնիկեանց),<sup>234</sup> **Սերեբրյակով** (Սերեբրեանկեանց)<sup>235</sup> ազգանուններ կրողները ազգությամբ եղել են հայեր: Ռուսաստանում **Լուսեղենը** դարձել է **Լուկյան**,<sup>236</sup> **Գևորգը Եզոր**,<sup>237</sup> **Թորոսը Տարաս**<sup>238</sup> և այլն: Սպասելի էր, որ սրանց ժառանգները հետագայում կրեին **Լուկյանով**, **Եզորով**, **Տարասով** ազգանունները: Տեղական միջավայրին հայկական անուն—ազգանունները հարմարեցնելու միտումն առավել նկատվում է խոշոր առևտրական դասի ներկայացուցիչների մոտ: Օրինակ՝ Գյուլնազար Օռուխենցը դարձել է **Նազար Օրեխովիչ**, **Հովհաննեսի որդիներ Աթանասն ու Բարսեղը կոչվել են Աթանասի և Վասիլի Իվանովներ, Պողոս Չենենցը՝ Պավել Չինով**: Առանց ուղեկցող նյութերի դժվար է կռահել, որ Ռուսաստանի խոշոր արդյունաբերողներ **Մակարովը**, **Գրիգորևը**, **Բոգդանովը**, **Իվանովը**, **Ֆիլիպովը** և այլք ծագումով եղել են հայեր:<sup>239</sup>

16–18–րդ դարերում Արևելյան Եվրոպայի երկրներում, առավելապես Լվովում, Կամենեց—Պոդոլսկում, Յազլովեցում և հարակից բնակավայրերում հայերն ընդունեցին **քո**, (**կո**), **ովիչ** կամ **սկի** վերջավորություններով անուն—ազգանուններ՝ **խաչքո**,<sup>240</sup> **Կրեսքո**,<sup>241</sup> **Իվաչքո**, **Թորոսովիչ**, **Թումանովիչ**, **Վարդերեսովիչ**, **Մանուկևիչ**,<sup>242</sup> ապա նաև՝ **Ավագովսկի**, **Չայկովսկի**:<sup>243</sup> Ավագյան գերդաստանի ժառանգներն աստիճանաբար կոչվեցին **Ավագովիչ—Ավագովսկի**, իսկ կոմսությունն ընդունելուց հետո՝ **Վակովսկի**:<sup>244</sup> Լեհաստանում հայտնի դեմքեր էին **Բեռնատովիչները**, **Կարլ Միկուլիչ** (Աբսինյան—կոմսոգիտոր Շոպենի գործերի հրատարակիչը), **Ռոչքան**, **Ռոմաչքանը**, **Մարմարոչը** և շատ ուրիշ հայորդիներ:<sup>245</sup> Երբեմն անձնանունները տրվում են թարգմանաբար: **Աստվածատուրը** Ռուսաստանում դառնում էր **Բոգդան**, իսկ Լեհաստանում՝ **Թեոդոր**: Մոլդովայում ապրող մի շարք հայ ընտանքներ շրջակա միջավայրում հայտնի դարձան **Նեգրուլ**, **Պալիոզ**,<sup>246</sup> **Ջախարիանով**,<sup>247</sup> **Լուբով**<sup>248</sup> ազգանուններով:

Թուրքերի տիրապետությունից հետո (1475 թ.) Մոլդովայում և հատկապես Ղրիմում բուն հայկական անուն, ազգանուններին զուգահեռ լայն տարածում



գտան թուրք-թաթարական. անուն-ազգանունները. Առապ Օղլու,<sup>249</sup> Ղազանճի Օղլու,<sup>250</sup> Սաթեթ Օղլու,<sup>251</sup> Քեապապճի Օղլու,<sup>252</sup> Ճերմակ Օղլու:<sup>253</sup> Ալանակե-նանցը դարձել է Ալանյակի,<sup>254</sup> ճևահիրճեանցը՝ Ջևարջի:<sup>255</sup> Ղրիմի վիմագրե-րում բազմաթիվ են **խան Մելիք**,<sup>256</sup> **խանի Պիքե**,<sup>257</sup> **խըտրշայ**,<sup>258</sup> **խուբլուպեյ**,<sup>259</sup> **Պիաթա**,<sup>260</sup> **Սովինչ Պեկ**<sup>261</sup> և բազմաթիվ օտարանուն անուններ:

### ՀԱՅ ՎԻՍԱԳԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Վիմագիր բանաստեղծությունները նույն չափածո, ութմիկ ստեղծագործու-թյուններն են, որոնք փորագրված են ոչ միայն փոքրածավալ կոթողների՝ տա-պանաքարերի, խաչքարերի և հուշայունների վրա, այլև պաշտամունքային կա-ռույցների պատերին: Հայրուրավոր բանաստեղծություններ կան Կ.Պոլսի, Երևանի, Սանկտ-Պետերբուրգի, Մոսկվայի և բազմաթիվ այլ քաղաքների հան-գետարաններում: Իբրև գրականության առանձին ենթաժանր, վիմագիր բա-նաստեղծությունները լինում են խոհա-փիլիսոփայական, ծոներգային-փառա-բանական, հիշատակագրային-կենսագրական և այլն:

ԼՂԳ-ի Առաջածոր գյուղի վիմագրերից մեկում, որը քվագրված է 13-րդ դա-րով, կարդում ենք բժշկական բովանդակությամբ հետևյալ քառյակը.

«...Տունկս բարի ծառս ամենի,  
Պտուղն եփիր հազար բարի,  
Ով փափագի աստ վայելի  
Կենաց յուտյն նայ հասանի»:<sup>262</sup>

Կան նաև այսպես կոչված **կտիտորական-շինարարական** բնույթի արծա-նագրություններ, որոնք մեզ են հասել առավելապես 14-րդ դարի սկզբից:<sup>263</sup>

Ահա 1408 թ. վիմագիր բանաստեղծություններից մեկը.

Սայ է տաճյար ակտուալ ծայրին  
Շինեալ յանուղ զօրաց վերին՝  
Գարրիէլ[ին] եւ Միքաէլին  
Սպասօրը ակտուալ ծ բանին.  
Հալալ արդեամբ]ք ակտուալ ծատրին  
Կենակցին Աղուք իւա]թնին]  
եւ ծնողաց] Սատաթիւն] Մարեմ իւա]թնին]  
եւ զօակացն խաչատրին, Սիմեոնին,  
Յոհանիսին, Մարի Մելիքին Թվ. ՊԾԷ (1408):

Բանաստեղծական կատարելությամբ և փորագրության արվեստով առանձ-նապես աչքի են ընկնում Ռուսաստանի հայ գաղթօջախների գողտրիկ վիմագ-

րերը:<sup>264</sup> Սիմֆերոպոլ քաղաքի հայոց հին գերեզմանոցի վիմագրերից մեկում կարդում ենք Անդրանիկի զինվորներից մեկի՝ Հարություն Չախոյանի դամբա-նականը, որ փորագրել է տվել Ս.Կ.Կյուլեպյանը.

«Ով որ կարդայ իմ ատեանը,  
Թող միտք բերէ մեր խեղճ ազգը,  
Չոր վերջ տուաւ զազան թուրքը  
Հայաստանի ժողովուրդը:  
Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ կը մեռնի,  
Բայց երանի անոր հոգւոյն՝  
Ազատութեան կը զոհուի»:<sup>265</sup>

Գմահատանքի և երախտագիտության ջերմ խոսքեր կան Ստեփանոս Նազա-րյանցին, Մսեր Մսերյանցին, Գրիգոր Խալաթյանցին, հայ զինվորականներին նվիրված վիմագիր բանաստեղծություններում:

Մոսկովյան հայ հասարակությունը Ստեփանոս Նազարյանցի շիրմաքարին փորագրել է տվել.

«Անծեռագործ դու մահարձան քեզ կանգնեցիր,  
Ոչ հողանիւք որպէս երկաթ կամ ործաքար.  
Չըզօր գրջով, սուրբ վաստակով եւ անձանձիր,  
Շունչ կենդանի եւ յետ մահուան հանդիսացար:  
Ահա նոր ազգ եւ նոր լեզուդ իւր ծիթենին  
Քո ջրով բուսած, քեզ է բերում, ով Ստեփանոս,  
Խաղաղ մնա, մի վրդովիր, քո է դափնին,  
Խաւարի մէջ լոյս մեզ ծագող Պռոմէթեոս:

Աշխարհ ծնար եւ աշխարհիս դարծար մշակ,  
Բայց չտեսար այս աշխարհից անդորրութիւն,  
Աշխատաւոր մարդկան բաժին է փշեայ պսակ,  
Ահ, քրտնաջան ոսկւոյրներիդ խաղաղութիւն»:<sup>266</sup>

Հայրենասիրական ջերմ շնչով է գրված Ռափայել Պատկանյանի՝ Ռոստովի Ս.Խաչ վանքի բակում վեր խոյացող կոթողի հիշատակագրությունը, որը համեմ-ված է Նոր Նախիջևանի հայոց բարբառով.

«Մեղքըցիր քեզի ու քու զաւակիտ,  
Պահպանէ հաւատ, լուզուն խեղճ ազգիտ  
Ու անկէ էտեւ չի ցաւիլ հոգիս,  
Թէ որ տուն ինձի չի սիրիս, ատիս:

Եփօր շատ տարի կանցնին ու կերթան  
Ու ոսկոռներուս իզն ալ չէ մնալու,







Ուղղագիծ երկաթագրից առաջացել են շղագիրն ու բուլղոգիրը գրեթե միաժամանակ:<sup>282</sup>

Տառերն, ըստ ուսումնասիրողի, համդես են գալիս հետևյալ դիրքերում.

1 Միջնական՝ ա, ո, ռ, ս, տ, ւ,

2. Վերնական՝ ե, ծ, մ, ն, հ, ժ,

3. Ստորնական՝ բ, գ, դ, զ, Լ, ղ, յ, պ, թ, ց, ք: Երբեմն տառերի դիրքերը փոփոխվում են:<sup>283</sup>

Պրոֆ. Ստ.Մելիք-Բախշյանը նույնպես քննարկել է հայ գրի ու գրչության զարգացման փուլերը՝ սկսած ժայռապատկերներից ընդհուպ մինչև հայոց գրերի գյուտը, անշուշտ, չհանտեսելով արամեերենն ու բիայնական սեպագիրը:

Մատենագրական աղբյուրների հետ միասին, ուսումնասիրողը բարձր է գնահատում հատկապես վիճական արձանագրությունների կարևորությունը հայագիտության համար, խոսում է կետադրության և առոգանության նշանների, համառոտագրության, հապավմամբ գրվող բառերի (ԱՄ, ՅՄ, ՔՄ, ՏՐ, ԵՂՄ-Երուսաղեմ, ԲԷՂ-Իսրայել), կապգրերի և տրոհման նշանների գործածության մասին:

Պետք է նկատել, որ վերջին երկու հապավումները առավելապես հանդես են գալիս մատենագրական սկզբնաղբյուրներում, իսկ միատառ գրվող քաղաքանունները (Կ. - Կոստանդնուպոլիս և այլն) վիճագրերում, որքան մեզ հայտնի է, ընդհանրապես չկան:<sup>284</sup> Պետք է տարբերակել կապգիր-փակագիրը կցագրից (մանրամասն տես սույն գրքի Կցագիր և Փակագիր ենթաբաժինները): Ստ. Մելիք-Բախշյանի աշխատության մեջ ներկայացված են թվագրության, ծածկագրության և գաղափարագրության բաժինները:<sup>285</sup> Իբրև հավելված տրված են մատենագրական և վիճագրական օրինակներ,<sup>286</sup> որոնք մեծապես նպաստում են այս առարկայի յուրացմանը:

Սերոպյան այբուբենի զարգացման պատկերը ցույց տալու նպատակով մեջքերենք պրոֆ. Ա.Գ.Աբրահամյանի կազմած համեմատական տախտակը, ուր ներկայացված են պատմական հինգ հուշարձանների վիճագրերն ու մատենագրական աղբյուրներից երեք նմուշներ.

ՏԵԿՈՐ	ՊԱՆՊՈՆԱԿ	ՎՊԻՓՄԻՆԵ	ԲԱԳՎԱՆ	ԱՐՈՅ	ՄՐԵՆ	ՂՄԵՄՇՄ	ԿՅՈՒՆԵՂ
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Բ		Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ
Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
Դ	Դ		Դ		Դ	Դ	Դ
Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
Զ	Զ	Զ	Զ	Զ		Զ	Զ
Է	Է	Է	Է	Է		Է	Է
Ը	Ը	Ը		Ը		Ը	Ը
Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
Ժ				Ժ		Ժ	Ժ
Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
Լ			Լ			Լ	Լ



ՏԵԿՈՐ	ԿԱՊԱՆԱԿ	ՎՈՒՓՍԻՄԵ	ԲԱԳՎԱՆ	ԱՐՈՒՃ	ՄՐԵՆ	ԼԱԶԱՐՅԱՆ	ԿՅՈՒՆԵՂ
Է				Է		Է	Է
Ծ	Ծ	Ծ	Ծ			Ծ	Ծ
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ	Վ
Ձ	Ձ			Ձ		Ձ	Ձ
Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
Ճ		Ճ	Ճ			Ճ	Ճ
Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ		Շ		Շ	Շ	Շ	Շ
Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո

ՏԵԿՈՐ	ԿԱՊԱՆԱԿ	ՎՈՒՓՍԻՄԵ	ԲԱԳՎԱՆ	ԱՐՈՒՃ	ՄՐԵՆ	ԼԱԶԱՐՅԱՆ	ԿՅՈՒՆԵՂ
Ղ	Ղ	Ղ				Ղ	Ղ
Փ	Փ	Փ	Փ		Փ	Փ	Փ
Ջ	Ջ					Ջ	Ջ
Բ	Բ	Բ		Բ	Բ	Բ	Բ
Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
Ա		Ա	Ա			Ա	Ա
Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
Փ	Փ	Փ				Փ	Փ
Բ	Բ	Բ	Բ			Բ	Բ



Տեխնիկական կատարման առումով արձանագրությունները լինում են **փորագիր** և **մելանագիր**:

**Փորագիր** կոչվում են այն վիճագրերը, որոնք մետաղյա սուր գործիքով փորագրվում են քարի հարթեցրած մակերեսին ակոսիկների կամ ռելիեֆ տառերի տեսքով: Այս եղանակով են առաջացել **ելնդավոր** կամ **ուռուցիկ**, **ծաղկագիր**, **կենդանագիր** կամ **թռչնագիր** կոչվող արձանագրությունները. սրանց նախնական ձևերը նկատելի են ձեռագիր մատյաններում:

Ծաղկագիր արձանագրությունները քանդակվում են բուսական կամ երկրաչափական զարդանախշերի խտության մեջ՝ հիմնականում ելնդավոր կամ ուռուցիկ տառերով: Տառերը սերտորեն միակցված են բուսական (երկրաչափական) նախշերին և դժվար է դրանք միանգամից զատել իրարից: Անհրաժեշտ է ուշադրությամբ, մտովի առանձնացնել տառերը նախազարդերից: Այս առումով ծաղկագիր արձանագրությունները ըստ էության գաղտնագրության մի տեսակ են՝ դեկորատիվ արվեստի ժանյակավոր հյուսվածքներ, որոնք վերծանողից պահանջում են որոշակի հմտություն և լեզվի իմացություն:

Ծաղկագիր արձանագրությունների փայլուն նմուշներից են Տաթևում Չայրապետ եպիսկոպոսի պատվին 1269 թ. կանգնեցված խաչքարի հիշատակագրությունը,<sup>287</sup> Ամաղուի Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու (1339 թ.) «**Բուրթել իշխանաց իշխան**» մակագրությունը,<sup>288</sup> Ղրիմի Ս.Խաչ վանքի Ս.Նշան տաճարի թմբուկի 1358 թ. ռիթմիկ արձանագրությունը և այլն:

Թռչնագիր կամ կենդանագիր արձանագրությունները վիճագրերում սակավ են հանդիպում: Դրանք\*գերազանցապես առկա են ձեռագիր մատյաններում՝ գլխագրերի տեսքով, եկեղեցու հետ առնչվող պաշտամունքային իրերի ու առարկաների վրա:

Թռչնագիր արձանագրության ցայտուն նմուշ է էջմիածնից Չայաստանի պատմության պետական թանգարան բերված վարագույրի արձանագրությունը,<sup>290</sup> որը գիտական շրջանառության մեջ է դրվել Եվգինե Մուշեղյանի վերծանությամբ:

**Մելանագիր** կոչվում են այն արձանագրությունները, որոնք քարի հարթեցրած մակերեսին գրված են հատուկ պատրաստված դիմացկուն մելանով՝ թանաքով: Դրանք սովորաբար մակագրվում են կառույցների ներսի պատերին: Այդպիսիք առ այսօր պահպանվել են Գեղարդի վիճափոր տաճարում (Պռոշ Խաղբակյանի հիշատակագրությունը), Գոշավանքում, էջմիածնի մայր տաճարում, Տաթևում և այլուր: Նկատելի է, որ մի շարք մակագրություններում բնագրի առաջին տառը գրված է այլ գույնի թանաքով, որն առավել դյուրացնում է ընկալումը և ընթերցումը: Մելանագիր արձանագրություններում նույնպես, ինչպես որմնակարներում և ձեռագիր մատյաններում, կիրառելի է եղել հայկական Որդան կարմիրը: Երբեմն վիճագիրը սկզբից գրվել է ներկով, ապա՝ փորագրվել: Տեսնում ենք նաև հակառակ երևույթը:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

- 1. Վիճական արձանագրություններն ըստ բովանդակության լինում են
- 2. 3իշատակագրային
- 3. Շինարարական
- 4. Նվիրատվական
- 5. Իրավա-կանոնական
- 6. Կրոնա-բարոյախոսական
- 7. Խառն

### 1. ՀԻՇԱՏԱԿԱԳՐԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Չո որոնք ներքոյ քարանց,  
Ով հետեւողը դամբարանաց...*  
(Դ. VIII, 139)

Հիշատակագրային կոչվում են այն վիճագրերը, որոնցում հիշատակվում են հանգուցյալի կենսագրական հակիրճ տվյալները՝ անուն-ազգանունը, տոհմական և դասային պատկանելությունը, կենդանության ժամանակ կատարած առավել նշանակալից գործերը, հասարակության մեջ զբաղեցրած դիրքն ու պաշտոնը, կոչումն ու սոցիալական դրությունը (գիտնական, վաճառական, զինվորական, հոգևորական, արհեստագործ և այլն), մահվան հանգամանքներն ու պատճառը: Օրբելյան նշանավոր իշխան Էլիկունի տապանաքարին քանդակված է առյուծի կերպարանքով հանգուցյալը, որի շուրջ փորագրված է, որ Մեծն Տարսայիճի որդի, «**գեղեցկատիպ Էլիկունը**» կենդանության ժամանակ առյուծի պես խրոխտ մռնչում էր այլասեռ գնդի դեմ:<sup>291</sup> Էլիկունի կինը՝ Թամբան, ներկայացված է իբրև «**Քրիստոսասէր իշխանուհի**»:<sup>292</sup>

Կենսագրական բնույթ ունի Չերիեղ գյուղի (Վայոց ձորի մարզ) ժայռաքեկորի վրա փորագրված 14 տողանոց արձանագրությունը:<sup>293</sup> Գեղարքունիքի վիճագրերից մեկում կարդում ենք, թե ինչպես ոմն գորիսեցի, «պարոն Լալ» անունով, ցանկանում է Գեղարքունիքում տուն կառուցել, սակայն «**(Ի) շինել տան՝ անգաւ գերան ի գլխոն եւ մեռաւ**»:<sup>294</sup>

Բազմաթիվ հիշատակություններ կան պատերազմներում զոհվածների կամ գերեվարվածների մասին:<sup>295</sup> Վիճագրված է, թե ինչպես համայնքի անդամները հանգանակություն են կազմակերպում թուրքերի մոտ գերեվարված համադյուղացիներին փրկագներու նպատակով:<sup>296</sup> Բազմաթիվ են «անօրենների կողմից» սպանված մարդկանց մասին եղած հիշատակությունները:<sup>297</sup>



Հանգուցյալների մասին հիշատակագրություններ կոթողներին փորագրվել են դեռևս հնադարում: Այդ ավանդույթը շարունակվում է նաև այսօր: Վաղագույն հիշատակագրություններից կարելի է նշել Դվինի երկթեք տապանաքարերը, որոնք սկսվում են «Այս դիր...» բանաձևով: «Այս դիրս Գեորգա քահանայի»<sup>298</sup> կամ «Այս է հանգիստ Դաթի՛ Գընթունեաց տ [եռա] ն, որդո Վասակա»:<sup>299</sup> Վկայակոչված արձանագրությունները թվագրություն չունեն, և Կ.Ղաֆաղարյանը այս երևույթը բացատրում է «նրանց հնությանը»:<sup>300</sup> Նկատելի է, որ վկայված անձնանունների սեռական հոլովի 3 կիսածայնը չի գրված՝ Գեորգա, Վասակա: Անկախ լեզվական իրողություններից, Կ.Ղաֆաղարյանը Դվինի երկթեք տապանաքարերը թվագրում է 6-րդ դարով,<sup>301</sup> թեև հայտնի է, որ նմանատիպ կոթողները մեզանում հայտնի են 5-րդ դարից ընդհուպ մինչև 11-րդ դարը ներառյալ:

10-12-րդ դարերի կոթողային հուշարձաններին, մասնավորապես տապանաքարերին փորագրված են հանգուցյալների միայն անունները, հաճախ առանց թվագրության: Օրինակ՝ Հաղբատի վանքի մեծ գավթում թաղված իշխանագույնների տապանաքարերին կարդում ենք. **Մարիամ, Ռուսուդան, Աբաս, Դալիթ, Վասակ, Սեւադա** և այլն:<sup>302</sup> Առավել հայտնի Կյուրիկյանները ներկայացված են «թագաւոր» տիտղոսով:<sup>303</sup> Նույն պատկերը տեսնում ենք Սամահնի վանքում,<sup>304</sup> Հաղարծնում<sup>305</sup> և այլուր:

Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահի պեղումներից հայտնաբերված տապանաքարերի վրա փորագրված են հանգուցյալների միայն անունները՝ **Աշոտիկ, Դինար, Կատա, Ջևանշեր**, իսկ գերագույն իշխանավորները՝ Կյուրիկյանների նման, հանդես են գալիս «թագաւոր» տիտղոսով կամ արքայահոր անվան հիշատակությամբ: Ի տարբերություն Հյուսիսային Հայաստանի տիրակալների՝ Սյունիքի արքաների տապանագրերը անխտիր թվագրված են՝ «**Սմբատ թագաւոր. Թվ. :Շ: (1051)**»<sup>306</sup> կամ «**Գրիգոր թագաւոր՝ որդի Աշոտկա. Թվ. :ՇԻԱ: (1072)**»<sup>307</sup> Առավել ընդարձակ է Արցախական իշխանագույն Սահակ-Սևադա Բ-ի տիկնոջ՝ Սոփիի տապանագիրը. «**Սոփի թագուհի, զոքանչ**»<sup>308</sup> **Գրիգոր թագաւորի, մայր Շահանդխտո. Թվ. :ՇԼ: (1081)**»:<sup>309</sup> Երբեմն նկատի ունենալով հանգուցյալի մեծ հեղինակությունը տարածաշրջանում և հարևան պետությունների արքունիքներում, նրան նույնպես կոչում են «**արքա**»:<sup>310</sup> Հայտնի է, որ Օրբելյան գահերեց իշխան Սմբատը չի թագադրվել (զոնե մեզ հայտնի չէ նրա թագադրվելու փաստը), սակայն նրա տապանաքարին փորագրված է՝ «**Սմպատ արքային է տապանս... Թվ. :ՉԻԲ: (1273)**»:<sup>310</sup>

Հիշատակագրային վիճակներում ի մեծի մասամբ նշվում են հանգուցյալի պատվանուններն ու կենդանության ժամանակ ունեցած տիտղոսները՝ գահերեց կամ գահակալ իշխան, իշխանաց իշխան, սպասալար, սպարապետ, ինչպես նշեցինք, նաև առկա է դասային պատկանելությունը՝ հոգևորական, զինվո-

րական, վաճառական, բժիշկ, մտավորական և այլն:

Հայկական գաղթօջախների կոթողային հուշարձաններում հանգուցյալները նույնպես ներկայացված են իրենց զբաղեցրած պաշտոններով և ունեցած տիտղոսներով՝ **վեհազն-բոյարին**,<sup>311</sup> «**տոհմական պատվավոր քաղաքացի**»,<sup>312</sup> «**պալատական խորհրդական**»,<sup>313</sup> «**տիտղոսակիր խորհրդական**»,<sup>314</sup> որոնք վկայված են հայերեն և ռուսերեն լեզուներով միևնույն կոթողի վրա:

Հաճախ հիշատակագրային բնագրերը տրվում են բանաստեղծական կաղապարով.

*Աստուածատուր Հայրապետեան՝  
Ջուղայեցի եւ Բաշխումեան,  
Գործով զինուոր եւ կապիտան...»*<sup>315</sup>

Շտաբս-կապիտան Ջահալ Փիրալյանի (Փիրալով) տապանաքարին երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, և վրացերեն, նշված է, որ նա «**հանուն հայրենեաց**» մասնակցել է 1812 թ. Բորոդինոյի ճակատամարտին, վիրավորվել է ռազմի դաշտում և վախճանվել է այնտեղ ստացած վերքերից:<sup>316</sup> Դրիմահայոց հայտնի բարերար, վաճառական Հովակիմ Սեֆերյանի հուշակոթողին արձանագրված է, որ «**ստրա հաշուով գնած եւ շինած է Սիմֆերոպոլի հայոց աղջկանց ուսումնարանի շէնքը իւր բակով եւ բոլոր բնակարաններով 1892 թ.**»:<sup>317</sup> Նույն բարերարը կառուցել է նաև Եվպատոքիայի հայոց ուսումնարանը նախորդից մեկ տարի առաջ՝ 1891 թ.:


Արևելյան Եվրոպայի, մասնավորապես Ուկրաինայի (Լվովի) 16-18-րդ դարերի հայկական կոթողների վրա՝ հիշատակագրությունից հետո, քանդակված են հանգուցյալների տոհմանշանները:<sup>318</sup> Դրանց մի զգալի մասը փորագրված է ճոխ զարդաքանդակների մեջ, բանաստեղծական հանգավորում ունեցող բնագրերով:

Բուլղարիայի հայկական հիշատակագրային վիճակներն ուսումնասիրել և հրատարակել է Արա Մարկոսը: Բազմաթիվ հիշատակագրեր՝ հայերեն և թուրքերեն լեզուներով, բուլղարերեն թարգմանությամբ Արա Մարկոսը տպագրել է "Музеи и пламетници на културата" հանդեսի էջերում<sup>319</sup> և այլուր:<sup>320</sup>

Խաչքարեր և կոթողներ կանգնեցվում էին ոչ միայն հանգուցյալների աճյունների վրա, այլև պատմական լայն հնչեղություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Դրա վառ ապացույցներից է ամիրսպասալար Ջաքարե Ջաքարյանի կանգնեցրած խաչքարը՝ Ամբերդը սելջուկ-թուրքերից ազատագրելու առթիվ:



# ՏՈՐՄԱՆՇԱՆՆԵՐ



Ստեփաննիներ  
1538 թ.



Ստեփո Քայ  
16-րդ դ.



Ալենքելներ



Ստեփաննիներ  
1541 թ.



Նիկորովիներ




Գրիգոր Բալզամովիչ  
1712 թ.



Ավեդիկ Վարդանովիչ  
1645 թ.



Անհայտ հայ




Բարդուղ. Ջիմորովիչ  
1671 թ.



Անհայտ հայ



Ստեփաննիներ




Ստեփաննիներ



Կրեսցո Ջահնովիչ  
18-րդ դ.



Յասկևիչներ  
1704 թ.



Կրեսցոյենց  
1664 թ.



1. Նիկորովիներ  
2. Փիրունովիներ  
18-րդ դ.



Թեոդատ  
Ֆարուխովիչ  
18-րդ դ.



Ստեփաննո  
Ստեփաննիչ  
1730 թ.



Խոջա պր.  
Լազար  
1602 թ.

# ՏՈՐՄԱՆՇԱՆՆԵՐ



1483 թ.



Քրիստոֆ  
Ավգուստինովիչ  
1728 թ.



Քրիստափոր  
Ավեդիկ Բեռնատովիչ  
17-րդ դ.




Յակոբ-Աստվածատուր  
Բեռնատովիչ  
1770 թ.




Իվաչըր  
Ֆիլիպովիչ, 1635 թ.



Անհայտ  
հայ



Գրիգոր  
Կասյանովիչ  
1738 թ.




Անհայտ  
հայ



Բալտազար Գլովա  
1530 թ.



Անհայտ  
հայ



Ստ. Յոզեֆովիչ  
1707 թ.



Յասկևիչ  
16-րդ դ.



Անհայտ հայ



1691 թ.




Անհայտ հայ



Թեոդոր  
Յասկևիչ, 1699 թ.



Անհայտ հայ



Ջաքարիա  
Բոզդանովիչ  
1688 թ.




Անհայտ հայ



Պան Լազար  
Կարնիկ



Ստեփանիչ



Ստեփանիչներ



Անճեյ  
Չեխովիչ




Ստեփանովիչ  
18-րդ դ.



Ստեփանիչ



Ստեփանիչներ



Անճեյ  
Չեխովիչ



Ստեփանովիչ  
18-րդ դ.



Ստեփանովիչ  
18-րդ դ.







### 3. ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվիրատվական բովանդակության վիճազրեբուն հատուկ նշվում են գործարքի ժամանակը, նվիրատուները, նվիրատվության նպատակը, անշարժ կամ շարժական գույքի անվանումը և վկաները: Նվիրաբերողը, ինչպես կտեսնենք ստորև, ստանում է բարոյական հատուցում՝ հոգու փրկության համար պատարագներում հիշվելու ակնկալիքով: Նվիրատուի ցանկությամբ եկեղեցու հայրերը նշանակում են պատարագների օրերը՝ Դոգեգալուստ, Տյառնընդառաջ, Ս. Գանբարձում, և քանակը: Անուն առ անուն հիշատակվում են այն անձինք, որոնց հոգու փրկության կամ «յերկարկենդանութեան» համար մատուցվելու են պատարագներ:

Օրինակ՝ Սյունիքի գահերեց իշխան Սմբատ Օրբեյանը եկեղեցու սպասավորներին պարտավորեցնում է Նորավանքի Ավագ խորանում (Ս. Նախավկայի) պատարագներ մատուցել իր արյան մերձավորների համար. շաբաթ և կիրակի՝ իր հայր Լիպարիտ իշխանի, հինգշաբթի՝ մոր՝ Ասփայի, երկուշաբթի՝ եղբայր Էլիկունի, չորեքշաբթի՝ մյուս եղբայր Իվանեի և ուրբաթ օրը՝ կիսօրյա հանգուցյալ եղբայր Փախրադոլայի:<sup>335</sup>

Երբեմն նվիրատուները ցանկություն են հայտնում պատարագներ մատուցել իրենց անվանակից սրբերի հիշատակության օրերին: Այսպես, ոմն Գակոբ խնդրում է իր մասին հիշատակել Ս. Գակոբի տոնին:<sup>336</sup> Մեկ այլ հավատացյալ, կարողում ենք 1339 թ. վիճազրեբից մեկում, քանի որ կրում է Սարգիս անունը, ցանկություն է հայտնում իր մասին հիշատակել հատկապես Ս. Սարգսի տոնին:<sup>337</sup>

Վիճական արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան **հողատարածքներ**,<sup>338</sup> **այգիներ** (երբեմն՝ կատապան-այգեգործների հետ միասին)<sup>339</sup> **ջրաղացներ** (կամ ամբողջովին և կամ մասնակիորեն),<sup>340</sup> **ծիթիանք-սրանոցներ** (նույն սկզբունքով),<sup>341</sup> **վեցկի**,<sup>342</sup> **լծկան եզներ**,<sup>343</sup> **ոչխարներ**,<sup>344</sup> **կանխիկ դրամ (դահեկան, դուկատ, դեկան, սպիտակ)**,<sup>345</sup> **եկեղեցական սքեմ և սրբազան գրքեր** (շուրջառ, ավետարան և այլն),<sup>346</sup> **կուղպակ (կրպակ)-խանութներ**<sup>347</sup> նվիրաբերելու մասին:

Լինում են դեպքեր, երբ տարբեր եղանակներով գնելով այս կամ այն տիրույթը, հողակտորը՝ նվիրաբերում են հենց իրենց ազգատոհմին սպասարկող հոգևոր կենտրոնին:<sup>348</sup> Օրինակ՝ Վայոց ձորի վիճազրեբից և մատենագրական աղբյուրներից հայտնի Գոնցա իշխանուհին ոսկյա ապարանջանի դիմաց գնելով որոշակի հողակտոր, նվիրաբերում է Գերհերի Ս. Սիոն վանքի սպասավորներին:<sup>349</sup>

Շատ դեպքերում նվիրատվությունները անուն առ անուն չեն նշվում, այլ լոկ արձանագրվում են իբրև «հոգույ արդիւնք» կամ «հալլալ ընչիւք» և նմանատիպ բանաձևումներով:<sup>350</sup>

Նվիրատվական արձանագրություններում հատուկ նշվում են այն հարկերն ու տուրքերը, որոնց վճարումից այդուհետև ազատվելու են մոր սեփականատե-

րերը: Օրինակ՝ Սյունիքի մեծ իշխան Տարսայիճ Օրբեյանը Սիրանես ճարտարապետին ազատում է **ամիրային, պարոնին, ձեռնավորին և շուրտային** (նստիկանապետին) տրվելիք հարկերից:<sup>351</sup> Ստեփանոս Օրբեյան պատմիչ-մետրոպոլիտը Նորավանքի սպասավորներին շնորհում է իր «**հոգույ մասնաբաժինն**», «**ազատ յամէն աշխարհական հարկաց՝ ի դիւանէ, ի խալանէ եւ յամէն չարտ**»:<sup>352</sup>

Նվիրատվական ակտերը կազմելիս վկաների ներկայությամբ արձանագրվում էր, որ նվիրատուն հոգեպես առողջ է, պահի ազդեցության տակ չի կատարվել ընծայաբերումը կամ իրավունք ունի ստացողը շարժական կամ անշարժ գույքը գրավ դնել, վաճառել և այլն: Նվիրատվական գործարքը ամրագրվում էր վկաների ստորագրություններով և անեծքի բանաձևով: Ստ. Օրբեյանի նվիրատվական արձանագրություններից մեկն ավարտվում է հետևյալ ամփոփումով.

*«Եթե որ... խափանել խորհի յափշտակել զտուրքս եւ կամ ժառանգաւորացո ծուլանալ եղեալ սահմանիս՝ ընդ անլոյծ նզովիւք եղիցին ՅԱՅ ամենակալէն եւ յամենայն սրբոց երկնաւորաց եւ երկրաւորաց, ընդ Կայենի եւ ընդ Յուդալլի եւ Արիոսի պատժել խայտառակեցիցին, մեր մեղացն պարտական եղիցիւն. թէ Տաճիկ աւագ փոխի եւ խլել ջանա ՅԱՅ եւ ամենայն սրբոց նզոված եղիցի եւ իւր փեղամպարէն՝ ի Մահնետէ ապիգար եւ Ռ (1000) Ռ (1000) նալաթ լինի մեռելաւք եւ կենդանաւք...»*<sup>353</sup>

Անեծքի բաժնում հաճախ հիշատակվում են տիեզերական երեք ժողովները և 318 հայրապետները:<sup>354</sup>

### 4. ԻՐԱՎԱ-ՎԱՆՈՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվիրատվական արձանագրությունների նմանակությամբ են կազմվում իրավա-կանոնական բնույթի պայմանագրերը կամ համաձայնագրերը, որոնք ի տես ամենի փորագրվում են տաճարների, տաճարամերձ շինությունների կամ առանձին հուշակոթողների վրա:<sup>355</sup> Փաստագիրը ստորագրում էին գործարքին մասնակցող երկու կողմերը, վկաները,<sup>356</sup> որոնք իրենց կնիքներով և ստորագրություններով վավերացնում էին կատարված գործարքը:

Թագավորը կամ ազնվականը իրավական ակտը կնքում էին իրենց արքունական կամ իշխանական մատանիներով («**մատանի եղաւ**»), մյուսները պարզապես «**մատանում էին**» այսինքն՝ ձեռքի մատով դրոշմում էին փաստաթղթի վրա:<sup>357</sup> Առք ու վաճառքի կամ նվիրատվական արձանագրություններում հատուկ նշվում են տվյալ օբյեկտի անունը, տեղադրությունը, աշխարհագրական սահմանները, գործարքի պայմանները և այլն: Իրավաբանական գործառույթի ցայտուն օրինակներ կան Ստ.Օրբեյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության էջերում:<sup>358</sup> և վիճական արձանագրություններում, որոնցից օգտվել է մեծանուն պատմագիրը: Մեզ են հասել իրավական բնույթի բազմաթիվ փաս-



տագրեր ջրից օգտվելու<sup>359</sup> (ջրօգտագործման իրավունք), ջրադացներն ամբողջովին կամ մասնակիորեն նվիրաբերելու,<sup>360</sup> գյուղերի սահմանները որոշելու (սահմանաքարերի կամ սահմանախաչերի միջոցով),<sup>361</sup> հարկերի ու տուրքերի հաստատման, նվազեցման կամ խստա վերացման, ջրի և հողատարածքի համար գյուղացիական վեճերի ու խռովությունների կարգավորման վերաբերյալ բազմաթիվ վիճազություններ:

Վիճազերում կան մի շարք վկայություններ այն մասին, երբ ժողովրդի սոցիալական ծանր վիճակը հաշվի առնելով՝ երկրի բարձրագույն իշխանություններն ու տեղական ավատները թեթևացնում (պակասեցնում) կամ բոլորովին վերացնում էին ազգաբնակչությունից գանձվող հարկերն ու տուրքերը: Սարդասիրական բնույթի այս իրավական ակտերը կատարվում էին աշխարհիկ և հոգևոր առաջնորդների համաձայնությամբ և համատեղ ջանքերով: Անիի վիճազներից մեկում հիշատակված է, որ քաղաքի ավագանին, նկատի ունենալով «**դժուարութիւն քաղաքիս**», վերացնում է «**գամենայն հարկապահանջութիւն**» (ամուն առ անուն հիշատակվում են վերացվող հարկերն ու տուրքերը):<sup>362</sup> Նույն քաղաքի մեծահարուստներից մեկը «**բաժարար**» Սարգիս Ծիլենցը, վերացնում է Արջոռառիճի Ս. Գրիգոր եկեղեցու սպասավորներից գանձվող «**մեծ ու փոքր**» բաժերը:<sup>363</sup> Նույն կերպ է վարվում Անիի արքեպիսկոպոս տեր-Գրիգորը՝ Ապուղամը իշխանի որդին:<sup>364</sup> Աթաբեկ Շահնշահի «**զուգակից**» խուանդզեն վերացնում է անասնահարկը (էշերի և կովերի տերերից գանձվող):<sup>365</sup> Իվանեի որդի Ադրուղան Մեծն Ջաքարեի ծոռը, գիտակցելով, որ «**շատ հարկ էր ի վերայ**» (*անեցիներ*) դրած, վերացնում է դրանցից երեքը:<sup>366</sup> Արբուղայի հրամանով ապահարկվում են Անիի ջրադացները:<sup>367</sup> Հարկերից ժողովրդին ազատում է «**Պապքանի որդի Գեշը**»:<sup>368</sup> Անիի կառավարիչ Բագրատ Վիկացին ավագանու հետ միասին կարգավորել է գանձվող հարկերի չափաբաժինը:<sup>369</sup> Նվազեցվում է ջրօգտագործման համար «**ավգան**» կամ «**արգան**» կոչվող տուրքը:<sup>370</sup> Հանվանք նշվում են վերացվող հարկատեսակները:<sup>371</sup>

Նվիրատվական կամ այլ իրավական գործողություններ արտացոլող արձանագրությունները մեծ մասամբ սկսվում են հայոց թվականով՝ «**Ի թուին Հայոց...**», «**Ի թագաւորութեան**» կամ «**Յիշխանութեան**» (նահանգիս կամ գաւառիս), առավելապես Աստու անվան հիշատակությամբ – «**Անուամբն Աստուծոյ**», «**Կաման Աստուծոյ**», «**Յանուն Աստուծոյ**», «**Շնորհիւն Աստուծոյ**» և կամ «**Ի հայրապետութեան...**», «**Յանուն Ս. երրորդութեան**» և նմանատիպ բանաձևումներով: Կալվածագրային բնույթի արձանագրությունները մասն սկսվում են «**Կամ եղև ինձ...**» «**Այս իմ գիր է**» կամ «**Այս մեր գիր է**» կաղապարային կապակցություններով: Իրավական բովանդակություն ունեցող վիճազերը մատենագրական և վիճազրական սկզբնաղբյուրներում կոչվել են «**Գիր վճռի**», «**Պայման վճռի**»,

«**Արձան վճռի**», «**Արձան յիշատակի**» և համանման խորագրերով: Հատուցման բանաձևը կազմվում է (նվիրատվական բովանդակության վիճազերում) երկուստեք համաձայնությամբ, սահմանվում են հիշատակի կայուն օրեր և պատարագներ, որոնց քանակը պայմանավորված է լինում նվիրատուի առատ վարձատրությամբ:<sup>372</sup>

Չնայած մատեններում ինչպես մտ. վիճակն քննարկում էր, այնպես էլ

## 5. ԿՐՈՆԱ-ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպես են կոչվում այն վիճազերը, որոնք արտացոլում են քաղվածքներ Ս. Գրքից, առավելապես Ավետարանից կամ Սաղմոսագրքից: Այս արձանագրությունները փորագրվում են պաշտամունքային օջախների պատերին և առանձին կոթողային հուշարձանների վրա: Իրենց բովանդակությամբ դրանք ծոներ և թախանձանք են առ Աստված, հիմներ առ Բարձրյալն, խոհա-փիլիսոփայական դրույթներ մարդկային կյանքի հավերժականության մասին:

Ղրիմի Թեոդոսիա քաղաքի Ս.Սարգսի եկեղեցու շքամուտքի բարավորից վեր մարմարակերտ սալաքարին փորագրված է Թագավորաց 4-րդ գրքի Ը զլխի հետևյալ հատվածը:<sup>373</sup>

«**Եւ արդ, Տէր, եղիցին աչք թո բաց եւ ականջք թո առ ի լսել զպաղատանս ժողովրդեան թո ի տեղուջս յայսմ**»: «**Ըստ գործոց ձերոց ելիցին ձեզ**» — կարդում ենք մեկ այլ վիճազում,<sup>374</sup> որ մեջբերված է Պողոս Առաքյալի առ Կորնթացիս հղված Բ Թղթից:<sup>375</sup> Վիճազերում խոսվում է առաքինության հասնելու, մարդկային բարվոք կյանք ստեղծելու նախապայմանների մասին, «**Երբ բանքն սպառին եւ գործքն թագաւորէն**»: <sup>376</sup> Ներկայացված է հավերժության գաղափարը. «**Մահկանացու ծնեալ, անմահ զիրն յիշատակ եթող**»:<sup>377</sup> Մեջբերումներ կան առաքյալների և մարգարեների ասույթներից.

«**Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ եւ հաւատայ այնմ որ առաքեացն զիմ ընդունի զկեանս յաւիտենական եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս**» (Յովհ. Ե, 24):<sup>378</sup>

«**Ամէն ամէն ասեմ ձեզ, եթե ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ**» (Յովհ. ԺԲ, ԻԴ):<sup>379</sup>

Կրոնա-բարոյախոսական թեմաներով բազմաթիվ արձանագրություններ կան պաշտամունքային կառույցների ներգմբեթային քիվերին՝ շրճանաձև.

«**Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բռնաւորք եւ ես հանգուցից զձեզ**»:<sup>380</sup>

Իրենց հարկաբերական խնամակարգում հիմնականում վերացնում են հարկաբերական և հրատարակել է մեծախնայ Գ. Գրիգորի և Գրիգորի վիճազները սահմանափակում արտատրամիտ



կամ «Պրակտիկայի մանկատանի» «Կրթությանը մարտի», «Հոգնվե՛ք մարդկա՛ն»:

«Թոյլ տուք մանկատուրդ գալ առ իս եւ մի արգելուք զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ» (Սբ Դուկասու Գլ. ԺԸ):<sup>361</sup>

Մի շարք արձանագրություններում փորագրիչները հայցում են Տիրոջ օգնությունը. «Տէր իմ Աստուած օգնեայ»<sup>362</sup> նաև իրենց իշխանների համար. «Տէլէր Աստուած Յիսուս Քրիստոս աւագնէ Բիրթէլին (Բուրթելին), Բէշքեմին եւ Իւանէի»:<sup>363</sup>

Վիճազերում խոսվում է կյանքի անցողիկ լինելու և հոգու անմահության մասին.

«Որպիսի ինչ իցեն կեանք ծեր, զի իբր զմրորիկ էք, որ առ սակաւ մի երեւեալ եւ ապա ապականեալ» (Յակոբայ Թուղթ Դ, 14/15):<sup>364</sup>

Ինչպես նշեցինք, վիճազերում կան քաղվածքներ Սաղմոսից.

«Տէր լոյս իմ եւ կեանք իմ,  
ես յունմէ երկեայց,  
Տէր ապաւեն կենաց իմոց,  
ես յունմէ դողացայց: (Սաղմոս ԻԶ):<sup>365</sup>

Հիշատակագրային բնագրերում հանգուցյալները Տիրոջն աղերսում են խաղաղությամբ ընդունել իրենց հոգին և հովանավորել Մեծ դատաստանի ժամանակ.

«Տէր, ընկալ զհոգի իմ խաղաղութեամբ»,<sup>366</sup> կամ «Տէր ընդ հովանեալ քեւոց քոց հանգեայց»:<sup>367</sup>

Խառն բովանդակության կոչվում են այն արձանագրությունները, որոնցում առկա են հիշատակագրային, շինարարական, նվիրատվական իրավականոնական և կրոնա-բարոյախոսական բնույթի տեղեկություններ, որոնք հանդես են գալիս տրամաբանական սերտ կապակցությամբ՝ կազմելով մեկ բնագրային ամբողջություն:

Նման բնագրերը համեմատաբար ծավալուն են և փորագրվում են գերազանցապես մայրավանքերի և տոհմական եկեղեցիների պատերի տեսանելի մասերին:

Վերջին քանիստ հիշատակագրային արձանագրություններում հանդես են գալիս «Կրթությանը մարտի» և «Հոգնվե՛ք մարդկա՛ն» խոսքերը: «Մանուկ մատուցուի» (ԳԺ Բարդուհանի Կրթությանը մարտի) և «Հոգնվե՛ք մարդկա՛ն» (ԳԺ Բարդուհանի Կրթությանը մարտի) խոսքերը հիշատակագրային արձանագրություններում հանդես են գալիս «Կրթությանը մարտի» և «Հոգնվե՛ք մարդկա՛ն» խոսքերի հետ միասին:

Իրականում բովանդակություն ամբողջ վիճազերը մտնում են գրականության մեջ:

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԱԳՐՈՒՄԸ

Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան  
Մովսէս Խորենացի

Չեռագիր մատյաններում, ինչպես նաև վիճական բնագրերում թվագրությունը կատարվել է գերազանցապես Մեսրոպյան այբուբենի հիման վրա: Յուրաքանչյուր տառ ունի իր թվական արժեքը.

Ա - 1	Ժ - 10	Ճ - 100	Ռ - 1000
Բ - 2	Ի - 20	Ս - 200	Ս - 2000
Գ - 3	Լ - 30	Յ - 300	Վ - 3000
Դ - 4	Խ - 40	Ն - 400	Տ - 4000
Ե - 5	Ծ - 50	Շ - 500	Ր - 5000
Զ - 6	Կ - 60	Ո - 600	Ց - 6000
Է - 7	Ղ - 70	Չ - 700	Ի - 7000
Ը - 8	Ջ - 80	Պ - 800	Փ - 8000
Թ - 9	Ղ - 90	Ջ - 900	Ք - 9000

Ինչպես տեսնում ենք, այդուսակում բացակայում են օ և ֆ տառերը, որոնք հետագա ներմուծումներ են:

Մեսրոպյա (քրիստոնեական) թվականը ստանալու համար հայոց թվականությանը ավելացնում ենք 551, սակավ դեպքերում նաև 552 կամ 553, որն ընդունված է կոչել հայոց Մեծ թվական: Օրինակ՝ արձանագրությունը կազմված է հայոց :ՆՂԵ: թվականին (495-ին), սրան ավելացնում ենք 551 և ստանում ենք մեսրոպյա (քրիստոնեական) թվականը՝ 495+551=1046:

Ուրեմն, արձանագրությունը փորագրվել է Քրիստոսի ծննդյան 1046 թվականին:

Թվականություն արտահայտող տառերը, իբրև կանոն, երկու կողմերից վերցվում են միջակետերի, վերջակետերի երբեմն նաև երեքական կետերի մեջ՝ .LL., :ZL., :LF: և այլն: Մեզ հետաքրքրող տառերի վերևում երբեմն դրվում է հորիզոնական գծիկ՝ հապավման նշան (:ՊԵ:):

Կիրառվել են քանակական, դասական, հետսագույն շրջանում նաև կոտորակային թվականներ:

6-րդ դարով է թվագրվում Երուսաղեմի Չիթենյաց լեռան վրա գտնվող ռուսաց եկեղեցու հիմքից հայտնաբերված խճանկարի արձանագրությունը, որը հմտորեն վերծանել և հրատարակել է մեծանուն Գ. Յովսեփյանը:<sup>368</sup> 7-րդ դարից սկսած՝ վիճազերն աստիճանաբար առատանում են: Մինչև օրս էջմիածնում,



Հոփսիսիմեի տաճարի վրա պահպանվել է Կոմիտաս կաթողիկոսի 618-թով թվագրվող շինարարական արձանագրությունը:<sup>389</sup>

# Ե Ս Կ Ո Մ Դ Ա Ս Ե Կ Ե Դ Ե Ց Ա Դ Ա Ն Ս Ը Բ Ո Յ Հ Ո Ւ Ի Փ Ի Լ Ե Ի Կ Ո Չ Ե Ց Ա Յ Յ Ա Թ Ո Ռ Ս Բ Ո Յ Ն Գ Ի Է Գ Ո Ր Ի Շ Ի Ն Ե Ց Ի Չ Դ Ա Ճ Ա Ր Ս Բ Ո Յ Վ Կ Ա Յ Ի Ց Ս Ի Ի

9-րդ դարից հուշակոթողները վիճագրվում են զանգվածաբար (հիշենք իշխան Գրիգոր Ատրներսեհյանի 881 թ. խաչքարի արձանագրությունը Սողքի (Վարդենիսի) Մեծ Մասրիկ գյուղում և այլն):<sup>390</sup> Հնագույն արձանագրություններից կարելի է հիշատակել Թալինի մայր եկեղեցու հայոց ՍԼԲ (232 + 551 = 783), թվականին բնագիրը, ուր հիշատակվում է Ուխտատուր վանականի և նրա եղբոր կողմից աղբյուրներ անցկացնելու մասին:<sup>391</sup>

Երբեմն թվագրությունը կատարվում է ոչ ավանդական-դասական եղանակով, այսինքն՝ մեկ տառի թվական արժեքի փոխարեն գրվում են երկու տառեր, ըստ որում հարյուրավորից առաջ դրվում է միավորը: Օրինակ՝ ՌՉԽԴ (1744) գրելու փոխարեն գրում են ՌԵԽԴ (1000 + 7 x 100 = 1700 + 44 = 1744):<sup>392</sup> Եւոյն կերպ ՌՄԼԱ (1231)-ի տեղ գործածված է ՌԲԸԼԱ: Այսինքն՝ Մ-ի (200)-ի փոխարեն գրել են ԲԵ (2 x 100) և գումարել ԼԱ (31), որ նույնպես ստացվում է 1782՝ 551 գումարելուց հետո:<sup>393</sup> Թվագրության այս ձևը հանդիպում է 9-րդ դարից,<sup>394</sup> իսկ առավել զանգվածաբար՝ 17-18-րդ դարերից:

Վայոց ձորի արձանագրություններից մեկը թվագրված է ՇԵԽԹ,<sup>395</sup> այսինքն՝ 500 + 100 + 49, փոխանակ գրելու ՈԽԹ (649 + 551 = 1200): Թվագրողները կարող էին գրել նաև ԵԵԽԹ, այսինքն՝ 5 x 100 + 49, սակայն այս դեպքում կստացվեր 549 և ոչ՝ 649:

Բանաստեղծական կաղապար ունեցող վիճագրերում թիվ արտահայտող տառերը կարող են գրվել իրարից հեռու՝ հանգավորման ուղիքը պահպանելու նպատակով: Օրինակ՝ Ուկրահնայի Յազլովեց քաղաքի հայոց եկեղեցու շինարարական վիճագրում կարդում ենք.

«...Կատարեցաւ Ռ թվին մախլապատ յիժօր մախաճորիդ  
Եւ Յ ընդ նմին»

այսինքն՝ տաճարը կառուցվել է հայոց Ռ (1000) և Յ (70) թվականին. 1000 + 70 + 551 = 1621 թ.:<sup>396</sup> Երբեմն հարյուրավորն ու տասնավորը գրվում են միասին, իսկ միավորը առանձին կամ եւ շղկապով: Օրինակ՝ Վանստանի Խոսրովանույշ թագուհու արձանագրությունը թվագրված է «ՆՅ Եւ Ը թուին»:<sup>397</sup> Այս պարագայում ՆՅ-ն (470-ը) գումարելով Ը (8)-ին և ավելացնելով 551՝ ստանում ենք

1029: Ցաղաց քարի Ա.Հովհաննես եկեղեցու վիճագրերից մեկը փորագրված է հայոց «:ՆԴ: (490) Եւ :Ժ: (10) թվին», որ ամուսն է 500, փոխանակ գրելու Շ (500) թվին:<sup>398</sup> Սա նշանավոր Հայր Վարդիկի շինարարական արձանագրությունն է, որ փորագրված է մերօրյա 1051 թվականին: Սևանի Առաքելոց վանքի դռան վրա փորագրվել է, որ այն պատրաստվել է «Ձ (900) Հա յոց թվ [ա] կանի ԼԵ (35) թիւ աւելի»՝ ժամանակ, այսինքն՝ 1486 թվականին:<sup>399</sup> Տապանաքարերից մեկի վրա թվագրված է «Ձ (900) Հալլոց թւին ՂԱ (91) աւելլլ որդին...»:<sup>400</sup> 991-ին գումարելով 551, կտանանք 1542,<sup>401</sup> փորագրության մերօրյա ժամանակը:

Ակզբնաղբյուրներում թվագրությունը կոչվել է Հայկական (Հայոց), Արամեան,<sup>402</sup> Ասքանագեան, Հայկագեան,<sup>403</sup> Երբեմն՝ Արաջտության կամ Մարդեղութեան,<sup>404</sup> Քրոնիկոնի և Հռոմեական հոբելյաններով:<sup>405</sup>

Օրինակ՝ Տաթևի վանքի արձանագրություններից մեկում կարդում ենք, որ երկհարկանի Ա. Ասովածածին եկեղեցին կառուցվել է՝

«Ի ՇՐՋԱԳԱՅՅՈՒԹԵԱՆ ՏՈՄԱՐԻ ՂԱՅԿԱԿԱՆ :Ժ: ԻՑ ՅՈՐԵՂԻԱՅ ԵՒ :Լ: ԵՒ :Ձ: ԹՎՈՑ...»<sup>406</sup>

Յուրաքանչյուր հոբելյան, ինչպես հայտնի է, հավասար է 50 տարվա. :Ժ: (10) հոբելյանը հավասար է 500-ի: Սրան գումարում ենք հայոց :Լ: (30) և :Ձ: (6) թվերը և ստանում 536, որին ավելացնում ենք 551 և որոշում տաճարի կառուցման ավարտի տարին՝ 500 + 30 + 6 + 551 = 1087:

Ուրեմն՝ հիշյալ եկեղեցին կառուցվել է 1087 թվականին:<sup>407</sup>

Մեկ այլ օրինակ՝ Ջմյուռնիայից Հայաստան բերված եկեղեցական վարագույրը պատրաստվել է «ԻԳ (23) ՈՐԵԼԵՆԻ ԻԲ (22) ԹԻԻ ՀԱՐԱՎՈՐԻ...» ժամանակ: Այստեղ նույնպես կատարում ենք բազմապատկման և գումարման գործողություններ. ԻԳ (23) հոբելյանը բազմապատկելով 50-ով՝ ստանում ենք 1150 (23 անգամ 50), որին գումարում ենք ԻԲ (22) և հայկական տոմարի 551 թիվը. 23 x 50 + 22 + 551 = 1723: Ուրեմն, հիշյալ վարագույրը պատրաստվել է 1723 թվականին Ջմյուռնիայի հոգևոր առաջնորդ Մանուել վարդապետի օրոք կամ նրա անմիջական մասնակցությամբ:<sup>408</sup>

Մեզ հասած հնագույն վիճական բնագիրը Տեկոթի տաճարի ավագ դռան արձանագրությունն է, որի գիպսե կրկնօրինակը ցուցադրվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Այն վերծանել և գիտական շրջանառության մեջ է դրել պրոֆեսոր Կ.Գ. Ղաֆադարյանը:<sup>409</sup>

Որոշ արձանագրություններում թվականը տրվում է բացված տեսքով: Օրինակ՝ ՌԵՀԳ-ի՝ այսինքն 1173-ի փոխարեն գրվում է տառերով.

«...Հազար հարիւր եօթանասնի

Այսինքն՝ 1173-ին գումարում ենք 551 և ստանում շինարարության ավարտի թվականը՝ Ռ (1000) + Ե (100) + Հ (70) + Գ (3) + 551 = 1724: Հետևաբար, արձա-



նագրությունը փորագրվել է 1724 թվականին:<sup>410</sup>

Արձանագրությունները թվագրվում են միաժամանակ և Փրկչականով, և Հայոց թվականով:

Օրինակ՝ Ղրիմի Ս. Խաչ վանքի շինարարական արձանագրության մեջ տրված է Փրկչական թվականը.

«...Ի ծննդեմ մարմնով Փրկչիմ  
Յերեք հարիւր եւ հազարիմ,  
Յուր եւ յիսուն սկսեալ ամին»:<sup>411</sup>

Այսինքն՝ Ս. Խաչ վանքի Ս. Նշան եկեղեցու շինարարության (կամ վերանորոգման) ավարտը եղել է 1358 թվականը: Ինչպես նշեցինք, որոշ արձանագրություններ ունեն և Փրկչական, և Հայոց թվականներ: Օրինակ՝ նույն Ս. Խաչի վերանորոգման արձանագրություններից մեկում կարդում ենք, որ Ս. Խաչը նորոգվել է 1751 թվականին.

«...Եղել ներթվոջ Փրկչիցիմ մերոյ 1751, իսկ ըստ Հայոց ՈՍ»:<sup>412</sup>

Հետագայում արձանագրություններում նույնպես նկատում ենք կրկնակի թվագրությունը: Օրինակ՝ Կրեմլի Ջինապալատի արձանագրություններից մեկը թվագրված է 1818-ով, սակայն նրան զուգահեռ տրված է նաև հիջրային թվականը,<sup>413</sup> իսկ, որ նույնպես նշանակում է 1818: Մի շարք վիճաբերում տրված են (թվականի հետ միասին) ամիսն ու ամսաթիվը և նույնիսկ շաբաթները:<sup>414</sup>

## ԱՆԹՎԱԿԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անթվակիր արձանագրությունների ժամանակը որոշվում է պատմական անձերի և իրադարձությունների հիշատակությունների միջոցով:

Օրինակ՝ Բուտ Սահառունու արձանագրության համաձայն Բագարանի եկեղեցին կառուցվել է «Երեսուն եւ չորրորդ ամի Խոսրովայ արքայլի...»:<sup>415</sup> Պատմությունից հայտնի է, որ Խոսրով Փարվեզը գահ է բարձրացել 590 թվականին:<sup>416</sup> Ղրան գումարում ենք 34 և ստանում 624, ուրեմն արձանագրությունը փորագրվել է 624 թվականին: Այս արձանագրության նմանակությամբ է փորագրվել Բագավանինը, որի տաճարի շինարարությունն սկսվել է «քսան եւ մի ամսույն ԱՄապահ Երակղի թագաւորի...» և ավարտին է հասցվել «ի քսան եւ իններորդ ամի նոյն Երակղի թագաւորի, յամսեանն նաւասարդի»:<sup>417</sup> Ուրեմն շինարարությունն սկսվել է 631-ին և ավարտվել 639-ին: Նույնը կարելի է ասել էջմիածնի Հռիփսիմեի տաճարի կառուցման մասին:<sup>418</sup>

Անթվակիր արձանագրությունների փորագրության ժամանակը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել կառույցների հորինվածքային առանձնահատկությունները, ճարտարապետական մանրամասները, բնագրի տառերի հնագրական պատկերը: Ընթերցողը պետք է իմանա, թե ինչ փոփոխություններ են կրել դարերի ընթացքում Մետրոպոլիսի այբուբենի առանձին տառատեսակները հնագույն ժամանակներից ընդհուպ մինչև ուշ միջնադար:

Անթվակիր բազմաթիվ արձանագրություններ կան միջնադարյան վանքերի իշխանական դամբարանատներում. օրինակ՝ Սյունյաց իշխանագուհիների տապանաքարերին փորագրված է հանգուցյալի միայն անունը՝ Աշոտ, Դիմար, Ջևանշեր և այլն: Ինչպե՞ս որոշել նրանց վախճանվելու ժամանակը և ինքնությունը: Այստեղ վերծանողին մեծապես օգնում են մատենագրական և վիճազրական սկզբնաղբյուրները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Աշոտը եղել է Սյունիքի իշխանաց իշխան, Վասակ թագավորի քեռայրը, Սմբատ և Գրիգոր Սյունյաց թագավորների հարազատ հայրը և այլն, Դիմարը՝ Հյուսիսային Հայաստանի թագավորագն Գուրգենի քույրը, Ատրներսեի իշխանի կինը, իսկ Ջևանշերը՝ Չազիկ մեծ իշխանի որդին, կաթողիկոս Վահան Սյունեցու հայրը և այսպես շարունակ:

Սյունյաց Սմբատ Բ (1040-1051) և Գրիգոր Ա (1051-1072) թագավորների կողքին հանգում է Հրանույշ (բնագրում՝ **Հրանոշ**) անվամբ մի կին:

Սյունիքում Հրանույշ անունով իշխանուհի գոյություն չի ունեցել (զոմե մեզ հայտնի չէ): Պարզվում է, որ Հրանույշ թագուհի եղել է Հյուսիսային Հայաստանում և հիշատակվում է Սանահնի վանքի 1063 թ. շինարարական արձանագրության մեջ,<sup>419</sup> իբրև զրատան (նշխարատան) կառուցող: Սակայն ինչ կապ ունի Վահանավանքի **Հրանոշը** Սանահնի վանքի Հրանույշի հետ: Այստեղ մեզ օգնում է պատմական անդրադարձը: Հայտնի է, որ 1040 թ. Դվինի ամիրա Աբուլ-լ-Ասվարը մեծաթիվ զորքով հարձակվում է Տաշիր-Չորագետի թագավոր Դավիթ Անհողիմի վրա: Վերջինիս, ի թիվս այլոց, օգնության է գալիս նաև Սյունիքի թագավոր Սմբատ Բ նորընծա թագավորը:<sup>420</sup> Պատերազմի հաղթական ավարտից հետո, ամենայն հավանականությամբ, Սմբատն ամուսնանում է Դավիթ Անհողիմի դուստր Հրանույշի հետ և բերում է Կապան:

Այս վարկածն ամրապնդվում է այն իրողությամբ, որ թագուհի կարող էր կոչվել թագավորի կինը և ոչ՝ դուստրը, եթե մեկ այլ գահակալի կին չէր: 1063 թ. արձանագրության մեջ Հրանույշն իրեն կոչում է «**թագուհի**»: Նա Սանահնի վանքում թաղված չէ, ուրեմն՝ Դավիթ Անհողիմի դուստր Հրանույշը թաղված է Վահանավանքում՝ իր ամուսնու՝ Սմբատ Բ Սյունյաց թագավորի կողքին:



# ՎԻՄԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծածկագրությունը (հունարեն կրիպտոգրաֆիա-կրիպտոս՝ գաղտնի, գրաֆիա - գրություն) վկայված է տարբեր ժողովուրդների գրավոր հուշարձաններում: Ռուսական աղբյուրներում կոչվել է табарская грамота или литорея:<sup>421</sup> Հայկական ծածկագրության հարցերին տարբեր առիթներով անդրադարձել են Գ. Տաշյանը, Ս. Տեր-Ավետիսյանը, Բ. Սարգիսյանը, Ն. Պողարյանը, Բ. Կյուլեսե-րյանը, Մ. Բրոսսեն, Գ. Տեր, Սկրտչյանը, Երվ. Լալայանը, Լ. Խաչիկյանը, Կ. Ղաֆադարյանը, Պ. Մուրադյանը,<sup>422</sup> Ս. Սաղունյանը և ուրիշներ: Սակայն հիշատակված գիտնականներից առավել հանգամանալից և ծավալուն ուսումնասիրություն է գրել հմուտ աղբյուրագետ պրոֆեսոր Ա. Գ. Աբրահամյանը:<sup>423</sup>

Գրքում ամփոփված 400 ծածկագրերից 300-ը վերծանվել են նրա ջանքերով:

Ա. Աբրահամյանը հայկական ծածկագրերն ըստ բնույթի բաժանում է չորս հիմնական խմբերի՝

1. Բաղաբական,
2. Արհեստագործական,
3. Գրչածածուկ,
4. Առեղծվածային (առեղծվածագիր):<sup>424</sup>

Առավել շատ են (չուրք 50) գրչածածուկ կոչվող գաղտնագրերը (գրիչների ծածկագրերը), որոնք ներկայացված են եղբայրագիր, փոխարինագիր, գունարգիր, կետագիր, շրջագիր, ակրոստիքագիր և այլ ծածկագրերով: Բազմաթիվ են նաև սյունակետագրերը, ինչպես նաև խառնագրերը, կազմված հունարեն, արաբերեն և հայերեն տառերի միակցմամբ:

Երկլեզվյան (հայերեն և հունարեն) ծածկագիր ունի Ավանից Հայաստանի պատմության պետական թանգարան տեղափոխված օրորոցածև տապանաքարը: Արձանագրությունը դեռևս 1945 թ. հնտորեն վերծանել և գիտական շրջանառության մեջ է դրել երջանկահիշատակ պրոֆեսոր Կ. Գ. Ղաֆադարյանը:<sup>425</sup> Ծածկագրի ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ Մեսրոպյան այբուբենի տասնավորների փոխարեն օգտագործված են հարյուրավորները, հազարավորների տեղ՝ միավորները և հակառակն:

Արձանագրության պատկերը հետևյալն է՝

**ՏՐ ԵՁՐ ԶՈԼԿԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՇՄԱՐԻՏ ΔΞΑΘΕΤ ΨΘΞΖ ՍԱՄԵՂ ՇՈՒՈՒ Զ:**

Ինչպես տեսնում ենք, Հ(70) Ա(1) Յ(300) Ո(600) Ց(6000)-ի փոխարեն ծածկագրված է Չ(700) Ո(1000) Լ(30) Կ(60) Զ(6): Նույն սկզբունքով է ծածկագրված **ԾԱՌԱՅ** բառը: Ա տառի փոխարեն ծածկագրված է 4-րդ սյունակի Ռ հազարավորը այսինքն՝ Ա>Ռ, Ռ>Ա հարաբերությամբ:

Հունարեն բառերի թարգմանությամբ պրոֆ. Կ. Ղաֆադարյանը վերծանել է.

«ՏԼԵՂ ԵՁՐ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՇՄԱՐԻՏ ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ. ՍԱՄԵՂ ԾԱՌԱՅ ՔԼՐԻՍՏՈՍԻ»:<sup>426</sup>

1. ԵՂԲԱՅՐԱԳԻՐ է կոչվում ծածկագրության այն տեսակը, երբ նշված տառի փոխարեն կարդում ենք նախորդ կամ հաջորդ տառը: Օրինակ՝

ՄԵԼ ԻՔՍԷԹ:

Սանահնի վանքի գրատան պատի անկյան վրա փորագրված է եղբայրագիր հետևյալ ծածկագրությունը.

**Ր Տ Վ Բ Տ Դ Լ Վ Խ Բ Ջ Բ Ն Ն Վ Լ Փ Վ Լ**, որը կարդացվում է.





**ՏՐ Ս Ա Ր Գ Ի Ս Ծ Ա Ռ Ա Յ Յ Լ Ի ՍՈՒՄ Ի Ք Լ Ր Ի ՍՈ Ս Ի**:<sup>427</sup>

Արժվանիկ գյուղի (Սյունիքի մարզի Կապանի ենթամարզ) 10-11-րդ դդ. ծածկագրությունը հնտորեն վերծանել են Ա. Գ. Աբրահամյանն ու Ա. Ն. Շահինյանը:<sup>428</sup>

2. ՍՅՈՒՆԱԿԵՏԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐԸ կազմվում է մեկից մինչև չորս սյուների և մեկից մինչև ինը կետերի միջոցով: Այս ծածկագրի բանալին է՝

- I (մեկ սյուն) - միավոր
- II (երկու սյուն) - տասնավոր
- III (երեք սյուն) - հարյուրավոր
- IIII (չորս սյուն) - հազարավոր:

Այս սյուներին կից կետերով ավելացնում ենք Մեսրոպյան այբուբենի առանձին տառերի թվական արժեքները, առանց գրելու, մտովի: Օրինակ՝

 - Գագիկ  
 - Հայաստան  
 - Անդրանիկ  
 - Հայտնագործել և այլն:

Վերծանողը պետք է իմանա, որ դիցուք, ՀԱՅԱՍՏԱՆ բառում Հ տառը երկրորդ սյունակի 7-րդ տառն է, հետևաբար պետք է գրենք երկու սյուն և յոթ կետ՝ II: Կ-ն միավորների առաջին տառն է, ուստի անհրաժեշտ է գրել մեկ սյուն և մեկ կետ՝ I, Յ-ն հարյուրավորների երրորդ տառն է, ուրեմն գրելու ենք երեք սյուն և երեք կետ III: և այսպես շարունակ:

Ի դեպ, սյունակետագիր ծածկագրի նմուշ կա Արժվանիկի վիճագիր ծածկագրում:

Ստույգ վերծանելու առաջին նախապայմանը Մեսրոպյան այբուբենի անթերի իմացությունն է:

3. ԹՎԱԳԻՐ կոչվում է գաղտնագրության այն տեսակը, երբ յուրաքանչյուր ՀԱՅԱՍՏԱՆ նառանարհ՝ ԱՐՏԱՇԵՍ սմչարդիլ յանդիՕ յուն ծախջղ մն նարի



տառի փոխարեն գրվում է նրա թվական արժեքը: Օրինակ՝  
Քաջիկ - 9000 1 900 20 60  
Հասմիկ - 70 1 2000 200 20 60  
Արտաշես - 1 5000 4000 1 500 5 2000 և այլն:

Ինչպես քանիցս նշել ենք Մեսրոպյան այբուբենում բացակայում են օ և ֆ տառերը: Օ-ի փոխարեն գրվել է Ա՛ երկբարբառը, որը բաղաձայնից առաջ կարողացվել է Օ (չնչին բացառությամբ), իսկ Ֆ-ի փոխարեն՝ Փ: Այս մասին մանրամասն խոսել ենք «Ա» երկբարբառի արտասանությունը» բաժնում:

**4. ԳՈՒՄԱՐԳԻՐ** ծածկագիրը լայն կիրառում ունեցավ XVIII-XIX դարերում հայ գաղթօջախներում: Ղրիմի Ս. Խաչ վանքի սեղանատան ավագանի այժմ չպահպանված սալաքարին փորագրված է եղել ռիթմիկ արձանագրություն, որն ավարտվում է հետևյալ քառյակով.

*«Եղ յիշատակ յիշել զհոգին  
Վանցույ կնոջ Սարիամին,  
Կշռածի եմ թվով Փրկչին  
Եւ սեպտեմբեր ամսոյ քսանին».*<sup>429</sup>

Վերջին երկու տողը վիճագրության թվականն է՝  
Կ (60) + Շ (500) + Ո (1000) + Ա (1) + Ծ (50) + Ի (20) + Ե (5) + Մ (200): Տառերի թվական արժեքները գումարում ենք և ստանում 1836: Այստեղ չենք գումարում 551, քանի որ արձանագրությունը ժամանակագրված է փրկչական թվով («**թվով Փրկչին**»):

Գումարգիր ծածկագրության հետաքրքիր նմուշ է նաև Թեոդոսիայի (Ղրիմ) հայոց Ս. Հրեշտակապետաց եկեղեցու տապանաքարերից մեկի չափածո հիշատակագրությունը, որն ավարտվում է հետևյալ տողերով.

*«...Տէրն տացէ ինձ վերնոն դաս.  
Ճանաչ թվոյս ի բաց հացես  
Զվեց եւ տասնեալին...»*<sup>430</sup>

Վերջին երկու տողը նույնպես գումարգիր ծածկագրություն է.  
Ե (100) + Ա (1) + Ն (400) + Ա (1) + Զ (700) - 23 (զվեց և տասնեալին), ստանում ենք 1179, սրան գումարում ենք 551 և ունենում ենք արձանագրության ստույգ թվականը, այն է 1730:<sup>431</sup>

Մեկ այլ օրինակ՝

*«...Ի թվականութեան Փրկչին մերոյ տես ըզնոյն Հայոցս...».*<sup>432</sup>

Այստեղ նույնպես գումարգիր ծածկագիր է. Ը ԸՆՆՈՅՆ բառը, որը նույն սկզբունքով վերծանվում է՝ Ը (8) + Զ (6) + Ն (400) + Ո (600) + Յ (300) + Ն (400): Այս բոլորը գումարելով՝ ստանում ենք փրկչական 1714 թվականը:

**5. ՇՐՋԱԳԻՐ** ծածկագիր կոչվում է այն գաղտնագրությունը, երբ տառերը գրվում են շրջված ձևով: Օրինակ՝ Արտաշես **ՍԺՃԱԶՂՄ**, Հայաստան **ՄԱՅՄԱՅՄԲ**

իշխանություն **ՄԻՈՅԵՂՈՄԱՄԵՃԻ** և այլն:

Շրջագիր ծածկագրի հետաքրքիր նմուշ ենք տեսնում Հայաստանի պատմության թանգարանում ցուցադրվող թևավոր խաչքարի վրա, որը բերված է Պոռշյան իշխանների վայոցձորյան տիրույթներից:

Շրջագիր ծածկագրերն ընթերցվում են հայելու կամ արտացոլող այլ առարկայի միջոցով:

**6. ՓՈՆԱՐԻՆԱԳԻՐ** ծածկագիրը փաստորեն նույն եղբայրագիրն է, սակայն այն տարբերությամբ, որ անհրաժեշտ տառի փոխարեն գրվում է նրա հաջորդը: Օրինակ՝ Արամ - գրվում է **ԲՅԲՅ**, Սողոմոն - գրվում է **ՎԶԵԶՉՉ**, Շահանդուխտ - գրվում է **ՈԲԶԲԵԶՏԾՐ** և այլն:

Ծածկագրության մի տեսակ է, երբ տառերը գրվում են զլխիվայր վիճակում:<sup>433</sup>

Ուսումնասիրողների կարծիքով՝ ծածկագրությունը, «վիճագրության ասպարեզ է թափանցել առնվազն 6-րդ դարից»:<sup>434</sup> Ի շարք այլ ծածկագրերի, առավելապես մատենագրական աղբյուրներում հանդես են գալիս **օղակավոր**, **ճիրանավոր** (**ճիրանագիր**), **կտտորակագիր** գաղտնագրերը: **Գրչածածուկ** ծածկագրերում գաղտնագրվում է գրչի անունը և գրության թվականը: Դա ուղղված է նաև գրագողության դեմ, որպիսի փաստն արձանագրված է Հովհաննես գրչի 1310 թ. բնագրում:<sup>435</sup>

**7. ԱՐՅԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ** ծածկագրերում գաղտնագրվում են օգտագործվող նյութերն ու առարկաները: Սակայն այս ծածկագրերը բացակայում են վիճագրերում. դրանք առկա են ձեռագիր մատյաններում:<sup>436</sup>









# ՔԱՐԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Աշխարհի ծայրերում բոլոր մենք գտնում ենք հիմա բեկորներ,  
Որ տաշած կողերի վրա աստղածև խազեր են կրում,—  
Արդ՝ կորած անուններն են ձեր, ով անանուն վարպետներ,  
Որ կերտել էք լուռ ու անցել - և ձեր շունչը թողել դարերում...

## Եղիշե Չարենց

Միջնադարյան հայ ճարտարապետների և քարգործ վարպետների մասին, ինչպես նշել ենք, առանձին ուսումնասիրություն է գրել ակադեմիկոս վինագրագետ-պատմաբան Ս. Գ. Բարխուդարյանը:<sup>437</sup> Ի շարս այլ հարցերի, նա հատուկ քննարկման նյութ է դարձրել շինարար վարպետների նաև պայմանական նշանները, որոնք դրոշմված են նրանց կառուցած տաճարների, կամուրջների և այլ



Սյունի վանքի (Սիսիան) վարպետների նշանները

կոթողների վրա. դրանք շրջված տառանշաններն են, աստղանիշեր կամ այլ գծապատկերներ: Այս հարցերին անդրադարձել է նաև Ստ. Մնացականյանը:<sup>438</sup> Զիմնահարցի համակողմանի քննությունը ցույց է տալիս, որ քարգործ վարպետների նշաններ կիրառվել են նաև վաղնջական ժամանակներում<sup>439</sup> և ավանդաբար դրանք փոխանցվել են հետագա դարերին: Վանի թագավորության ժամանակ գործող վարպետների մի շարք նշաններ նկատելի են նաև միջնադարյան կառույցների վրա:<sup>440</sup>

Վարպետների նշաններ ենք տեսնում Դվինի կաթողիկե եկեղեցու պատերին,<sup>441</sup> Զվարթնոց տաճարում, Տաթևի Յաքուտ կոչվող հանդամասի եկեղեցու, Սյունի վանքի (Սիսիան) պատերին և այլուր:

Միջնադարյան վինագրերում շինարար վարպետները հիշատակվել են «ճարտարապետ», «քարգործ», «կազմող», հետագայում՝ նաև «գալֆա» և «տաշճի» անուններով: Մեզ են հասել այնպիսի տաղանդաշատ ճարտարապետների ու քարգործ վարպետների անուններ, ինչպիսիք են Տրդատը,<sup>442</sup> Մանուելը,<sup>443</sup> Սամեհանը,<sup>444</sup> Վեցիկը,<sup>445</sup> Սիրանեսը,<sup>446</sup> Մոմիկը,<sup>447</sup> կազմողներ Պավղոսը, Զիրանը,<sup>448</sup> Ղարտաշը,<sup>449</sup> Շնոֆորշահը,<sup>450</sup> Ավետիքը,<sup>451</sup> Յոհանեսը,<sup>452</sup> Ներսեսը,<sup>453</sup> Չաքարիան,<sup>454</sup> Մելիքսեթը,<sup>455</sup> Ակբը,<sup>456</sup> Գրիգորիկը,<sup>457</sup> Աստուածատուրը,<sup>458</sup> հայ շինարարական արվեստի հայտնի ներկայացուցիչներ «Մինաս և Սարգիս ճարտարապետները» (Ղրիմ),<sup>459</sup> «Գալֆա Վարդանը»<sup>460</sup> (Զիշնև), «Տաշճի Կիրակոսը»<sup>461</sup> և շատ ուրիշներ,<sup>462</sup> որոնց անունները փորագրված են իրենց կերտած հուշարձանների հաճախ աննկատ մասերին:

## ՎԵՐՃԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վիմական բնագիրը գիտական արժեք է ստանում միայն այն ժամանակ, երբ վերծանությամբ հանդերձ ունենում է լուսանկար և նույնական գրչագիր:

Արձանագրությունը պետք է լուսանկարել օրվա այն ժամին, երբ արևի ճառագայթները շեղակիորեն ընկնում են տառերի վրա և նրանց ստեղծների մեջ առաջացնում սովորագծեր:

Վիմագրերը վերծանելիս կարելի է օգտագործել սրածայր փայտիկ՝ տառերի ստեղծները քարաքոսերից և կարծրացած հողից մաքրելու համար: Պետք է զգույշ լինել ճաքերի և քերծվածքների նկատմամբ: Վիմագրագետն իր հետ միշտ պետք է ունենա խոզանակ՝ քարի մակերեսը փոշուց մաքրելու և (եթե հնարավոր է) լվանալու համար: Սուր երկաթյա դանակը կամ մեխը քարի վրա խա-



գեր են առաջացնում և դժվարացնում են ընթերցումը: Երբ լույսի բացակայության պատճառով հնարավոր չէ արձանագրությունը լուսանկարել, այդ դեպքում դիմում ենք էստամպահանձան (էստամպաժի) եղանակին, այսինքն՝ արձանագրությունը կրկնօրինակում ենք հետևյալ մեխանիկական միջոցներով:

1. Հեղուկ (հալեցրած) վիճակում կաուչուկը լցնում ենք տառերի ակոսների մեջ և ծածկում նույն կաուչուկի բարակ թաղանթով. սառչելուց հետո զգուշորեն պոկում ենք քարից և ստանում բնագրի շրջագիր ստույգ պատկերը:

2. Հեղուկ (ջրիկ) գիպսը նույն եղանակով լցվում է արձանագրության մակերեսին և սառչելուց հետո առանձնացվում է: Ստացվում է շրջագիր արձանագրություն, որը մշակելուց հետո պարզորոշ ընթերցվում է:

3. Դեռևս 16-րդ դարից կիրառվել է էստամպահանումը թղթի միջոցով: Խոնավացրած թուղթը (նպատակահարմար է «ծծան թուղթը» կամ ֆիլտրի համար կիրառվողը) հպելով վացված քարի վրա՝ լաթով հավասարապես շփում ենք, որպեսզի թղթի վրա բշտիկներ չառաջանան: Չորանալուց հետո զգուշորեն անջատում ենք քարից: Գաջվածքը մշակվում է գրաֆիտով:

4. Չոր թուղթը դնում ենք քարի մակերեսին և ապա՝ թրջում: Այս դեպքում նույնպես պետք է զգուշանալ բշտիկներ գոյանալուց: Ապահով լինելու համար կարելի է օգտագործել 2-3 շերտ թուղթ: Չորանալուց հետո զատում ենք քարից և ծակելով դնում թղթապանակի մեջ:

5. Նույն կերպ կարելի է օգտագործել ֆուլգա, մատիտի փոշին (գրաֆիտ): Վերջինիս դեպքում անհրաժեշտ է ունենալ թափանցիկ թուղթ:<sup>463</sup>

Էստամպահանձան ժամանակ թույլ տված աննշան վրիպումը կարող է պատճառ դառնալ սխալ մեկնաբանությունների: Օրինակ՝ պատմական Մեծ Բուլղար քաղաքի (Թաթարստան) տարածքում հայտնաբերված արձանագրություններից մեկում էստամպաժի հիման վրա ընթերցվել է «ՏԻ ՍՈՒԹԻ» անձնանունը, սակայն իրականում բնագրում փորագրված է եղել «ՏՐԼՏ՝ ՍՈՒԹ ԼԻԻՆ» բառը, որի սխալ վերծանությունը հիմք է ծառայել այլևայլ վարկածների:

Վիճակն բնագիրը զրջագրելու համար այժմ օգտագործում ենք մի շարք արտատպող սարքեր, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վերցնում ենք սովորական մի արևի կողքից միացված էլեկտրական լամպով, վրան՝ թափանցիկ ապակի: Ապակու վրա դրվում է արձանագրության լուսանկարը՝ ամրացված կավճաթղթով կամ պատճենաթղթով: Ապա զգուշությամբ արտանկարում ենք երևացող տառերը կամ ցանկության դեպքում, նաև զարդանախշերը: Այնուհետև մատիտանկարը թանձրացնում ենք տուշով կամ այլ ներկանյութով:

Իբրև կանոն, կորպուս-ժողովածուներ կազմելու ժամանակ բոլոր բնագրերը պետք է ունենան զրջանկարներ: Այս պահանջն առավել կարևորվում է լուսանկարների բացակայության դեպքում:

## ՀԱՅ ԳԱՂՁԱՎԱՅՐԵՐԻ ՎԻՍԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բագրատունյաց թագավորության անկումից հետո (1045 թ.), երկրում ստեղծված քաղաքական ծանր պայմանների պատճառով, բազմաթիվ հայեր արտագաղթեցին մայր երկրից: Նրանց զգալի մասը, բազում զրկանքներ կրելով, հաստատվեց Ղրիմի թերակղզում, իսկ մյուսը՝ Վուլգայի ափերով բարձրանալով վեր, հանգրվանեց Մեծ Բուլղար քաղաքի տարածքում: 14-րդ դարի 30-ական թթ. սկսած՝ հայկական հոծ գաղութներ առաջացան առավելապես Ղրիմի հարավ-արևելյան ափերին: Հիմնականում Անի մայրաքաղաքից ու նրա շրջակայքից եկած հայ ազգաբնակչությունը այստեղ իր գոյությունը պահպանելու նպատակով կառուցեց ամրոցներ, հոգևոր-կրթական օջախներ, հիմնադրեց նորանոր քաղաքներ ու գյուղեր, որոնք կանգուն կամ ավերակված տեսքով հասել են մինչև մեր օրերը: Պատահական չէ, որ ջենովական աղբյուրներում Ղրիմի հարավ-արևելյան տարածքը միջին դարերում կոչվեց Armenia maritima - ծովային Հայաստան: Ղրիմի հայաշատ քաղաքներից էր Կաֆան՝ այժմյան Թեոդոսիան, որի բնակիչների գերակշիռ մասը կազմում էին հայերը: Միայն այս քաղաքում մերազնյա գաղթականները կառուցեցին 45 եկեղեցիներ, հիմնադրեցին իրենց պաշտպանական կառույցները («Հայոց բերդ»): Եկեղեցիներից յոթը առ այսօր պահպանվել են և վերանորոգվել ուկրաինացի մասնագետների ջանքերով:

1971 թ. Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցու սրահներում բացվեց խորհրդային Միության մեջ առաջին (Անիից հետո երկրորդ) **հայկական քարեդարանը (Լապիդարիում)**,<sup>464</sup> որի արձանագրությունները բնագրից ռուսերեն թարգմանվեցին տողերիս հեղինակի կողմից: Ղրիմի տարածքում հայտնաբերված շուրջ 400 արձանագրությունները,<sup>465</sup> որոնցից 306-ը թվագրված են, հիրավի, խիստ կարևոր արժեք են ներկայացնում ղրիմահայ գաղութի պատմության համար:

Հայաբնակ հոծ գաղթօջախներ առաջացան Ղրիմի Կազարաթ (այժմ՝ ավերակ), Ղարասու (այժմ՝ Բելոգորսկ), Սուրբ Խաչ-Սուրխաթ (այժմ՝ Ստարի Կրիմ), Գեոզլ (այժմ՝ Եվպատոդիա), Ազմեչիդ (այժմ՝ Սիմֆերոպոլ), Սուրոժ-Սուղեյ (այժմ՝ Սուդակ) քաղաքներում և Թոփիլի (այժմ՝ Տոպուլևկա), Բախչիլի (այժմ՝ Բոգատոյե), Մեծ և Փոքր Սալա գյուղերում և այլ բնակավայրերում:

1475 թ. թուրքերը գրավեցին Ղրիմի թերակղզին: Օգտվելով պատեհ առիթից՝ թուրքերի հորդորանքով թաթարները մզկիթների վերածեցին Կաֆայի 21 հայկական եկեղեցիները, իսկ նրանց պատերին փորագրված վիճագրությունները տեղահանվեցին և մեծ մասամբ ոչնչացվեցին:



Ղրիմահայության կրթա-մշակութային խոշոր կենտրոնը **Ս. Խաչ վանքն** էր, որն առ այսօր կանգուն վիճակում պահպանվել է Ստարի Կրիմ քաղաքի մերձակա անտառապատ սարալանջին: Ինչպես վերը նշել ենք, այս խոշոր վանական միաբանության սրբազան հայրերը, մասնավորապես Յովհաննես կրոնավորը 1358 թ. ավարտին հասցրեցին գմբեթակիր Ս. Նշան եկեղեցու կառուցումը:

Թեոդոսիան հանճարել ծովանկարիչ Յովի. Այվազովսկու ծննդավայրն է: Այստեղ են գտնվում նրա հայանպաստ գործունեությանն ամենվոր մի շարք վիճագրեր, որոնք տարիներ առաջ բացվեցին նրա պատկերասրահի պատերի ծեփի տակից: Յովի. Այվազովսկու շինարարական գործունեությանը վերաբերող մարմարակերտ վիճագրեր հայտնաբերվեցին քաղաքի հայոց Ս. Սարգիս եկեղեցու պատերին: Դրանցից մեկում կարդում ենք.

«ՏԱՃԱՐՍ Ս. ՍԱՐԳՍԻ ՎԵՐԱՆՈՐՈՎԵՑԱՒ ՅԱԵՐԱՎԱՍ ՇՆՈՐՀՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի 1888 ԱՄԻ, ՅՈՐԴՈՐԱՆՕՔ ԵՒ ՋԱՆԻՔ ԽՈՐԷՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՏԵՓԱՆԷԻ, ԱՐ ՈՐ ՆՊԱՍՏԵՑԻՆ ՀԱՅԱԶՆ ՆԿԱՐՉԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՕՎԱԿԻ, ԸՆԾԱՅՕՐՆ ՀՈՅԱԿԵՐՏ ՊԱՏԿԵՐԱՑ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՈՒՐՆ ՀԱՅՈՑ ԹԵՆՈՐԱՍԻՈՅ».<sup>466</sup>

Հայկական ծաղկուն գաղթօջախներից էր Լվով (ԼոՎ, Իլով, Լեմբերգ) քաղաքը, որի կենտրոնում առ այսօր վեր է հառնում 1363 թ. կառուցված հայոց սբանջելի եկեղեցին քառահարկ զանգակատնով (1571 թ.): Հայաստանի գիտությունների ակադեմիայի վիճագրական արշավախումբն այս տարածքից հայտնաբերել է տարբեր բովանդակության ավելի քան 100 արձանագրություններ:<sup>467</sup>

17-րդ դարի երկրորդ կեսին եպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչի և նրա համակիրների արարքի պատճառով աստիճանաբար ուժացման ենթարկվեց երբեմնի հզոր այս գաղթօջախը, որն ուներ ազգային կրթա-մշակութային հաստատություններ, հայեցի թատրոն, առևտրական-համքարային կազմակերպություններ, եվրոպայում հայտնի դեղագործական ընկերություններ: Այստեղ են ապրել ու գործել հայազգի ականավոր պատմաբան **Սադոկ Բարոնչը, քանդակագործ Թադեոս Բարոնչը**, ականավոր բժշկապետներ, դեղագործ քիմիկոսներ **Թեոդորոս և Հովսեփ Թորոսովիչները**, որոնցից առաջինը հայտնագործեց Տրուսկավեցի բուժիչ հանքաջրերը:

Լվովում և նրա շրջակայքում մի քանի տասնյակ արձանագրություններ են հայտնաբերվել լեհահայ ականավոր գործիչներ **Ավետիք Բեռնատովիչի, Կարլ Միկուլիի** և այլ հայորդիների մասին:

Հայաշատ գաղթօջախներ էին Կամենեց-Պոդոլսկը (խմելնիցկու մարզ), Յազլովցը (Տեռնոպոլի մարզ), Ակկերմանը (Օդեսայի մարզ), Կիևը և այլ քաղաքներ: Միջնադարում հայկական հոծ ազգաբնակչություն ունեին Մոլդովայի Գիրգորիոպոլ, Բելցի, Օրգեն և այլ քաղաքներ:

18-րդ դարի 70-ական թթ. վերջերին Ղրիմից Ռուսաստան գաղթած հայերի և անձամբ Հովսեփ արք. Արղությանի ջանքերով Դոն գետի ափին հիմնադրվեց Նոր Նախիջևան քաղաքը՝ մերձակա հինգ հայկական գյուղերով հանդերձ: Այս նոր հանգրվանում կառուցվեց դարձյալ **Ս. Խաչ** կոչվող վանքը, որի բակում հանգչում են Միք. Նալբանդյանը, Ռափ. Պատկանյանը, Հար. Ալանդարյանը և այլ նշանավոր հայորդիներ: Ռոստովի մարզի (ընդ որում՝ Նոր Նախիջևանի) տարածքից հայտնաբերվել են բազմաթիվ վիճագրեր,<sup>468</sup> որոնք զետեղված են «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի VIII պրակում:

Առանձնակի արժեք են ներկայացնում Սանկտ-Պետերբուրգի, Մոսկվայի, Կազանի, Դաղստանի և այլ տարածքներից հայտնաբերված վիճագրերն ու քանգարանային ցուցանուշների մակագրությունները:<sup>469</sup>

Խոսելով մերձավոր Սփյուռքի, հատկապես Ռուսաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի հայակերտ դեկորատիվ արվեստի նմուշների մասին, պետք է ընդգծել, որ գեղարվեստական կատարելության առումով հատկապես առանձնանում են ղրիմյան խաչքարերն ու նրանց արձանագրությունները, որոնց զգալի մասը փորագրված է էլնդավոր (ուռուցիկ) տառերով և ծաղկագրերով: Այստեղ նկատելի է Աճիի քանդակագործական դպրոցի անտարակուսելի շարունակությունը և դրոշմը: Այդ են ապացուցում Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցու պատերին ներքուստ և արտաքուստ ազուցված մարմարակերտ խաչքարերն ու նրանց գողտրիկ արձանագրությունները, որոնք եզերված են բուսական և երկրաչափական անկրկնելի զարդաքանդակների ճոխությամբ:

Ղրիմահայ կոթողներն ու վիճագրերը թվագրվում են հիմնականում XIV-XX-րդ դարերով: Նրանցում արտացոլված են հասարակական կյանքում տեղի ունեցած առավել նշանակալից իրադարձությունները, հանվանե նշված են տաղանդավոր մանրանկարիչներ, ճարտարապետներ, քարգործ վարպետներ, հոգևորականներ, վաճառականներ, մեծահարուստ բարեգործներ, արհեստավորներ, միով բանիվ՝ ամենատարբեր դասերի ու խավերի ներկայացուցիչներ: Ցավով ու ափսոսանքով ես կարդում ավազակ մարդասպանների ձեռքով սպանված կամ ծովամույն եղած հայորդիների հիշատակագրությունները: Արձանագրությունների զգալի մասը փորագրված է բանաստեղծական կաղապարով. կան քաղվածքներ Ս. Գրքից, հատկապես Ավետարանից:

Ուկրաինայի արևմտյան մարզերի հայկական արձանագրությունները փորագրված են հիմնականում հայերեն (մինչև XVI դարը), ապա մաս լեհերեն, լատիներեն և հայատառ ղփչաղերեն լեզուներով: Լվովի հայկական եկեղեցու ներսի պատերին ազուցված են Ղրիմից բերված մարմարակերտ խաչքարեր,<sup>470</sup> մի շարք տապանաքարերի վրա փորագրված են նշանավոր գերդաստանների տոհմանշանները, որոնցից մի քանիսը հիշեցնում են Հին Հայաստանի հիերոգլիֆ նշանները:










Նկար 1  
Երուսաղեմի խճանկար արձանագրությունը



Նկար 2  
Գրիգոր Մամիկոնյանի շինարարական արձանագրությունը (VII դ.)



Նկար 3  
Պղամատ ծոծի ղգմախամառա շինարարական արձանագրությունը  
Վահանավանքի 1046 թ. շինարարական արձանագրությունը



ծոծի ղգմախամառա ղղա Նկար 4 ա ղմքաղոյաթա ղմիղոյոյ  
Գրիգոր Ա Սյունյաց թագավորի (1051-1072) տապանաբարը  
Վահանավանքի մեծ տաճարում





Նկար 5

Սոփի թագուհու տապանաքարը Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում (1081 թ.)



Նկար 7

Շահանդուխտ Բ թագուհու շինարարական արձանագրությունը (1086 թ.)



Նկար 6

Կյուրիկե թագավորագնի տապանաքարը Վահանավանքի մեծ տաճարի գավթում



Նկար 8

Մակարավանքի գավթի 1253 թ. արձանագրությունը






Նկար 9

Սյունիքի Հայրապետ Էպիսկոպոսի 1269 թ. խաչքարը Տաթևի վանքում



Նկար 10

Իշխան Տարսայիճ Օրբելյանի նվիրատվական արձանագրությունը (XIII դ.)



Նկար 10ա

Խծկոնքի 1214 թ. արձանագրությունը

Գրությունը 1294 թ. վերանորոգված է և 1294 թ. վերանորոգված է (ստորագրությունը)





Նկար 11

Վահրամի որդի Գրիգորի 1282 թ. արձանագրությունը (Վայոց ձոր)



Նկար 12

Տեր-Յովհաննեսի 1294 թ. արձանագրությունը Վարարակնի ջրանցքը վերականգնելու մասին (Գորիս)



Նկար 13

Պատմագիր, մետրոպոլիտ Ստ. Օրբելյանի 1295 թ. շինարարական արձանագրությունը Տաթևի ս. Գրիգոր եկեղեցու բարավորին



(Գմանագրոյմ հարանմ) զգրանագրոյմ զմարտիկոյմ զմարտիկոյմ զմարտիկոյմ





Նկար 13 ա  
Իշխան Էլիկուն Օրբելյանի տապանաքարը (Ամաղուի Նորավանք)



Նկար 14  
Իշխանուհի Թաճերի 1307 թ. նվիրատվական արձանագրությունը  
Թանատի վանքում (Վայոց ձոր)



Նկար 14 ա  
Բուրթել իշխանաց իշխանի ծաղկագիրը Ամաղուի Նորավանքում





Նկար 15

Գոնցա իշխանուհու 1345 թ. արձանագրությունը Զերիերում  
(Վայոց ձոր)



Նկար 16

1362 թ. շինարարական-նվիրատվական արձանագրությունը Ղրիմում:



Նկար 17

1408 թ. շինարարական արձանագրությունը Թեոդոսիայում(Ղրիմ)



Նկար 18

Թեոդոսիայի  
Հրեշտակապետաց  
եկեղեցու 1425 թ.  
շինարարական  
արձանագրությունը





Նկար 19

Սարգիս կաթողիկոսի 1546 թ. արձանագրությունը Գանձասարի վանքում (ԼՂՀ)



Նկար 20

Ղրիմից Մոսկվա տարված արծաթյա խաչի 1682 թ. արձանագրությունը (Մոսկվայի Կրեմլի Ձինապալատ)



Նկար 21

Ղրիմի ս. Ուրբաթ եկեղեցու 1702 թ. վերանորոգման արձանագրությունը



Նկար 22 ա-դ

Աստեղնագործված խնկանոցի տապանակի 1725 թ. արձանագրությունը (Մոսկվայի Կրեմլի Ձինապալատ)





բ

վանքայն (1837)  
ճանրողոմարմի . գ 1507 յողմոմն գազդան . ք ղնդր  
ցմալուգողոթամածոյ



գ

(տալաքամիզն ղյնեղո՞ ղյաթյնոն) ցմալուգողոթամածոյ



դ

զնալուգողոթամածոյ  
ցմալուգողոթամածոյ



Սկար 23

Ղրիմի ս. Խաչ վանքի 1751 թ. նորոգման արձանագրությունը





Նկար 24  
Արծաթյա խաչ  
Ղզլարից՝ 1756 թ.  
արձանագրությանը  
(Մոսկվայի Կրեմլի  
Զինապալատ)



Նկար 25  
Գրիգոր Խաղարյանի 1787 թ. տապանագիրը (հատված)




Նկար 26  
Գեներալ Յովակիմ Խասատոյանի արձանագրված հուշակոթողը  
Ս. Պետերբուրգում




Նկար 27  
Թեոդոսիայի ս. Սարգիս եկեղեցու բարավորի արձանագրությունը  
85 դար  
ցյախ ալմսո ծաղկյմ միմծախեչ .ս ղիյոյմզգրբա՛ր յմղղա՛Բ յաղմծ՛Բ  
(մաղաբմազ .տճա մալգոնոտա՛ր .ալմսո՛Մ .գ Է18Բ)





Նկար 28

Գեներալ Գաբրիել Ղազիբեկովի՝ Ս. Էջմիածնին նվիրած ոսկյա խաչը  
(1814 թ. Մոսկվա, Պատմության պետ. թանգարան)



ԳՐԶԱԳՐԵՐ





ԲԱՐԵԽԱԻՍ ՈՒՆԵԼՈՎ/ԱՌ ՄԾ  
 ԶՍՈՒՐԲ Է/ՍԱՅԻ ԵՒ ԶԵՐԱՆԵԼԻ/ՀԱՐՍՍ  
 ԵՍՎԱՂԱՆ Ա/ՐԱՐԻ ՎԱՍՆ ԹՈՂՈՒ/ԹԵԱՆ  
 ՄԵՂԱՑ ԶՅԻ/ՇԱՏԱԿԱՐԱՆՍ ԶԱՅՍ:

N 1 արձանագրության գրչագիրը

:.ԹՎ:Ն:ՂԵ: (1045)

ՈՂՈՐՄԵԱ ՔՍ ՄԾ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ/  
 ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՒԻՐՆ ԳՐԻԳՈՐՈ ՇԻՆՈՂԻ ՍՐԲՈ ԵԿ/  
 ԵՂԵՑՈՅՍ ՍՐԱՀԻՍ ԵՒ ԺԱՄԱՏԱՆՆ ՈՐՔ ՄՏ/  
 ԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԶՍՈՑԱ ՅԱՂԱԻԹՍ ՅԻ/  
 ՇԵՑԷՔ

N 3 արձանագրության գրչագիրը

ԶԿԻՒՐԻԿԷ ՈՐԳ  
 Ի ՍԵՆԻՔԱՐԵՄ Թ  
 ԱԳԱՒՈՐԻ ԿԻՍԱԻՐ  
 Է ՀԱՆԳՈՒՑԵ ԱԼ  
 ՅԱՂԱԻԹՍ:  
 ՅԻՇԵՑԷՔ:  
 :Թ: ՇԽԸ: (1099)

N 6 արձանագրության գրչագիրը

ՈՂՁԻՍ

ԵՍՁԱԵՄԼԵՃՅՈՒՍՈՎ

ՄԱՅԲԱՆԵՑ ԱՅ ԱՃԱՆԻՍԵԻԵՏՈՒ  
 ՅՈՒՍՈՎՆ ԱՅԵՍՍԵՐՈՒԲԵԻ ԶՈՄԱ ՔԱՀԱՆԱ  
 ՅՔԵԻԵՆԲԱՔՉՄԵՐ ՀՈԳՈՅԱԴԻԻՆՍՈՒԲԵԻ  
 ՍԲԱՃԱԾԻՆՍ ՀԱՅՐՍՅՈՎԱՆՆԵՍԵԻ ՄԱԲԱՆԲՍԵ  
 ՏՈՒՆՄԵՉ Գ: ԴԱՏԱԱԳԻՏԼԵՆԻ ԱՆՏՈՆԻՈՐԻԱ  
 ՓԱՆԵԼԵՐՄԵՊԱՅՆՊԱՐՄԱԿԱԵԵԴԱՏԻ ՅԱՅ : ԶՎ: ՉԲ:

N 8 արձանագրության գրչագիրը




N 11 արձանագրության գրչագիրը











N 16 արձանագրության գրչագիրը



N 18 արձանագրության գրչագիրը



N 17 արձանագրության գրչագիրը



N 19 արձանագրության գրչագիրը










N 26 արձանագրության գրչագիրը

ՅԱՅԱ ՏԱԳԱՆ ԱՄՓՈՓԵԱ ԿԱՆ  
ՈՍԿԵՐԳ ՅՈՎԱԿԻՄՅ ՈՐԴԻ ԲԱՐՍ ՂԻ  
ԽԱՍՏՏԵԱՄ ՈՐԷՐ ԱՍՏԻՉԱՆ ԱՒ  
ՂԵՆԵՐՍԻ ՄԻԲՕՐ Ե ԿԵԱԵՐ ՆՇԱ  
ՆԱՑԻ ՍՐԲՈՅ ՆԱՏՍԱԿԻ Ե ՅԱՂԻՈ  
ՂԵՆ ՊԵՈՐԳԱՅ՝ ՉՈՐՐՈՐԴԻ ԱՍՏԻ  
ՃԱՆԻ Ե ՍԲՅ ԱՊԱԲԵԱՊԱՏԻ ԻՇ  
ԽԱՆԿՆ ՎԵՍԻՄԻՐԻ ՉՈՐՐՈՐԴ ԱՍ  
ՏԻՃԱՆԻ: ԾՆԵԱԵՐ ՅԱՏ ԾՆ 1756  
Ի ԴԵՎՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ: ՎԻՃԱՆԵՑԱՒ  
ՅԱՏ ԾՆ 1809-Ի ՄԱՅԻՍԻ 10-ԻՆ:-



N 28 արձանագրության գրչագիրը

ԱՐ  
ԻՊՔԱ  
ՉԱՏՅՈՒ ԻՆՍ  
ՓԵՐՏԻՆՏ ԹԻՎԱԿ  
ՍՈՒՅ ԽՈՒՂ ԱՆԴՆԱԲԵՍ ՊԵՏՐՍ  
ԲՅՈՒՂ ԵՍԻՆ ԱՄԻՐ ԳԵՐՄԵՆԵՆ ԵՍՈՒ  
ՉԻՉԱՍԱՆ ՄԵՆ ԱՊՐՈՅ ԵՅՄԻ  
ԱՍԿԻ ԿԱՐՐԻ  
ՊԵՏՐՈՆ ՏՆԵԿԻ  
ԱՅՈՒՆ ԿՈՒՐ  
ՂԵՆ ԳՅՈՒ  
1814-Ի  
Ի

ԻՆԾՈՆՅԱՅՈՅ ԻՄԵՆՈՆՅՈՈՆՍՏՅԵՆ Ե  
ԴՅԱՄԱՆ ԱԿՍԱԾ ԱՊԱՄԻԲԵՆԴՈՂԵՐՈՐԵՍԱՐԴ  
Ս Ի ՅԱՅՈՅԱՆՈՒՆԻՆՍԵԻՄԵԾՎԱՆՈՂԱԿԵ  
ՈՐՈՒ ԻՋԵՆՆԱԿԱՆ ՅԱՅՈՅԵՄԱՅՆՇԱՆՇԱՆ Ի  
ԵՍԱՊԱՐԱՆԻ ԵՅՅԱՅՈՅՈՂԱԿՈՒՆԻ ԿՈՒՄԱՐԱՄԱՍՆ  
ՍԻՆԵԱՅՈՂԱԿՈՒՆ ԶՈՂՈՐԵՐՈՒԹՅԱՆՅՆ ԱՊԱՐ  
ԻՆՅԱԵՆԻՄԱՄԱԿՈՒՄԿՈՒՄԿԱՆՇԱՆՇԱՆՇԱՆ  
ՇԻՆԵՅԻՉՈՒԲԱՆՈՂԱԿԵՍՉՈՐԵՐԻՆԻՆԱԿԵԱԼ  
ՄԵԾՈՒՄԿԱՆ ԱԵԽԱՅԵՑԱՄԿՈՒՄՅՈՒՆՅՈՒՆ  
ԵՄԵՆԱՎԱՆՈՇՆՈՒՆԻՆՅՈՒՆԻՆՅՈՒՆԵՄԱՉԱՄՇԻՆ  
ՆԵ ԵՄԱԿՈՐՉՈՒՐ ԴԱՐԵՅԻԵՉՈՒՐԻՎԵՐԱՊԱՐԿԱՆ  
ԱՄԱՔՆՈՒԲԻՆՉԵՄԵՉՈՒՐՄԻՅԻՄԵԿՈՐԿՈՅ  
ՍՄԱՆՄԱՐԵԱՍԵԽԱ ՇՈՂՈՐԵՄԱՅԵՄԵՄԵՍԻ  
ՍԱՐԿԻՍՄԱՄԱԿՈՐԱՅԵՆԵՂԵՅՈՅՍՅԵՆԵԼԻՅԲԱ  
ԲԵՊԱՇԽՈՂԱԿՈՒ ՅՈՅՍՉԱՄԿԱՄԱՐԻՆ ՅԻՍ  
ՆԵԱՍՄԱՐՈՒՔԱՆՍՄԻՄԱՍԱՐԵԱՄԻՎԱՆ  
ՄԻՆՉԵԻԿԱՆՈՒՍՆԻՔԻ ԵՊԵՐՉՈՒՐՉԱՄԱԿ  
ԵԱԿԱՓՈՅՈՒՆՆԱՐԱՄՆԱՐԱՆԵԱԼԻՅՈՒՅԵ  
ԻԱԵՅՈՒՆԵՎԵՐԱՄԱՅՄԱՄԱՆ: ԻՌԵՎԵՐԱՄԻՄ  
ՄՆԱՄԱՆՈՇՆԵՄԻ: ՉԵՅԱՄԻՅԱՄԱՆՈՒՔԻ  
ՅԱՅՈՅԻՆԵՅԱՒՅԻՇՆԱՄԱՄԱՆՈՒՔԵՆՍԵՆ:

N 29 Կատրանիդե թագուհու շինարարական արձանագրության գրչագիրը







ՈՐ  
Օ

ԱՄԱՐԱՅԵՍՐԳՐԻԳՈ՝  
ԲԻԷԴԻՍԿՈՂՈՍՍԱՅՐԱՔԱՎԱ  
ՔԻՍԱՆՈՒՄԱՌԱՅՈՂՈՒՄԵՔՆԱԿԱՆ  
ՀԱՅՐԵՆԱՊՈՂՈՅՍՄԵՐՈՂՈՒ  
ՕՏԱՐԿՔԱՆԱՄՅՔԱՎԱՔԱՅԵԱՅ  
ՉՈՒՄՆԱՌԱՄԻՆՍԱՆՔԻՓՈՒՄ  
ՐԵՆՍՈՒՄՅԵՆՄԵՉՉԱՄԳՐՈՂՉԱ  
ՔԱՊԵՂԱՄԱՐԳՅԱՄԵՆԱՅՆԿԵԵ  
ՅԻՅՈՒՆՈՒՆԿԱՉԱՉԱՐԲԱՐԲԱՐԻՄՈՒ  
ԱՐՓԻՆԿԱՄԱԵԼԵՂԱՐԲԱՐԲԱՐԻՄՈՒ  
ՉՄԵՅԵԱՅԻՆԿԵՆԵՂՈՒՄԻՆԵ  
ԽԱՆՈՒՄԻՅԻՐԻՅՈՒՆԿԱՐԿԱՆՈՒՄԻՆԵ  
ԻՆՍՏԻՏՈՒՆԵԵՆՈՒՄԻՆԵՂՈՒՄԻՆԵ

N 35. Գրիգոր արքեպիսկոպոսի 1227 թ. արձանագրության գրչագիրը (ԱՄԻ)

ԿԱՄԱՐԱՅԵՍՐԳՐԻԳՈ՝  
ԲԻԷԴԻՍԿՈՂՈՍՍԱՅՐԱՔԱՎԱ  
ՔԻՍԱՆՈՒՄԱՌԱՅՈՂՈՒՄԵՔՆԱԿԱՆ  
ՀԱՅՐԵՆԱՊՈՂՈՅՍՄԵՐՈՂՈՒ  
ՕՏԱՐԿՔԱՆԱՄՅՔԱՎԱՔԱՅԵԱՅ  
ՉՈՒՄՆԱՌԱՄԻՆՍԱՆՔԻՓՈՒՄ  
ՐԵՆՍՈՒՄՅԵՆՄԵՉՉԱՄԳՐՈՂՉԱ  
ՔԱՊԵՂԱՄԱՐԳՅԱՄԵՆԱՅՆԿԵԵ  
ՅԻՅՈՒՆՈՒՆԿԱՉԱՉԱՐԲԱՐԲԱՐԻՄՈՒ  
ԱՐՓԻՆԿԱՄԱԵԼԵՂԱՐԲԱՐԲԱՐԻՄՈՒ  
ՉՄԵՅԵԱՅԻՆԿԵՆԵՂՈՒՄԻՆԵ  
ԽԱՆՈՒՄԻՅԻՐԻՅՈՒՆԿԱՐԿԱՆՈՒՄԻՆԵ  
ԻՆՍՏԻՏՈՒՆԵԵՆՈՒՄԻՆԵՂՈՒՄԻՆԵ

N 36. Վախտանգ իշխանի 1248 թ. արձանագրության գրչագիրը (ԼԴԳ)

N 37. Մարտի Եվրոպական արձանագրության գրչագիրը (ԱՄԻ)

ՅԱՆԽԱՐՏԱԿԱԼ  
ՏԵՐՈՒԹԵԱՊԱՆԱՆԻՆ  
ԵԻՏԱՅՐԱՊԵՏՈՒԹԵՏՐՍՏԵՓԱՆՆ  
ՈՍԻԵԻՊԱՆՈՒԹԵՄԱԴԻՍԵՍՐԱՆ  
ԱԴԻՍԵԻՊՈՒՐՉԱԴԻՍԻՆՅԵՍՏՐՅՈՒՆ  
ՆՆԵՍԵԻՆԵՅԻԹՍՅԻԹԱՅԻՆԱՎԻՆ  
ԵԻԵՊԵՏԵՏՆԱՅԻՆՍՈՒՆՅԵՆՅԵՆ

(40) Մարտի Եվրոպական արձանագրության գրչագիրը (ԱՄԻ)  
N 37. Մարտի Եվրոպական արձանագրության գրչագիրը

ԿԻՆԵՍԱՐԿԱՆՈՒՆԵՄԱՆՈՒՄԻՆԵ  
ՆՈՒՄՈՒՆԵՍՈՒՄԻՆԵՍՈՒՄԻՆԵ  
ԱՆՈՒՄԻՆԵՍՈՒՄԻՆԵՍՈՒՄԻՆԵ  
ՆՈՒՄՈՒՆԵՍՈՒՄԻՆԵՍՈՒՄԻՆԵ  
ԱՆՈՒՄԻՆԵՍՈՒՄԻՆԵՍՈՒՄԻՆԵ  
ՆՈՒՄՈՒՆԵՍՈՒՄԻՆԵՍՈՒՄԻՆԵ  
